Այդ գաղափարական ռևոլյուցիայի ընթացքում ձևավորված ռուսական կլասիկ մատերիալիստական փիլիսոփայության ներկայացուցիչները, դուրս գալով մետաֆիզիկական մատերիալիզմի շրջանակներից և զուգակցելով մատերիալիզմը դիալեկտիկայի հետ, բռնել են դիալեկտիկական մատերիալիզմի ուղին, և կարողացել են մոտենալ աշխարհի գիտական բացատրությանը։

Մատերիալիստական աշխարհայացքի համար նրանց մղած պայքարի բաղկացուցիչ մասերից մեկն է դարձել պայքարը հանուն դարվինիզմի։

Զարգացման մատերիալիստական տեսության խնդիրը համարելով օրգանական աշխարհի փոփոխականության և զարգացման օբյեկտիվ օրենքների և օրինաչափությունների բացահայտումը, ռուս լուսավորիչները, շարունակելով Լոմոնոսովից և Ռադիշչևից եկող մատերիալիստական տրադիցիաները, հսկայական դեր են խաղացել Ռուսաստանում Դարվինի ուսմունքի պրոպագանդայի և զարգացման գործում։

Ընդունելով Դարվինի ուսմունքի մատերիալիստական կորիզը և քննադատական վերաբերմունք ցուցաբերելով նրանում տեղ գտած թույլ օղակներին, մեծ լուսավորիչները կարողացել են թափանցել օրգանական աշխարհի օրինաչափությունների մեջ և ապացուցել օբյեկտիվ իրականությունը։ Այդ առաջավոր գաղափարների ազդեցությունը հսկայական է եղել հետդարվինյան շրջանի բիոլոգ-էվոլյուցիոնիստների վրա։ Նրանց աշխարհայացքի ձևավորման գործում վճռական դեր է խաղացել այդ ժամանակաշրջանում Ռուսաստանում տեղի ունեցած ազատագրական շարժումը, որին, ռևոլյուցիոն ինտելիգենցիայի շարքերում, մոտ են կանգնած եղել նաև ռուս մեծ բնագետները։

Հետդարվինյան շրջանում ռուսական գիտությունն իր մեջ առնելով Դարվինի ուսմունքի բոլոր պրոգրեսիվ կողմերը, միաժամա-

նակ հարստացրել է դա նոր խոշորագույն հայտնագործություններով: Ռուսական գիտությանը հատուկ է եղել ինքնուրույնություն և ինքնատիպություն: Նա միայն կրկնություններով չի զբաղվել, այլ գիտության մեջ ասել է իր նոր, վճռական խոսքը:

Հետդարվինյան շրջանի ռուս բիոլոգ մատերիալիստների փայլուն պլեադայի ներկայացուցիչները՝ հանձինս Ա. Ն. Բեկետովի, եղբայրներ՝ Ա. Օ. և Վ. Օ. Կովալևսկիների, Ի. Մ. Սեչենովի, Ի. Պ. Պավլովի, Կ. Ա. Տիմիրյազևի և ուրիշների բիոլոգիական գիտության տարբեր բնագավառներում պայքարելով հանուն մատերիալիստական կոնցեպցիայի՝ նախապատրաստել են օրգանական աշխարհի զարգացման իսկական գիտական տեսության գաղափարական հիմքերը:

Նրանք գիտական բիոլոգիայի հետագա զարգացման միակ ճիշտ ուղին տեսնելով դարվինիզմի մեջ, իսկական գիտնականին հատուկ կրքոտությամբ պաշտպանել ու զարգացրել են դարվինիզմը և դրա հիման վրա ստեղծել բիոլոգիական գիտության մի ամբողջ շարք նոր ճյուղեր:

Հսկայական են հետդարվինյան շրջանի գիտնականների կատարած ծառայությունները էվոլյուցիոն պրոցեսի հիմնական օրենքներից մեկի՝ ձեռքբերովի հատկանիշների ժառանգման ճանաչողության և նրա գիտական բացատրության գործում: Դրանում համոզվելու համար, բավական է վերլուծել անցյալ դարի 2-րդ կեսի հայտնի էվոլյուցիոնիստներից մի քանիսի գիտական հայացքները, հիմնականում կանգ առնելով նրանց այն կողմերի վրա, որոնք արտահայտում են մեզ հետաքրքրող՝ ձեռքբերովի հատկանիշների ժառանգման հարցին այդ գիտնականների ցույց տված վերաբերմունքը:

19-րդ դարի 2-րդ կեսում դարվինիզմի առաջին պաշտպաններից մեկը, որի անվան հետ անխզելիորեն կապված է այդ շրջանի բնագիտության զարգացումը, ռուս բոտանիկ Ա. Ն. Բեկետովն է: Իր էվոլյուցիոն հայացքներով նա հանդես է եկել դեռ մինչև Դարվինի տեսությունը. այդ մասին վկայում է նրա «Гармония в природе» (1853) հոդվածը, որում նրա էվոլյուցիոն հայացքները իրենց լրիվ արտահայտությունն են գտել: Այստեղ նա պարզաբանել է բնության մեջ դիտվող կյանքի պայմաններին օրգանիզմների զարմանալիորեն հարմարված լինելու բնական պատճառները, որոնք, նրա կարծիքով, հանդես են գալիս անհրաժեշտության օրենքի համաձայն:

Օրգանիզմների էվոլյուցիայի հիմնական ֆակտորները Բեկետովը համարել է այն միջավայրի ազդեցությունը, որում ապրում են նրանք։

Համապատասխանության հարցը բացատրելիս Բեկետովը տարբերում է երկու երևույթ՝

1. Էակների փոփոխությունը նրանց շրջապատող պայմանների փոփոխությանը համապատասխան, որում օրգանիզմների վերափոխումը գնում է կառուցվածքային նոր հատկությունների ձեռք բերման և գոյության նոր պայմաններին հարմարվելու ուղղությամբ։

2. Օրգանիզմների միանգամայն անհետացում՝ իրենց կենսակերպին չհամապատասխանող անսովոր պայմաններին չհարմարվելու հետևանքով։

Պաշտպանելով Դարվինի բնական ընտրության ուսմունքի մատերիալիստական հիմքը և նրան մեծ տեղ վերագրելով էվոլյուցիայի պրոցեսում, Բեկետովը ընդգծել է նաև այդ պրոցեսում արտաքին պայմանների կարևոր դերը, ձգտելով բացատրել էվոլյուցիոն պրոցեսը այդ երկու ֆակտորների միատեղ գործունեությամբ։ Բեկետովը առաջնակարգ տեղը վերագրել է արտաքին պայմանների գործունեությանը։ Նրա կարծիքով՝ էվոլյուցիայի գլխավոր ֆակտորը համարվում է օրգանական ձևերի արտաքին պայմաններին հարմարվելու ուղղությամբ փոփոխվելու և այդ փոփոխությունները ժառանգաբար սերունդներին հաղորդելու ընդունակությունը։ Այստեղից էլ Բեկետովը եզրակացրել է, որ ընտրության օգնությամբ տեսակների առաջացման պրոցեսը կարելի է համարել օրգանական ձևերի արտաքին փոփոխված պայմանների հարմարվելու պրոցես։

Ինչպես տեսնում ենք, Բեկետովի էվոլյուցիոն հայացքները խոսում են այն մասին, որ նա օրգանիզմների ժառանգականության և փոփոխականության էության բացատրությունը մոտեցել է ճիշտ դիրքերից։

Այս բոլորը մեզ թույլ է տալիս համարձակորեն ասելու, որ Բեկետովը կանգնած լինելով մատերիալիստական դիրքերում և օրգանական աշխարհի էվոլյուցիային վերաբերող հարցերի բացատրությունը մոտենալով այդ դիրքերից, կարողացել է ճանաչել նրա հիմնական օրենքը՝ ձեռքբերովի հատկանիշների ժառանգումը և նրան գիտական բացատրություն տալ։

19-րդ դարի 2-րդ կեսի գիտնականների շարքում ամենապատվավոր տեղերից մեկը պատկանում է այդ շրջանի հիանալի բնագետ-էմբրիոլոգ Ա. Օ. Կովալևսկուն, որի աշխատությունները հարստացրել են էվոլյուցիոն ուսմունքը նոր արժեքավոր էքսպերիմենտալ ապացույցներով։

Ա. Օ. Կովալևսկու աշխատություններում էվոլյուցիոն ուսմունքը ընդհուպ մոտեցել է օրգանական աշխարհի միասնական ծագման տեսության հաստատմանը։

Այդ աշխատությունները, որոնցում էմբրիոլոգիան վերածվեց էվոլյուցիոն գիտության, նոր ուժ և համոզվածություն են տվել էվոլյուցիոն տեսությանը։

Այդ աշխատություններով վերջնականապես խախտվեցին Ժ. Կյուվեի կողմից տարբեր տիպերի միջև առաջ քաշված պատնեշները և կենդանական աշխարհի միասնական ծագման գաղափարը վերջնականապես հաղթանակեց։

Ա. Օ. Կովալևսկու ուսումնասիրությունները նրա բոլոր աշխատություններում, որոնցից հիշատակության արժանի են՝ «Նշտարիկի զարգացման պատմությունը» և «Որդերի ու միջատների սաղմնաբանական ուսումնասիրությունները», տարվել են հիմնականում այնպիսի ձևերի վրա, որոնց տեղը կենդանական աշխարհի սիստեմում անհայտ է եղել։

Այդ տիպի օրգանիզմներին է վերաբերում նաև Լանցետնիկը, որը դարձել է նրա ուսումնասիրության հիմնական օբյեկտը։ Ա. Թ. Կովալևսկին հայտնաբերել է, որ լանցետնիկի մեջ, ինչպես նրա հասուն, այնպես էլ սաղմնային շրջաններում, խառնվում են ողնաշարավոր և անողնաշարավոր կենդանիների հատկությունները։ Այդ հայտնագործությունը նրան հանգեցրել է այն եզրակացության, որ լանցետնիկը գրավում է միջանկյալ դիրք երկու կատեգորիաների միջև և կենդանական աշխարհի երկու մեծ բաժինների կապող օղակն է։ Այսպիսով, Կովալևսկու ուսումնասիրությունների արդյունքները հանդիսանում են ամբողջ կենդանական աշխարհի սաղմնային զարգացման միասնականության գաղափարի, բոլոր կենդանական ձևերի մի ընդհանուր արմատից ծագելու դարվինյան տեսության հիանալի ապացույցը. միևնույն ժամանակ դրանք հիմք են ծառայել բիոգենետիկական օրենքին։

Ա. Կովալևսկու ստացած փաստերը տվել են ողնաշարավոր կենդանիների ծագման բացատրության բանալին։ Դրանք ապացուցում են, որ ողնաշարավոր կենդանիները հանդիսանում են

էվոլյուցիայի պրոցեսում, ցածր անողնաշարավոր ձևերի կյանքի պայմաններում փոփոխվելու և այդ փոփոխությունները սերունդներին հաղորդելու արդյունք։

Ա. Կովալևսկին, լինելով հետևողական էվոլյուցիոնիստ, կարողացել է ճիշտ ճանաչել օրգանական աշխարհի զարգացման հիմնական օրենքը՝ էվոլյուցիայի պրոցեսում օրգանիզմների կրած փոփոխությունների ժառանգումը և դրանց վճռական դերը բնության մեջ։ Այդ մասին են վկայում Ա. Կովալևսկու հայտնագործությունները, որոնք հանդիսացել են օրգանական աշխարհի էվոլյուցիայի նոր կարևոր ապացույցներ և հսկայական ազդեցություն են ունեցել բիոլոգիական գիտության հետագա զարգացման վրա։

Օրգանական ձևերի զարգացման պրոցեսում արտաքին միջավայրի վճռական դերի բացատրության հարցում մատերիալիստական դիրքերում էր կանգնած նաև մեծ ռուս պալեոնտոլոգ Վ. Օ. Կովալևսկին։ Նա նկարագրել է օրգանիզմների կառուցվածքի էվոլյուցիոն փոփոխությունները՝ դրանք կապելով համապատասխան օրգանների փոփոխությունների հետ։ Նա ուսումնասիրել է կենդանիների էվոլյուցիայում նման երևույթներ պայմանավորող ֆակտորները, որոնք, ինչպես երևում է նրա աշխատություններից, կապված են միջավայրի փոփոխության պրոցեսի հետ։ Էվոլյուցիայի այս կարևորագույն հարցերը շոշափվում են Վ. Կովալևսկու յուրաքանչյուր պալեոնտոլոգիական աշխատության համարյա բոլոր էջերում։

Ուշադրությամբ ուսումնասիրելով բրածո կենդանիների ոսկորները, ատամնային սիստեմը՝ Վ. Կովալևսկին ձգտում էր կենդանի բնության օրենքների և ֆակտորների ճանաչմանը։ Նա իր ուսումնասիրությունների ժամանակ ոչ միայն հենվում է դարվինիզմի դրույթների վրա, այլև պալեոնտոլոգիական մատերիալի վրա ստուգում Դարվինի տեսությունը, լրացնելով նրա բաց տեղերը։

Կովալևսկին հանդիսանալով բիոլոգիայի մի նոր ճյուղի՝ էվոլյուցիոն պալեոնտոլոգիայի հիմնադիրը, ստեղծել է նորանոր հնարավորություններ երկրի վրա կյանքի զարգացման պատմության վերականգնման համար։ . . . . .

Հենվելով Դարվինի էվոլյուցիոն ուսմունքի վրա, նա հակադրվել է իրեն նախորդող պալեոնտոլոգիական դպրոցին և իր առաջ խնդիր է դրել պալեոնտոլոգիական տվյալների հիման

վրա էվոլյուցիայի տեսությունը օգտագործել կաթնասունների պատմության մեջ:

Կովալևսկուն են պատկանում սմբակավորների կառուցվածքի և պատմական զարգացման չգերազանցված ուսումնասիրությունները: Նրա բոլոր աշխատություններում կարմիր թելի պես անցնում են օրգանիզմների զարգացման պրոցեսում կյանքի պայմանների վճռական դերի գաղափարը: Զբաղվելով ձիու զարգացման պատմության ուսումնասիրությամբ, Կովալևսկին հայտնաբերել և ապացուցել է, որ սմբակավորների կառուցվածքում արմատական փոփոխությունները պայմանավորված են 3-րդական դարաշրջանում բուսական աշխարհում տեղի ունեցած փոփոխություններով: Հիմնականում այդ փոփոխությունների պատճառները նա տեսել է սննդի մասնագիտացման, կոշտ խոտային կերին հարմարվելու մեջ:

Նա ցույց է տվել, որ 3-րդական դարաշրջանի սմբակավորների վազքի արագությունը, որը երաշխիք է հանդիսացել նրանց պաշտպանմանը, հանգեցրել է նրանց մատների ռեդուկցիային, վերջինս աստիճանաբար, սերնդեսերունդ ուժեղանալով և ամրանալով, բերել-հասցրել է ժամանակակից սմբակավորների առաջացմանը:

Վ. Կովալևսկին հիմնային բացատրություն է տվել սմբակավորների ատամնային սիստեմում և դրա հետ կապված գանգի կառուցվածքում տեղի ունեցած փոփոխություններին, որոնք նա կապել է սննդի պայմանների, նրանց բարդացման հետ: Այսպիսով, կյանքի պայմաններում առաջացած փոփոխությունները, ըստ Կովալևսկու, նպաստել են այն խմբերի զարգացմանը, որոնք կարողացել են հարմարվել այդ պայմաններին:

Բնության մեջ հարմարվողականության պրոցեսի վերաբերյալ Վ. Կովալևսկու տված բացատրությունը դարվինյան նպատակահարմարության պրոբլեմի մշակումը բարձրացրել է մի նոր, ավելի բարձր աստիճանի: Նա ցույց է տվել, որ այդ պրոցեսն ընթանում է երկու ճանապարհով՝ ինադապտիվ ռեդուկցիայի, այսինքն՝ համեմատաբար ոչ-խոր, գլխավորապես քանակական ֆիլոգենետիկական փոփոխություններով, որի դեպքում համարյա չեն խախտվում կամ, համենայն դեպս, երկար են պահպանվում ավելի պրիմիտիվ նախնիներից ժառանգած կմախքային էլեմենտների միջև եղած հարաբերությունները: Իսկ ադապտիվ ռեդուկցիայի ճանապարհով ընթացող հարմարվողականության տակ Վ. Կովալևսկին հասկանում էր ավելի խոր արմատական փոփոխություններ, որոնք

խախտում են սեռերի միջև եղած տարբերությունները և տանում է միջոց տրամադրում նոր ու ավելի նպատակահար-մար կառուցվածքի առաջացմանը։

Այսպիսով, Կովալևսկու աշխատությունների հիմնական միտ-քը համարվում է այն, որ ձևի փոփոխությունը միշտ ադեկվատ է ֆունկցիայի փոփոխությանը, սակայն դա միշտ չէ, որ նպատա-կահարմար է լինում։ Կովալևսկու ադապտիվ և ինադապտիվ հար-մարվողականության մասին մշակած ուսմունքը իր մեջ առնում է երեք իրար հետ կապված դրույթներ՝ 1. ձևը փոխվում է ֆունկ-ցիայի հետ կապված նրան ադեկվատ. 2. անհատի կենսագործու-նեության պրոցեսում տեղի ունեցած փոփոխությունները ժառանգ-վում են. 3. ժառանգված փոփոխությունները կարող են լինել նպատակահարմար և ոչ-նպատակահարմար։ Հարմարվողականու-թյան պրոցեսի մասին Կովալևսկու տված նման բացատրությունը համարվում է էվոլյուցիոն տեսության խոշորագույն նվաճումներից մեկը։ Դա մեծ հեռանկարներ է խոստանում ոչ միայն սմբակա-վորների, այլև կաթնասունների այլ խմբերի, նույնիսկ այդ դասից դուրս գտնվող օրգանական ձևերի ֆիլոգենեզի հարցերը պարզա-բանելու գործում։

Օրգանական աշխարհի զարգացման հիմնական օրինաչափու-թյունները, որոնց թվում և ձեռք բերովի հատկանիշների ժառան-գումը լրիվ ընդունվել և իրենց հետագա զարգացումն են գտել ռուսական ֆիզիոլոգիայի հիմնադիրներ՝ Ի. Մ. Սեչենովի և Ի. Պ. Պավլովի աշխատություններում։

Մինչև այդ երկու խոշոր գիտնականների հանդես գալը, մար-դու մարմինը և գիտակցությունը հակադրվել են միմյանց, նրանց միջև կանգնեցրել են անանցանելի անդունդ։ Մեծ ռուս բնագետ-ները առաջինն էին որ անցան այդ անդունդը։

Զինված մատերիալիստական աշխարհայացքով, նրանք թա-փանցեցին մարդու հոգեկան գործունեության ամենախորհրդավոր անկյունները։ Նրանք ցույց տվեցին գիտական մեթոդների հաղ-թանակը և այդ բնագավառում։ Այստեղ նրանք գրավեցին մարդ-կային գիտելիքների ևս մեկ բնագավառ։ Այդ գիտնականների համար օրգանիզմի և միջավայրի միասնության նրա անհատական կյանքի պրոցեսում ձեռք բերած հատկությունների և հատկանիշների ժա-ռանգման հարցերը այնքան պարզ են եղել, որ նրանք այդ բնա-գավառում տեղի ունեցող վիճաբանությունները համարել են անմիտ։

Մեծ ռուս ֆիզիոլոգները մարդու հոգեկան գործունեության բոլոր բարդ ակտերի ձևավորման մեջ՝ առաջնակարգ տեղը վերագրել են միջավայրին։ Այս կապակցությամբ չի կարելի չընդգծել Սեչենովի տեսակետները։

Ելնելով օրգանիզմի և միջավայրի միասնությունից, Սեչենովը կյանքը իր զարգացման բոլոր էտապներում բնորոշում է որպես կենսապայմաններին հարմարվելու արդյունք. նա ընդգծում է անհատական և պատմական զարգացման միասնությունը։ Իդեալիզմի դեմ դաժան պայքարում ավելի քան 90 տարի առաջ Սեչենովը առաջ է քաշել այն դրույթը, թե «օրգանիզմը առանց նրա գոյությունը պահպանող արտաքին միջավայրի՝ անհնարին է. դրա համար օրգանիզմի գիտական բնորոշման մեջ պետք է մտնի նաև նրա վրա ազդող միջավայրը։ Քանի որ առանց վերջինի՝ օրգանիզմի գոյությունը անհնարին է, ապա այն վեճերը, թե ի՞նչն է կյանքում կարևորը՝ միջավա՞յրը, թե՞ ինքը՝ մարմինը,—անմիտ են» (2, էջ 242)։

Կենդանական օրգանիզմների զարգացման մյուս կարևորագույն ֆակտորը Սեչենովը համարել է օրգանիզմների ընդունակությունը՝ հաղորդել սերունդներին կենսապայմաններում ձեռք բերած ձևափոխությունները։ Նրա կարծիքով՝ այդ փոփոխություններն ամրանում և իրականանում են այն դեպքում, երբ երկարատև են լինում նրանց նպաստող պայմանները։

Այս բոլորից միանգամայն ակնհայտ է օրգանական աշխարհի էվոլյուցիայի կենտրոնական հարցերին՝ օրգանիզմի և միջավայրի փոխհարաբերության և այդ պրոցեսում ձեռք բերված փոփոխությունների ժառանգման հարցերին Սեչենովի ցույց տված ճիշտ վերաբերմունքը։

Հետդարվինյան շրջանի ռուս խոշորագույն էվոլյուցիոնիստների շարքում պատվավոր տեղ է գրավում Ի. Պ. Պավլովը։ Նրա մշակած օրիգինալ էքսպերիմենտալ մեթոդները և նրա բազմաթիվ փորձերը բացառիկ մեծ ներդրում են գիտության մեջ։

Սեչենովի ուսմունքի այն հիմնական մատերիալիստական դրույթը, որի համաձայն օրգանիզմի գոյությունը առանց արտաքին միջավայրի՝ անհնարին է, իր էքսպերիմենտալ հաստատումն է գտել Պավլովի պայմանական ռեֆլեքսների ուսմունքում։ Դա հանդիսացել է ֆիզիոլոգիական գիտության ստեղծագործական հաջողությունների բարձունքը, որը նոր ուղիներ բացեց գլխուղեղի

և ամբողջ բարձրագույն ներվային գործունեության նուրբ ֆունկցիաների ուսումնասիրության բնագավառում։

Պավլովի պայմանական ռեֆլեքսների ուսմունքը ցույց է տալիս, որ օրգանիզմների բարձրագույն ներվային գործունեության բոլոր արտահայտությունները հանդիսանում են ոչ այլ ինչ, եթե ոչ օրգանիզմի և նրա կյանքի պայմանների մշտական փոխհարաբերությունների արդյունք։

Հիմնական օրգանը, որի օգնությամբ կենդանին ակտիվորեն հարմարվում է գոյության կոնկրետ պայմաններին, գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևն է, որտեղ համակենտրոնացված են իրենց մեջ օրգանիզմի կյանքի փորձի ամբողջ հարստությունը պարունակող պայմանական ռեֆլեքսները։ Դրանք կենդանու արտաքին գրգիռներին տրված պատասխան ռեակցիաներն են։

Գրգռման և արգելակման ներվային պրոցեսների բարդ միահյուսումը ստեղծում է վարքագծի և սովորությունների այն բազմազանությունը, որը բնորոշ է բարձրակարգ կենդանիներին և մարդուն։

Ի. Պ. Պավլովը ապացուցեց, որ օրգանիզմի ներքին միասնականության անհրաժեշտ պայմանը միջավայրի հետ օրգանիզմի ունեցած փոխհարաբերությունն է մշտական և ժամանակավոր կապերի միջոցով։

Օրգանիզմի և միջավայրի միասնության մասին Պավլովի ունեցած ճիշտ պատկերացումները նրան հնարավորություն են տվել ստեղծելու գեղձերի ֆունկցիաների հարմարվողականության վերաբերյալ ուսմունքը, որը ձեռք է բերել հսկայական պրակտիկ և տեսական նշանակություն։ Պավլովի կողմից և նրա ղեկավարությամբ կատարված մարսողական տրակտի գեղձերի աշխատանքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս կամ այն սնման ռեժիմի երկարատև գործունեությունը առաջ է բերում մարսողական գեղձերի բջիջների համապատասխան փոփոխություններ։ Ուսումնասիրությունները Պավլովին համոզել են, որ մարսողական գեղձերում տեղի ունեցած այդ հարմարվողական փոփոխությունները, որոնք ձեռք են բերվում կյանքի պայմանների ազդեցության ներքո, ժառանգաբար ամրանում են սերունդներում։

Պավլովի բոլոր ուսումնասիրությունների արդյունքները, նրա բոլոր տեսակետները, առանձնապես նրա պայմանական ռեֆլեքսների ուսմունքը, որոնք վերաբերում են անցյալ դարի 90-ական

ֆիլականներին, լրիվ խոսում են ձեռքբերովի հատկությունների և հատկանիշների ժառանգելիության օգտին, հաստատում են այդպիսի ժառանգման հնարավորությունը և անհրաժեշտությունը։ Դրանք ցույց են տալիս, որ ուղեղը ո՛չ միայն ինքն է փոխվում և զարգանում, այլև ծառայում է որպես կենդանի օրգանիզմի անընդհատ փոփոխության և զարգացման հատուկ օրգան։

Կենդանի օրգանիզմների անհատական կյանքի ընթացքում միջավայրի պայմանների հետ նոր կապեր, նրանց ազդեցությանը պատասխան ռեակցիաների նոր ձևեր ձեռք բերելու ընդունակությունը կենդանական աշխարհի զարգացման անհրաժեշտ նախապայմանն է, քանի որ օրգանիզմի կառուցվածքի վերափոխումը հետևում է նրա արտաքին ազդակներին ցույց տրված պատասխան գործունեության նոր ձևերի ձեռք բերմանը, փոփոխված ֆունկցիաներին։

Պավլովը հաստատել է, որ միջավայրի պայմանների հետ օրգանիզմի ունեցած ժամանակավոր կապերը մշտականի են վերածվում։

Ըստ Պավլովի՝ պայմանական ռեֆլեքսները, որոնց միջոցով օրգանիզմը հարմարվում է փոփոխված գոյապայմաններին, ժառանգաբար ամրանում են սերունդներում և դառնում անպայման ռեֆլեքսներ։

«Վերին աստիճանի հավանական է, որ նոր առաջացող ռեֆլեքսները մի շարք սերունդներում կյանքի նույն պայմանների պահպանման ժամանակ անընդհատ անցնում են մշտականի։ Այսպիսով, դա կլինի օրգանական աշխարհի զարգացման մշտապես գործող մեխանիզմներից մեկը» (1, էջ 245)։

Պավլովի այս խոսքերը հիմք են տալիս ենթադրելու, որ կենդանական աշխարհի պրոգրեսիվ զարգացման պրոցեսը անխզելիորեն կապված է միջավայրի պայմաններում օրգանիզմի ժամանակավոր կապերի ձեռք բերման հետ, քանի որ նոր ֆունկցիաների հանդես գալը պայմանավորված է կյանքի պայմանների փոփոխությամբ։ Այս սկզբունքները, որոնք տարածվում են բարձրակարգ կենդանիների վրա, հանգեցնում են ճիշտ նույն արդյունքներին, ինչ որ միչուրինյան բիոլոգիայի հիմնական դրույթները։ Պավլովի առաջ քաշած այդ մատերիալիստական դրույթները մահացու հարված են ֆորմալ գենետիկային։

Հայտնաբերելով մարդկային յուրաքանչյուր գործունեության հիմնական պատճառները ո՛չ թե իր՝ մարդու մեջ, այլ նրա կյան-

քի և գործունեության պայմաններում, և օրգանիզմի բնության իր դիալեկտիկական հասկացողությունը ուղղելով իդեալիզմի ամեն տեսակի արտահայտությունների դեմ. Պավլովը դրանով իսկ լայնացրեց մարդու գիտակից գործունեության հնարավորությունները, ուժեղացրեց մարդու իշխանությունը ինչպես իր ներքին աշխարհի, այնպես էլ իրեն շրջապատող մարդկանց վրա։

Էվոլյուցիոն ուսմունքի փայլուն տեսաբաններից մեկը, որը չափազանց մեծ ծառայություններ է մատուցել օրգանական աշխարհի օրինաչափությունների և պատճառների տեսության մշակման գործում, եղել է ռուս մեծ բնագետ Կ. Ա. Տիմիրյազևը.

Բնագիտության ամենահիմնական խնդիրը այդ մեծ բնագետը համարում է անողոք ռեակցիայի բոլոր արտահայտությունների դեմ մղվող անխնա պայքարը։

Տիմիրյազևը հատկապես ուժեղ հարձակման է ենթարկել էվոլյուցիայի հիմնական հարցերում ֆորմալ գենետիկների ունեցած պատկերացումները։ Նա վեյսմանյան սխոլաստիկայից պաշտպանում էր այդ հարցերի մասին եղած գիտական տեսակետները, դրանք հարստացնելով նոր տվյալներով։

Շոշափելով էվոլյուցիայի կենտրոնական պրոբլեմը՝ ձեռքբերովի հատկանիշների ժառանգելիության հարցը, Տիմիրյազևը ցույց է տվել, որ կյանքի ընթացքում օրգանիզմների ձեռք բերած հատկանիշների ժառանգման հնարավորությունը ժխտողները հիմնականում հենվում են մեխանիկական վնասվածքների օգնությամբ կատարված փորձերի վրա։ Այս կապակցությամբ նա հատկապես ուժեղ քննադատության է ենթարկում Վեյսմանի ձեռք բերած հատկանիշների ժառանգելիությունը ժխտելու նպատակով, մկների վրա կատարած, ոչ-գիտական փորձերը։

Տիմիրյազևը հաստատել է, որ ժառանգվում են այն հատկությունները ու հատկանիշները, որոնք ազդում են ամբողջ օրգանիզմի՝ նրա կենսագործունեության, առանձնապես նրա վերարտադրության սիստեմի վրա։ Ընդունելով Լամարկի ուսմունքի մատերիալիստական կողմերը օրգանիզմների զարգացման պրոցեսում կենսապայմանների վճռական դերի մասին՝ Տիմիրյազևը ակտիվորեն պաշտպանել է նաև Դարվինի ուսմունքի մատերիալիստական կորիզը՝ բնության ստեղծագործական դերը։

Ըստ Տիմիրյազևի՝ որպեսզի կարողանանք բացատրել բոլոր այն օրգանների կամ ամբողջ օրգանիզմների առաջացումը, որոնք մեզ զարմացնում են իրենց շրջապատի նկատմամբ ունեցած հարմա-

քանի հարմարվածությամբ, անհրաժեշտ է գտնել այն պայմաննե-րը, որոնք նպաստում են դրանց առաջացմանը և ոչ թե դրանց պատճառները փնտրել ինչ-որ ուժի կամ օրգանիզմների՝ դեպի կատարելագործումը ունեցած մետաֆիզիկական ձգման մեջ։

Ելնելով օրգանիզմի և միջավայրի միասնությունից, որը իրականանում է նյութափոխանակության միջոցով, Տիմիրյազևը գտնում էր, որ օրգանիզմի բնույթի բացատրման և նրանում տեղի ունեցող պրոցեսների ղեկավարման բանալին կարող է տալ միայն ֆիզիոլոգիան։

Տիմիրյազևը [illegible] իր ուսումնասիրություն-ներում [illegible] ձգտել է էներգիայի պահպանման օրենքը կենդանի օրգանիզմների վրա կիրառելու։ Էքսպերիմենտալ ապա-ցույցներ [illegible] հանդիսանում է [illegible] հայ-[illegible] [illegible] ու-նյութա-կան [illegible] [illegible] տեսակետից [illegible] Տիմիրյազևի կատարած աշ-խատանքները [illegible] համոզեցին են [illegible] [illegible] մեջ [illegible] կայունություն մեջ։ Դրանք [illegible] [illegible] հիմ-և անօրգանական [illegible] [illegible] [illegible]-նալի ապացույցներ։

Մանրէաբանության [illegible] [illegible] միասնության հարցը. Տիմիրյազևը օրգանիզմի [illegible] [illegible] ամբող-ջության [illegible] հատկանիշների, նրա [illegible] զարգացման միակ աղբյուրը համարում է [illegible] [illegible]-նը։ Դա միանգամայն [illegible] [illegible] օրգանիզմը բնորոշող, անօրգանական աշխարհից սահմանող հիմնական հատ-կանիշը նյութափոխանակությունն է։ Առանց այդ պրոցեսի՝ Տիմիրյազևը անիմաստ է համարում կյանքը։

Տիմիրյազևը ճիշտ է համարել և բացատրել ժառանգականու-թյան հակասական հարցերը։ Նրա կարծիքով՝ օրգանիզմում [illegible] [illegible] փոփոխականության պրո-ցեսը ժառանգականության շնորհիվ ամրապնդվում է հաջորդ սե-րունդներում՝ տանելով այդ փոփոխությունները մեկ որոշակի ուղղությամբ։

«Անկասկած է, որ միջավայրը փոխում է օրգանիզմները, այն-պես, ինչպես անկասկած է, որ ժառանգականությունը կուտակում է այդ փոփոխությունները, բարդացնում օրգանիզմը» (3, էջ 38)։

Տիմիրյազևը ժառանգականությունը դիտելով որպես օրգանիզմի շրջապատի պայմանների հետ փոխհարաբերության պրոցեսում գոյացող պատմական կատեգորիա, ընդգծել է օրգանիզմի բնույթի ուսումնասիրության համար պատմական մոտեցման անհրաժեշտությունը։

Նշելով օրգանիզմը նրա պատմական անցյալից, նրա կյանքի պայմաններից դուրս ուսումնասիրելու անհնարինությունը, Տիմիրյազևը ցույց է տվել, որ միջավայրի [illegible] հանգեցնում է ձևաբանական հատկանիշների ժառանգական փոփոխման, բնական ընտրության ստեղծագործական դերի [illegible] և բացում է սելեկցիոն գիտության բեղմնավոր զարգացման հեռանկարները։

Այսպիսով, Տիմիրյազևը ո՛չ միայն մեծ ծառայություններ է մատուցել ժառանգականության և նրա փոփոխականության հարցերի բացատրության գործին, այլև նշել է այդ երևույթների հետագա ուսումնասիրության հեռանկարները։ Ճիշտ է, նա չի բարձրացել դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերի բարձունքին, սակայն զինված պատմական մեթոդով [illegible] մոտեցել է կենդանի բնության բացատրության դիալեկտիկական մեթոդին։

Կենդանի բնության միասնականության, նրա զարգացման օրինաչափությունների, շարժիչ ուժերի և այլ կարևոր հարցերի պարզաբանման գործում մեծ դեր են խաղացել նաև այդ շրջանի շատ ուրիշ ռուս գիտնականներ, որոնցից հիշատակության արժանի են Ի. Ի. Մեչնիկովը, Մ. Ա. Մենզբիրը, [illegible] զոոտեխնիկներից Ե. Ա. Բոգդանովը, Պ. Ն. Կուլեշովը, Մ. Ֆ. Իվանովը, Ն. Պ. Չիրվինսկին և շատ ուրիշներ։ [illegible] էվոլյուցիոն հայացքների [illegible] է ճիշտ [illegible] ռուսական բիոլոգիական մտքի՝ օրգանական աշխարհի էվոլյուցիոն ուսմունքի զարգացման գործում կատարած հսկայական դերի մասին։

Ռուսական բիոլոգիայի կլասիկների մեծ նվաճումները դարձել են սովետական ստեղծագործական դարվինիզմի հիմքը։ Սովետական առաջավոր գիտնականները՝ հանդիսանալով ռուսական ստեղծագործական մտքի լավագույն ժառանգորդներն ու շարունակողները՝ զարգացրել և բազմապատկել են ռուսական գիտության անցյալի հիանալի տրադիցիաները։

Գենետիկայի և դարվինիզմի ամբիոն

ЦИТИРОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. Павлов И. П.—20-летний опыт объективного изучения высшей нервной деятельности. Изд. 6, 1933.
2. Сеченов И. М.—Две заключительные лекции. О значении так называемых растительных актов в животной жизни. „Медицинский вестник", 1861, № 26.
3. Тимирязев К. А.—Соч., том. V, 1938.

Н. П. БЕГЛАРЯН

РУССКИЕ ЭВОЛЮЦИОНИСТЫ ПОСЛЕДАРВИНОВСКОГО ВРЕМЕНИ

РЕЗЮМЕ

Работа преследует следующую цель: показать борьбу русской передовой науки последарвиновского времени за подлинную эволюционную теорию и роль этой науки в деле пропаганды и распространения указанной теории в России и познания основных закономерностей развития органического мира.

Использованный материал показывает, что эволюционная теория в России в начале 60-х годов прошлого века нашла свое признание и за сравнительно короткий срок получила широкое распространение.

Одно из основных обстоятельств, способствовавших этому, связано с общественно-политическими условиями, сложившимися в России в этот период. Революционная обстановка этого времени была особенно благоприятна для усиления материализма, а следовательно, и для развития дарвинизма.

Представители оригинальной, самостоятельной русской материалистической философии в лице А. И. Герцена, Н. Г. Чернышевского, В. Г. Белинского, Д. И. Писарева и др. эволюционное учение Дарвина восприняли как естественно-научную основу материалистического мировоззрения. Борьбу за эту теорию они считали основной частью борьбы за материалистическое мировоззрение. Они вышли за пределы метафизического материализма и, сочетая материализм с диалектикой, стали на путь диалектического материализма. В борьбе против реакционно-идеалистических направлений великие русские просветители отстаивали, разрабатывали и распространяли материалистическую философию и ближе всех подошли к научному объяснению мира. Они обогатили взгляды русских

биологов-эволюционистов о закономерностях развития органического мира самыми передовыми идеями.

Таким образом, русские философы-материалисты XIX в., продолжая материалистические традиции русских биологов-философов XVIII в., исходя из единства и материальности мира, проникая в закономерности развития органического мира и выражая объективную действительность, своими передовыми взглядами оказали большое влияние на целый ряд русских биологов-эволюционистов последарвиновского времени.

Представители блестящей плеяды славных биологов-материалистов в лице А. Н. Бекетова, В. О. и А. О. Ковалевских, И. М. Сеченова, И. И. Мечникова, И. П. Павлова, К. А. Тимирязева и др., вооруженные материалистическим мировоззрением, развивали сердцевину учения Дарвина. Они в самых различных областях борясь за материалистическую теорию, подходили ближе всех ученых Запада к диалектико-материалистической концепции развития природы и подготавливали идейно-теоретические основы подлинно научной теории развития органического мира. Они, увидев в дарвинизме единственно правильный путь дальнейшего развития научной биологии, со всей присущей истинным ученым страстностью отстаивали и развивали дарвинизм, создавая целый ряд биологических наук.

Видя причины развития органического мира в самой же природе, а не вне ее, они задачей теории развития считали выявление объективных закономерностей, изменений и развития органического мира.

Они внесли в теорию развития исключительный вклад и этим самым заложили прочный фундамент для советского творческого дарвинизма. Таким образом, современное материалистическое учение, познающее основные законы природы, в качестве своих предшественников имеет целую плеяду великих русских ученых.

Кафедра генетики и дарвинизма

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
40 1953

Դ. Պ. ԶՈԼԱԽՅԱՆ և Ս. Ս. ԶԱՄԻՆՅԱՆ

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԾԱՂԿՄԱՆ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Բույսերի ծաղկման բիոլոգիայի հարցը մեծ նշանակություն ունի բեղմնավորման պրոցեսի ուսումնասիրման և ղեկավարման, ինչպես նաև սելեկցիոն աշխատանքների համար: Ներկայումս կատարված են մի շարք ուսումնասիրություններ, որոնք ցույց են տալիս, որ յուրաքանչյուր կուլտուրա ունի յուրօրինակ ծաղկման բիոլոգիա, որը պայմանավորվում է տվյալ բույսի ռեպրոդուկտիվ օրգանների բնույթով և հարմարողականությամբ:

Յա. Ս. Այզենշտատի (2) փորձերը ցույց են տվել, որ տոմատի ուշ ժամանակի փոշոտումը առաջացնում է պտղաբեր էլեմենտների թուլացում և նրանց կենսունակության անկում:

Վ. Օ. Գուլքանյանի և Ս. Գ. Հովհաննիսյանի (8) փորձերը ցույց են տվել, որ ցորենի վարսանդի կենսունակությունը կաստրացիայից հետո պահպանվում է 10—11 օր:

Ա. Վ. Պիսարևան (14) գրում է, որ ցորենի վարսանդը պահպանում է բեղմնավորվելու ընդունակությունը 9 օրվա ընթացքում:

Ն. Վ. Ռուդնիցկին և Կ. Ա. Գլուխիխը (15) ցույց են տվել, որ աշորայի փոշոտման ժամանակ հատիկակալումը ամենից բարձր է լինում սպիի երևան գալու շրջանում 88,2 %, իսկ սպիի կենսունակությունը պահպանվում է 12 օրվա ընթացքում:

Գ. Հ. Բաբաջանյանի (4) փորձերում գարնանացան ցորենի

տրիչի ծաղկափոշով փոշոտելիս 9-րդ օրը սերմեր չեն ստացվել։ Ամենաբարձր հատիկակալում ստացվում է կաստրացիայից 2 օր հետո փոշոտելու ժամանակ՝ 77,1 %

Ա. Բ. Սալամովը (16) գրում է, որ եգիպտացորենի վարսանդը ընդունակ է բեղմնավորման 15 օրվա ընթացքում։

Մ. Ա. Վեսելովսկայան (6) ցույց է տվել, որ խաշխաշի սպիի կենսականությունը պահպանվում է 6 օրվա ընթացքում։

Ն. Ի. Գրիշկոն և Ե. Հ. Գրեչուխինը (7) ցույց են տվել, որ կանեփի փոշոտման ամենալավ շրջանը մեկուսացման 20—30-րդ օրն է։

Վ. Պ. Զասիմովիչը (11) ցույց է տվել, որ շաքարի ճակնդեղի վարսանդի կենսականությունը պահպանվում է ծաղկումից 10—11 օրվա ընթացքում։

Վ. Ե. Կոզուբենկոյի (12) ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եգիպտացորենի ծաղկափոշին պահպանում է իր կենսականությունը 48 ժամվա ընթացքում։

Լ. Գ. Արուտյունովայի (1) ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բամբակենու ծաղիկներում ամենաբարձր սերմակալում ստացվում է կաստրացիայից հետո փոշոտման 1-ին օրը՝ 81 %, 2-րդ օրը՝ 36 %, իսկ 3-րդ օրը՝ բոլորովին չի ստացվում։

Ա. Ի. Ցիլովը (17) բախչային կուլտուրաների վրա արված փորձերով ցույց է տվել, որ նրանց սպին կենսունակ է մնում 6 օրվա ընթացքում։ Իսկ ծաղկափոշին կենսունակ է բուտոնի բացվելուց 4 օր առաջ և 1 օր հետո։

Օ. Ն. Անիոլդովան (3) ցույց է տվել, որ արևածաղիկի սպիի կենսականությունը տևում է 16 օր։

Վ. Ն. Բորոդիչը (5) գրում է, որ վուշի գեներատիվ օրգանների կենսականությունը կաստրացիայից հետո պահպանվում է 6 օրվա ընթացքում։

Ն. Վ. Տուրբինի (8) և նրա աշխատակիցների փորձերում տոմատի պտղակալման ամենաբարձր տոկոս ստացվում է ծաղիկները հասուն վիճակում փոշոտելիս, իսկ ամենացածր տոկոս՝ երիտասարդ և ծեր հասակում։

Բ. Ա. Կոստանյանի (13) փորձերը ցույց են տալիս, որ ճակնդեղի վարսանդը ընդունակ է բեղմնավորման 8 օրվա ընթացքում, իսկ ծաղկափոշին 9 օրվա ընթացքում չի կորցնում իր կենսականությունը։

Ա. Ա. Եղիկյանի (10) ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եգիպտացորենի «ինցուխտ» վարիանտում վարսանդի կենսունակությունը տևում է 7 օր, «լրացուցիչ ուղիղի փոշոտման» ժամանակ՝ 11 օր, «հիբրիդիզացիա» վարիանտում՝ 15 օր։

Մեր փորձերը կատարվել են 1951—52 թթ. եգիպտացորենի սպիտակ հատիկներով № 10, հյուսիս-կովկասյան դեղին հատիկներով և օսետական սպիտակ ատամնավոր հատիկներով սորտերի վրա։

Ուսումնասիրվել է.

1. Լաբորատոր պայմաններում պահված ծաղկափոշու կենսունակության տևողությունը.

2. Վարսանդի կենսունակության տևողությունը։

Աշխատանքի մեթոդիկան—եգիպտացորենի նոր ծաղկող հուրաններին վրա անց է կացվել մեկուսիչներ, որոնց մեջ 3—4 օրվա ընթացքում հավաքված ծաղկափոշին լցվել է միմյանց վրա և լավ խառնելուց հետո պահվել լաբորատոր պայմաններում՝ սենյակային ջերմաստիճանում, ապակյա սրվակների մեջ, որոնք ծածկված են եղել մառլայով։ Փոշոտվել է 3—4 օրվա մեկուսացված վարսանդը միշտ միևնույն քանակի ծաղկափոշով։ Վարսանդի կենսագործունեությունը որոշելու համար չափվել է մեկուսիչների մեջ վերցված փոշոտվող սալի երկարությունը և փոշոտում կատարվել թարմ ծաղկափոշով։

Փորձերի անալիզների տվյալները ցույց են տալիս, որ ամենաբարձր հատիկակալում ստացվում է, երբ օսետական սպիտակ ատամնավոր սորտի հուրանը փոշոտում ենք 4 և 5 օր պահված ծաղկափոշով՝ 23,51 %, 34,07 % (աղ. 1)։ Հետաքրքիր է այն, որ մեր պայմաններում եգիպտացորենի ծաղկափոշին իր կենսունակությունը պահպանում է 7—8 օրվա ընթացքում (Բ. Ե. Կոզուբենկոյի մոտ՝ 48 ժամ, 12) ըստ որում նկատելի է, որ պահելու 1—2 օրերին նա ավելի քիչ կենսունակություն է ունենում, որի հետևանքով փոշոտման ժամանակ հատիկակալումը լինում է ցածր, իսկ 3—6 օրերին նա կարծես թե հասունանում է, որի հետևանքով հատիկակալումը առաջին օրերի 0,12—7,35 % դառնում է 0—34,07 % (աղ. 1)։

Վարսանդի կենսագործունեության ուսումնասիրման ժամանակ պարզվել է, որ հատիկակալումը կապված է կողրի վրա տեղավորված վարսանդների հասունացման հետ, մի բան, որը ըստ երևույթին արտահայտվում է կողրի տերևների միջից սալի դուրս

Աղյուսակ 1

ՓՈՇՈՏՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՎԱՐԻԱՆՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՕՍԵՏԻԱԿԱՆ ՍՊԻՏԱԿ ԱՏԱՄՆԱՎՈՐ ՀԱՏԻԿՆԵՐՈՒՄ ՍՆԵՏԻ ՀԱՏԻԿԱԿԱԼՄԱՆ ՎՐԱ

Վարիանտներ	1951 թ.				1952 թ.			
	փոշոտված կողրերի քանակը	քանակը: վարսանդների	քանակը: հատիկների	հատիկակալման տոկոսը	փոշոտված կողրերի քանակը	քանակը: վարսանդների	քանակը: հատիկների	հատիկակալման տոկոսը
Փոշոտված է 1 օր պահված ծաղկափոշիով	3	575	36	6,26	3	247	1	0,40
Փոշոտված է 2 օր պահված ծաղկափոշիով	3	1516	2	0,12	3	340	25	7,35
Փոշոտված է 3 օր պահված ծաղկափոշիով	3	1237	31	2,50	3	219	—	0
Փոշոտված է 4 օր պահված ծաղկափոշիով	5	1871	440	23,51	3	243	21	8,64
Փոշոտված է 5 օր պահված ծաղկափոշիով	4	1154	153	13,25	3	358	122	34,07
Փոշոտված է 6 օր պահված ծաղկափոշիով	3	745	101	13,55	3	237	1	0,42
Փոշոտված է 7 օր պահված ծաղկափոշիով	3	532	51	9,58	2	251	—	0
Փոշոտված է 8 օր պահված ծաղկափոշիով	3	1144	8	0,69	2	151	1	0,66
Փոշոտված է 9 օր պահված ծաղկափոշիով	—	—	—	—	1	174	—	0
Փոշոտված է 10 օր պահված ծաղկափոշիով	—	—	—	—	1	217	—	0

Թափմամբ: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երբ փոշոտումը կատարվում է այն ժամանակ, երբ սպին նոր է երևում (1—2 սմ) հյուսիսա-կովկասյան դեղին հատիկներով սորտում, հատիկակալումը լինում է ցածր՝ 0,2—12,06 %, սպիտակ հատիկներով № 10 սորտում 2 սմ երկարություն ունեցող սպիի փոշոտման ժամանակ հատիկակալումը կազմում է 50,24 %, 2,5 սմ-ի դեպքում՝ 45,55 %, 6,5 սմ-ի դեպքում՝ 33,5 %, իսկ արդեն ավելի ուշ՝ 10 սմ երկարության դեպքում՝ 6,99 %, 16 սմ-ի

Աղյուսակ 2

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՀԱՏԻԿԱԿԱԼՈՒՄԸ ԸՍՏ ՍՊԻԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ, 1951—52 թ. թ.

Սպիի երկարությունը սմ-ով	Սպիտակ հատիկներով № 10			Հյուսիսա-կովկասյան դեղին հատիկներով		
	քանակը		հատիկակալման տոկոսը	քանակը		հատիկակալման տոկոսը
	վարսանդներ	հատիկներ		վարսանդներ	հատիկներ	
1	227	13	5,72	498	1	0,2
2	201	101	50,24	199	24	12,06
2,3	—	—	—	147	55	37,41
2,5	90	41	45,55	—	—	—
4,3	321	85	26,47	—	—	—
4,5	206	26	12,62	266	9	3,38
5,5	216	4	1,85	—	—	—
6,5	176	59	33,52	264	107	40,53
7	167	48	28,62	—	—	—
7,5	223	39	17,46	—	—	—
9	—	—	—	153	89	58,16
9,5	—	—	—	543	175	32,22
10	186	13	6,99	—	—	—
11	—	—	—	387	197	50,9
14,5	—	—	—	433	14	3,46
15	—	—	—	349	251	71,92
15,2	—	—	—	414	109	26,32
16	243	19	7,81	—	—	—
19	—	—	—	369	58	15,71
20	—	—	—	372	—	0
20,2	—	—	—	147	55	37,46
24	—	—	—	457	16	3,5

դեպքում՝ 7,81 %, այսինքն՝ հատիկակալումը նորից իջնում է։ Հյուսիսա-կովկասյան դեղին հատիկներով սորտում հատիկակալումը 2,3 սմ-ի դեպքում լինում է 37,41 %, 6,5 սմ-ի դեպքում՝ 40,53 %, 9 սմ-ի դեպքում՝ 58,16 %։ Ի տարբերություն սպիտակ հատիկներով № 10 սորտի, այստեղ տեսնում ենք, որ սպին ավելի երկար է պահպանում իրեն կենսականությունը. 11 սմ-ի դեպքում փոշոտելիս հատիկակալումը լինում է 50,9 %, 15 սմ-ի դեպքում՝ 71,92 %, 20,2 սմ-ի դեպքում՝ 37,46 %, իսկ արդեն 24 սմ-ի դեպքում՝ իջնում է 3,5 %։

Ելնելով բերված տվյալներից՝ մենք գալիս ենք հետևյալ եզրակացություններին.

1. Եգիպտացորենի օսետական սպիտակ ատամնավոր սորտի ծաղկափոշին իր կենսունակությունը լաբորատոր պայմաններում պահպանում է 7-8 օրվա ընթացքում։ Ամենաբարձր հատիկակալման տոկոս ստացվում է 4—6 օրվա ընթացքում պահված ծաղկափոշով փոշոտելիս։ Ըստ երևույթին այդ օրերի ընթացքում ծաղկափոշին հասունանում է և ավելի ակտիվ դառնում բեղմնավորման ակտի համար։

2. Եգիպտացորենի սալին իրեն կենսագործունեությունը պահպանում է սպիտակ հատիկներով № 10 սորտում մինչև 16 սմ երկարության դեպքում, որից հետո հատիկակալումը իջնում է՝ կազմելով 7,81 %, կովկասյան դեղին հատիկներով սորտում՝ 24 սմ, երբ հատիկակալումը իջնելով կազմում է 3.5 %։ 2 սորտերում էլ հատիկակալումը առավել բարձր է սալիի հասունացման միջին շրջաններում՝ 2—7,5 սմ սպիտակ հատիկներով № 10 և 2,3—20.2 սմ-ի դեպքում հյուսիս-կովկասյան դեղին հատիկներով սորտում։

Այս ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եգիպտացորենի ռեպրոդուկտիվ օրգանների ու սեռական բջիջների կենսագործունեությունը բավականին երկար է տևում, մի բան, որն ըստ երևույթին, որպես խաչաձև փոշոտվող կուլտուրա, նա ձեռք է բերել իր էվոլյուցիոն զարգացման ընթացքում ընտրողաբար բեղմնավորվելու ավելի լայն հնարավորություններ ունենալու համար։

Գենետիկայի և դարվինիզմի ամբիոն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арутюнова Л. Г.—Прорастание пыльцы хлопчатника при внутрисортовом скрещивании. Журнал „Яровизация", № 1, 1940.
2. Айзенштат Я. С.—Управление доминированием у гибридов томатов. Ученые записки Лен. Гос. Университета, 193, вып. 20, 1951.
3. Арнольдова О. Н.—К биологии цветения подсолнечника в связи с техникой его скрещивания. Журнал „Опытная агрономия Юго-Востока", т. 3, в. 1.
4. Бабаджанян Г. А.—Избирательная способность оплодотворения сельскохозяйственных растений, 1937.
5. Бородич З. Н.—К вопросу о биологии цветения льна. Докл. ВАСХНИЛ, в. 7, 1940.
6. Веселовская М. А.—Мак, ВИР, 1933.
7. Гришко Н. Н. и Гречухин Е. Н.—Биология цветения и способы изоляции и гибридизации конопли. Сб. генетики и селекции конопли. Всесоюзн. научно-исследовательский институт конопли, ВАСХНИЛ, 1937.
8. Гулканян В. О. и Оганесян С. Г.—Избирательность оплодотворения у пшениц. Известия АН Арм. ССР (биолог. и сельхоз. науки), т. V, № 9, 1952.
9. Дорошенко А. В.—Физиология пыльцы. Тр. по прикл. ботанике, генетике и селекции, т. XVIII, № 5, 1928.
10. Егикян А. А.—Влияние различного возрастного состояния рылец кукурузы на избирательную способность оплодотворения и жизненность потомства при различных способах опыления. Известия АН Арм. ССР (биолог. и сельхоз. науки), т. VI, № 4, 1953.
11. Засимович В. П.—Главнейшие итоги работ по генетике и селекции сахарной свеклы в СССР. „Социалистическое растениеводство", 14, 1934.
12. Козубенко В. Е.—Особенности цветения, плодоношения и вопросы апробации кукурузы. Журн. „Селекция и семеноводство", № 11, 1938.
13. Костанян Б. А.—О жизненности пыльцы и рыльца сахарной свеклы. Известия АН. Арм. ССР (биолог. и сельхоз. науки), т. VI, № 1, 1953.

14. Писарев В. Е.—К методике скрещивания пшениц. Тр. по прикладн. ботанике, сер. А., 14, 1935.
15. Рудницкий Н. В. и Глухих К. А.—О межсортовом переопылении ржи, журн. „Яровизация", № 2, 1941.
16. Саламов А. Б.—Опыление кукурузы смесями пыльцы в разные сроки развития рылец, журн. „Агробиология", 5, 1947.
17. Филов А. И.—О биологии цветения и оплодотворения у бахчевых. Тр. по прикладн. бот. и „Соц. раст.", с. А, № 15, 1935.
18. Турбин Н. В.— Новое в биологии оплодотворения. Вестник Ленинградск. университета, „Биология", I, 1952.

Д. П. ЧОЛАХЯН и С. С. ЗАМИНЯН

К ВОПРОСУ О БИОЛОГИИ ЦВЕТЕНИЯ КУКУРУЗЫ

РЕЗЮМЕ

Опыты проводились в 1951—52 гг. на сортах кукурузы Белозерная № 10, Северокавказская желтозерная и Осетинская зубовидная белозерная. Нами изучалась:

1) Жизнеспособность пыльцы кукурузы при хранении ее в лабораторных условиях.

2) Продолжительность жизнеспособности пестика.

При анализе полученных данных выяснилось, что початки, опыленные пыльцой первых дней хранения, дали меньшее количество зерен, чем в средние дни, а затем это число вновь уменьшается. Так, например: у сорта Осетинская зубовидная белозерная завязывание зерен, по данным 1951 г., при опылении пыльцой 1-го дня хранения не превышало 6,25%, тогда как при опылении пыльцой 4-го дня хранения составляло 23,51 %, а наименьший получается при опылении пыльцой 8-го дня хранения — 0,69%.

По данным 1952 г., у сорта Осетинская зубовидная белозерная завязывание зерен при опылении пыльцой первого дня хранения составляет 0,4%, 5-го дня хранения — 34,14%, а пыльцой 8-го дня хранения—0,66%. Это можно объяснить тем, что в течение первых дней хранения пыльца дозревает и наиболее активной для процесса оплодотворения оказывается на 4—5-й день хранения.

Результаты анализа початков, опыленных при разной длине рыльца, показывает, что наибольший процент завязывания у сорта Белозерный № 10 получен при длине рыльца початка с 2—7 см. Высокой процент завязывания получается при опылении средней величины рыльца; так, напр., при опылении 4,3 см—26,5%, 6,5 см—33,5%, 7 см—28,7%. Данные на

Северокавказском желтозерном сорте несколько отличаются. Наивысший процент завязывания получается при опылении рыльца 9 см—58,1 %, 11 см—50,9 %, наименьший при длине 1 см—0,2% и 24 см—3,5%.

ВЫВОДЫ

1) Пыльца кукурузы Осетинская зубовидная белозерная при хранении в лабораторных условиях сохраняет свою жизнеспособность в течение 7—8 дней.

2) Пестик кукурузы Белозерная № 10 и Северокавказская желтозерная в наших условиях при изоляции долго сохраняет свою жизнеспособность. В этих случаях длина рыльца Белозерной № 10 составляет 1—16 см, а у Северокавказского желтозерного сорта 2—20,2 см.

Кафедра генетики и дарвинизма

С. ОРДОЯН

ИЗМЕНЕНИЯ КАЧЕСТВА СЕМЕННОГО КАРТОФЕЛЯ СОРТА „ЛОРХ" В РАЗЛИЧНЫХ ЭКОЛОГИЧЕСКИХ УСЛОВИЯХ АРМЕНИИ

Получение высококачественного семенного материала является одним из актуальных вопросов в сельском хозяйстве. Один и тот же семенной картофель меняет свое качество при культуре его в различных экологических условиях. Этот бесспорный факт зафиксирован в литературе в разное время как исследователями нашего Союза, так и учеными других стран (2, 8, 12, 15). Изменение качества семенного картофеля может иметь место не только под влиянием конкретных условий среды и в первую очередь под влиянием применяемых человеком агротехнических мероприятий. Это доказывает опыт передовиков-картофелеводов сельского хозяйства (1, 4, 7, 9), которые в основу получения высоких урожаев картофеля ставят не только его чистосортность, но и качество семенного материала. Культивируя картофельное растение на высоком агрофоне, не только повышают урожайность, но и улучшают качество семенного материала.

Опыты показали, что полученные на высоком агрофоне клубни на следующий год дают богатые урожаи.

На качество семенного картофеля положительное влияние оказывают летние посадки и вообще позднии его посевы.

Получающийся от таких посевов семенной материал бывает высококачественным и при использовании в следующем году дает высокий и устойчивый урожай. Необходимо отметить, что на качество семенного материала в неменьшей мере влияет и почва. Путем исследований (2, 3, 16) установлено, что кислые почвы на качество клубней семенного картофеля действуют лучше, чем почвы со щелочной реакцией.

Известно, что сравнительно жаркие условия юга снижают качество семенного картофеля. Академик Т. Д. Лысенко объясняет это явление разработанной им же теорией стадийности развития растений. В условиях юга, где лето жаркое, картофельное растение находится в неблагоприятных условиях для своего роста. В этих условиях картофель теряет свои наследственные хорошие свойства, вырождается и дает очень низкий урожай. Вырождение картофеля в южных условиях многими исследователями объясняется вирусными болезнями. Однако академик Т. Д. Лысенко впервые научно доказал, что причиной вырождения являются не вирусные болезни, а высокие температурные условия среды. При объяснении явления вырождения картофеля по теории акад. Лысенко нужно исходить из обоюдного влияния организма и внешней среды.

Академик Т. Д. Лысенко пишет: „...вырождение посадочного материала картофеля ранних сортов в условиях юга УССР биологически является не болезнью, а старением. Вырожденные клубни картофеля дают всходы, которые с первого же дня являются стадийно более старыми, нежели всходы на этом же поле картофеля из здоровых, невырожденных клубней. Более старые, более дряхлые растительные организмы во многих случаях менее устойчивы против различных заболеваний, в том числе, конечно, возможно и против вирусных болезней“ (5).

Т. Д. Лысенко выявил причины вырождения картофеля и разрешил проблему возделывания картофеля в жарких южных районах нашего Союза.

Обоснование летних посадок картофеля является одним из блестящих достижений в деле направленного воспитания и изменения растений.

Нами отмечается, что высокая температура в Арташатском районе способствует пышному росту картофельного растения и дает большое количество (5—7) стеблей. Это объясняется также и тем, что высокая температура в почве способствует прорастанию большого количества глазков посаженного картофеля. Это явление отмечено на сорте картофеля „Лорх" в условиях Арташатского района (см. таблицу 1).

Таблица показывает, что при наличии на кусте четырех и больше стеблей в Арташатском районе снижается не только урожайность, но и качество и вес клубней. Необходимо отметить, что клубни, образовавшиеся под одним и тем же кустом, отличаются друг от друга не только качеством, но и цветом. Последнее мы объясняем влиянием высокой температуры, которая меняет обычный белый цвет клубня в слабокаштановый цвет. Затем в условиях высокой температуры кожура клубня становится сетчатой, шелушистой и внешне становится похожей на клубень, хранившийся продолжительное время в складе. Образовавшийся в июне клубень картофеля, рост которого совпал с периодом высокой температуры, обычно претерпевает вышеописанные изменения.

Наши наблюдения показывают, что все части одного и того же клубня, образовавшиеся в различное время лета, сильно отличались друг от друга как по качеству и форме, так и по цвету. Полученные в жарких условиях клубни бывают мелкими, очень часто бесформенными и подвержены быстрому прорастанию. При таких условиях мякоть клубня бывает стекловидной, водянистой, а сердцевина—прозрачной.

Биохимическими исследованиями Ф. А. Новикова (10, 11, 13, 14) установлено, что содержание растворимых углеводов в клубнях, выращенных в сравнительно жарких условиях весенних посадок, бывает очень низкое, а активность кислотных ферментов очень высокая, что не замечается на тех же клубнях в более оптимальных условиях температуры (летние посадки).

Таблица 1

Средняя урожайность одного куста с разным числом стеблей в Арташате (опыты проведены с 1945 по 1947 год включительно)

Время и место испытаний исходного материала	Растения с одним стеблем			Растения с двумя стеблями			Растения с тремя стеблями			Растения с четырьмя стеблями			Растения с пятью стеблями			Растения с шестью стеблями			Растения с семью стеблями		
	вес клубней в граммах	Товарность клубней в %		вес клубней в граммах	Товарность клубней в %		вес клубней в граммах	Товарность клубней в %		вес клубней в граммах	Товарность клубней в %		вес клубней в граммах	Товарность клубней в %		вес клубней в граммах	Товарность клубней в %		вес клубней в граммах	Товарность клубней в %	
		средние и крупные клубни	мелкие клубни		средние и крупные клубни	мелкие клубни		средние и крупные клубни	мелкие клубни		средние и крупные клубни	мелкие клубни		средние и крупные клубни	мелкие клубни		средние и крупные клубни	мелкие клубни		средние и крупные клубни	мелкие клубни
В Арташате в 1945 году	—	—	—	310	60	40	580	85	15	290	70	30	270	65	35	240	55	45	—	—	—
В Арташате в 1946 году	—	—	—	270	65	35	480	80	20	250	70	30	260	65	35	225	40	60	—	—	—
В Арташате в 1947 году	150	35	65	235	45	55	465	75	25	200	60	40	225	55	45	210	35	65	190	20	80

Проведенные нами опыты показали, что сорт картофеля „Лорх“ при беспрерывном трехгодичном возделывании в условиях Арташата постепенно ухудшает качество семенного материала и снижает урожайность (см. таблицу 2).

Приведенные в таблице 2 данные показывают, что качество семенного картофеля снижается, причиной чего в данной местности в основном является влияние высокой температуры на клубни в период их образования и формирования. Следует отметить, что снижение качества семян и падение урожая у сорта „Лорх“ в первый год выражаются сравнительно слабее, чем в последующие два года. При беспрерывном трехлетнем культивировании картофеля в условиях Арташата снижаются не только семенные качества, но и значительно уменьшается процент крахмала, а клубни становятся мелкими.

Данные таблицы показывают также, что качество перевезенного из Степанаванского и Мартунинского опытных пунктов и культивируемого два года подряд в условиях Арташата семенного материала постепенно ухудшается; снижается не только урожайность, но и содержание крахмала (на 3—4%), а также и товарность клубней (на 20—?0%).

Иные данные получены с семенного материала, перевезенного из Арташата и два года подряд культивируемого в Степанаванском и Мартунинском опытных пунктах.

Картофель, перевезенный из Арташата в почвенно-климатические условия вышеупомянутых горных районов, год от года постепенно восстанавливает не только присущие сорту морфологические и биологические свойства, но и его цвет, качество, крахмалистость, а также высокий процент товарности клубней. Мякоть клубня, выращенного в упомянутых условиях, бывает уплотненной, значительно повышается крахмалистость, мякоть не водянистая, разрез не стекловидный, как это замечается на клубнях, выращенных в жарких условиях.

Благодаря ряду мероприятий по обработке и уходу за картофелем и оптимальной температуре (17—18°) при культуре перевезенного из Арташата семенного картофеля в

Таблица 2

Средняя урожайность и содержание крахмала в клубнях четырехстебельных кустов по вариантам в Арташате (опыты проведены с 1945 по 1947 год включительно)

Время и место испытания исходного материала	Время посадки	Срок уборки	Растения с четырьмя стеблями			Содержание крахмала в процентах
			вес клубней в граммах	Товарность клубней в %		
				средние и крупные клубни	мелкие клубни	
Материал, выращенный в 1945, 1946 и 1947 гг. в Арташате	27/IV-1945 г.	17/VIII-1945 г.	[illegible]	70	30	13,3[illegible]
	10/IV-1946 г.	28/VII-1946 г.	250	70	30	16,79
	22/III-1947 г.	22/VII-1947 г.	200	60	40	16,19
Материал, выращенный в 1945 г. в Степанаване, в 1946 и 1947 гг. в Арташате	10/IV-1946 г.	28/VII-1946 г.	360	70	30	19,05
	22/III-1947 г.	22/VII-1947 г.	270	45	55	17,95
Материал, выращенный в 1945, 1946 гг. в Степанаване, в 1947 г. в Арташате	22/III-1947 г.	22/VII-1947 г.	390	75	25	17,33
Материал, выращенный в 1945 г. в Мартуни, в 1946—47 гг. в Арташате	10/IV-1946 г.	28/VII-1946 г.	410	80	20	17,12
	22/III-1947 г.	22/VII-1947 г.	260	65	35	16,92
Материал, выращенный в 1945, 46 гг. в Мартуни, в 1947 г. в Арташате	22/III-1947 г.	22/VII-1947 г.	470	85	15	17,68

Таблица 3

Средняя урожайность и содержание крахмала в клубнях четырехстебельных кустов по вариантам в Степанаване (опыты проведены с 1945 по 1947 год включительно)

Время и место испытания исходного материала	Время посадки	Срок уборки	Растения с четырьмя стеблями			Содержание крахмала в процентах
			вес клубней в граммах	Товарность клубней в %		
				средние и крупные клубни	мелкие клубни	
Материал, выращенный в Степанаване в 1945—47 гг.	8/V-1945 г.	15/IX-1945 г.	390	75	25	22,77
	20/IV-1946 г.	26/IX-1946 г.	580	85	15	22,0
	4/IV-1947 г.	6/IX-1947 г.	420	85	15	23,33
Материал, выращенный в 1945 г. в Арташате, в 1946—47 гг. в Степанаване	20/IV-1946 г.	26/IX-1946 г.	330	65	35	18,01
	4/IV-1947 г.	6/IX-1947 г.	400	80	20	20,93
Материал, выращенный в 1945 и 46 гг. в Арташате, в 1947 г. в Степанаване	4/IV-1947 г.	6/IX-1947 г.	300	60	40	20,18
Материал, выращенный в 1945 г. в Мартуни, в 1946—47 гг. в Степанаване	20/IV-1946 г.	26/IX-1946 г.	740	90	10	20,39
	4/IV-1947 г.	6/IX-1947 г.	450	80	20	22,54
Материал, выращенный в 1945, 1946 гг. в Мартуни, в 1947 г. в Степанаване	4/IV-1947 г.	6/IX-1947 г.	660	95	5	22,12

Таблица 4

Средняя урожайность и содержание крахмала в клубнях четырехстебельных кустов по вариантам в Мартуни (опыты проведены с 1945 по 1947 год включительно)

Время и место испытания исходного материала	Время посадки	Срок уборки	Растения с четырьмя стеблями			Содержание крахмала в процентах
			вес клубней в граммах	Товарность клубней в %		
				средние и крупные клубни	мелкие клубни	
Материал, выращенный в 1945, 46 и 47 годах в Мартуни	15/V-1945 г.	27/IX-1945 г.	410	85	15	18,8
	29/IV-1946 г.	11/X-1946 г.	630	90	10	19,31
	12/IV-1947 г.	10/X-1947 г.	540	80	20	20,8
Материал, выращенный в 1945 году в Арташате, в 1946, 1947 гг. в Мартуни	29/IV-1946 г.	11/X-1946 г.	370	65	35	18,73
	12/IV-1947 г.	10/X-1947 г.	430	85	15	16,29
Материал, выращенный в 1945, 1946 гг. в Арташате, в 1947 году в Мартуни	12/IV-1947 г	10/X-1947 г.	320	60	40	15,94
Материал, выращенный в 1945 году в Степанаване, в 1946 и 1947 гг. в Мартуни	29/IV-1946 г.	11/X-1946 г.	420	80	20	18,53
	12/IV-1947 г.	10/X-1947 г.	470	90	10	17,21
Материал, выращенный в 1945 и 1946 гг. в Степанаване, в 1947 году в Мартуни	12/IV-1947 г.	10/X-1947 г.	460	75	25	18,96

горных районах сортовые качества этого картофеля почти восстанавливаются (см. таблицы 3 и 4).

Приведенные в таблицах 3 и 4 данные показывают, что качество выращенных в условиях Мартуни клубней картофеля выше, чем качество клубней, выращенных в условиях Степанавана. Заметно то обстоятельство, что наивысший урожай клубней в условиях Степанавана и Мартуни дают растения, имеющие четыре и пять стеблей. В почвенно-климатических условиях Степанавана и Мартуни картофельные растения имеют нормальный рост и развитие. В июле и августе клубнеобразование совпадает с наличием необходимых для растения оптимальных условий температуры. В условиях применяемого в горных районах комплекса необходимых агромероприятий культивируемый здесь картофель может долгое время сохранить высокие семенные качества, высокий процент крахмалистости, товарности клубней и т. д.

ВЫВОДЫ

1. Результаты наших опытов показывают, что сорт картофеля „Лорх" при культуре в различных экологических условиях претерпевает сильные изменения.

2. Перенесенный посевной материал репродукции Степанаванского и Мартунинского опытных пунктов при последовательном возделывании в течение двух лет в условиях Арташата качественно ухудшается, снижается не только урожайность, но и крахмалистость на 3—4% и товарность на 20—30%. Совершенно иначе обстоит дело, когда клубни арташатской репродукции в течение двух лет возделываются в Степанаванском и Мартунинском опытных пунктах. В этом случае из года в год не только восстанавливаются свойственные сорту „Лорх" биологические и морфологические свойства растений, но восстанавливаются и прежние особенности сорта: урожайность, окраска клубней и их качество, крахмалистость, товарность и т. д.

3. Образование клубней в течение июля—августа в улсовиях Степанаванского и Мартунинского районов сов-

падает с оптимальным для растений сочетанием факторов температуры и влажности. В результате этого, при сравнительно высокой урожайности растений, получается высококачественный посадочный материал клубней.

При всем этом, однако, следует подчеркнуть, что семенные качества клубней мартунинской репродукции выше, чем степанаванской.

4. Данные наших опытов подтверждают, что максимальный урожай клубней картофеля в Степанаванском и Мартунинском районах получается у растений, образовавших 4—5 стеблей, а в Арташатском—не более 3 стеблей.

5. Сравнительная стабильность свойств и признаков сорта картофеля „Лорх“ обусловлена длительной культурой в течение долгого времени в одних и тех же экологических условиях. В таких условиях сорт развивает те свои биологические свойства и морфологические признаки, которые больше всего соответствуют условиям данной среды.

ЛИТЕРАТУРА

1. Арнаутов В. В.—Агротехника картофеля. Москва, Сельхозгиз, 1945.
2. Арнаутов В. В.—О переделке природы картофельного растения путем направленного воспитания. Вестник с.-х. наук № 1, серия овощеводство и картофель, 1940, Москва.
3. Букасов С. М. и Камераз А. Я.—Селекция картофеля. Сельхозгиз., 1948, Москва.
4. Картавая А. Е.—Как получить высокий урожай картофеля. Сельхозгиз, 1938.
5. Лысенко Т. Д. и Бабак М. К.—Борьба с вырождением картофеля на юге УССР, стр. 15, Сельхозгиз, 1936, Москва.
6. Лысенко Т. Д.—Причины вырождения посадочного материала картофеля на юге. Агробиология, стр. 3-2, изд. Сельхозгиза, 1948, Москва.
7. Лорх А. Г. и Окорокова Е. А.—Правильным уходом за посевами обеспечим высокий урожай картофеля. „Сад и огород“, № 5, 1947, изд. Сельхозгиза, Москва.
8. Максимович М. М.—Значение качества семенного материала в борьбе за высокий урожай картофеля. Журнал „Овощеводство и картофель“, вып. 1, изд. Сельхозгиза, 1941, Москва.

9. Максимович М. М.—Семеноводство картофеля, 1951.
10. Новиков Ф. А.—Нитевидность ростков у клубней и семенные качества картофеля. Вестник с.-х. наук, "Овощеводство и картоф.", вып. 2, Сельхозгиз, 1940, Москва.
11. Новиков Ф. А. и Мозолькова Д. А.—О семенных качествах клубней картофеля. „Овощеводство", № 2—3, Сельхозгиз, 1939.
12. Подлипенко—Улучшение сортовых и семенных качеств картофеля. „Овощеводство", № 3, 1940, Сельхозгиз, Москва.
13. Рожалин Л. В.—Исследования вырождения семенного картофеля. Научн. отчет Ин-та карт. хозяйства за 1941—1945 гг., изд. Сельхозгиза, 1947.
14. Сухов К. С. -Проблема вырождения картофеля. Тр. Ин-та генетики АН СССР, № 16, 1948.
15. Тимирязев К. А.—Предисловие к книге Ж. Константена „Растение и среда". Изд. журнала „Русская мысль", 1908.
16. Филимонов А. А.—Влияние почвенных условий и удобрений на семенные качества картофеля. Научный отчет Инст картофельного хозяйства, 1941—1945.

Ս. ՕՐԴՈՅԱՆ

«ԼՈՐԽ» ՍՈՐՏԻ ՍԵՐՄԱՅԻՆ ԿԱՐՏՈՖԻԼԻ ՈՐԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԲԵՐ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

Բարձրորակ սերմնանյութ ստանալու հարցը ներկայումս ակտուալ հարցերից մեկն է սոցիալիստական գյուղատնտեսության համար։ Կարտոֆիլի միևնույն սերմնանյութը տարբեր էկոլոգիական պայմաններում մշակելիս փոխում է իր որակը։ Այդ անժխտելի փաստը արձանագրված է գրականության մեջ տարբեր ժամանակներում։ Սերմացու կարտոֆիլի որակի փոփոխությունը կարող է առաջանալ ո՛չ միայն միջավայրի կոնկրետ պայմանների ազդեցությունից, այլև առաջին հերթին մարդու կողմից գործադրվող ագրոտեխնիկական միջոցառումներից։ Այդ ապացուցվում է մեր Միության կարտոֆիլացան ստախանովականների փորձով, որոնք բարձր բերք ստանալու գործում առաջնակարգ տեղ են տալիս ոչ միայն կարտոֆիլի գտասորտությանը, այլև սերմնանյութի որակին։ Կարտոֆիլի բույսը մշակելով բարձր ագրոֆոնում, ստախանովականները ոչ միայն բարձրացնում են բերքատվությունը, այլև լավացնում սերմնանյութի որակը։ Ստախանովականների փորձերը ցույց են տալիս, որ բարձր ագրոֆոնից ստացված պալարները հաջորդ տարում տալիս են առատ բերք։

Անհրաժեշտ է նշել, որ սերմացուի որակի վրա ոչ պակաս չափով ազդում է նաև հողը։ Հետազոտական աշխատանքների միջոցով հաստատված է, որ թեթև հողերն ավելի լավ ազդեցություն են ունենում սերմացու պալարների որակի վրա, քան հիմքային հատկության հողերը։

Արարատյան դաշտավայրում բարձր ջերմությունը նպաստում է կարտոֆիլի բույսի փարթամ աճին և տալիս է անհամեմատ ավելի թվով (5—7) ցողուններ։ Դա բացատրվում է նաև նրանով, որ հողի մեջ եղած ջերմությունը նպաստում է տնկվող պալարի շատ թվով աչքերի բացվելուն։ Նկատվում է,

որ չորս և ավելի ցողուն ունենալու դեպքում, Արտաշատի պայմաններում ընկնում է ոչ միայն բերքատվությունը, այլև պալարի որակն ու քաշը։ Պետք է նշել, որ միևնույն թփի տակ առաջացած պալարները տարբերվում են իրարից ոչ միայն որակով, այլև գույնով։ Վերջինս մենք բացատրում ենք բարձր ջերմության ազդեցությամբ, որը պալարի սովորական սպիտակ գույնը փոխում է թույլ շագանակագույնի։ Այնուհետև բարձր ջերմության տակ ընկած պալարի մաշկը ցանցապատվում և թափվում է, որը շատ նման է երկար ժամանակ պահեստային պայմաններում պահվող պալարի արտաքին տեսքին։ Կարտոֆիլի բույսի՝ հունիսին առաջացրած պալարը, որի աճը համընկել է բարձր ջերմության ժամանակաշրջանին, սովորաբար կրում է վերը նկարագրված փոփոխությունը։

Նկատվել է, որ գարնանը տնկված պալարից ստացված բույսի տակ առաջացած երիտասարդ պալարն ընկնելով ցածր ջերմության միջավայրում, նրա գագաթի մասը որակով միանգամայն տարբերվում է իր հիմքի մասից։ Միևնույն պալարի տարբեր մասերը, որոնք առաջանում են տարբեր ժամանակներում, թե՛ որակով և թե՛ գույնով խիստ տարբերվում են իրարից։ Շոգ պայմաններում առաջացած պալարները լինում են մանր և շատ հաճախ տձև։

Մեր փորձնական աշխատանքները ցույց են տվել, որ կարտոֆիլի «Լորխ» սորտը երեք տարի անընդհատ մշակվելով Արտաշատի պայմաններում, հետզհետե վատացնում է սերմանյութի որակը և գցում բերքատվությունը։

Տվյալները ցույց են տալիս, որ Արտաշատի պայմաններում կարտոֆիլի սերմացուի որակի անկման հիմնական պատճառը բարձր ջերմության ազդեցությունն է պալարների վրա՝ նրանց գոյացման և ձևավորման ժամանակամիջոցում։ Պետք է նշել, որ առաջին տարում «Լորխ» սորտի մեջ համեմատաբար թույլ է արտահայտվում սերմի որակի և բերքի անկումը, քան հաջորդ երկու տարիներում։ Արտաշատի պայմաններում երեք տարի անընդհատ կարտոֆիլը մշակելիս ոչ միայն ընկնում է սերմի որակը, այլև զգալի չափով նվազում է օսլայի տոկոսը, իսկ պալարները լինում են մանր։

Մեր փորձի տվյալները ցույց են տալիս նաև այն, որ Ստեփանավանի և Մարտունու պայմաններից տեղափոխված և երկու տարի Արտաշատում մշակված սերմացուի որակն աստիճանաբար

վատանում է, ընկնում է ոչ միայն բերքատվությունը, այլև պալարների օսլայի պարունակությունը (3—4 տոկոսով) և պալարների պարունակությունը (20—30 տոկոսով)։

Այլ տվյալներ են ստացված Արտաշատից տեղափոխված և երկու տարի Ստեփանավանի ու Մարտունու պայմաններում մշակված սերմանյութից։ Վերոհիշյալ լեռնային ռայոնների հողա-կլիմայական պայմաններում Արտաշատից տեղափոխված կարտոֆիլն ըստ տարիների աստիճանաբար սկսում է ոչ միայն վերականգնել սորտին հատուկ մորֆոլոգիական և բիոլոգիական հատկությունները, այլև վերականգնում է սորտին հատուկ պալարի գույնը, որակը, օսլայականությունը, ինչպես նաև պալարների ապրանքայնության բարձր տոկոսը։ Մշակության անհրաժեշտ միջոցառումների և օպտիմալ ջերմության (17—18° Ց) շնորհիվ, Արտաշատից տեղափոխված սերմանյութը լեռնային շրջաններում մշակելիս՝ սորտի որակը վերականգնվում է։

Տվյալները ցույց են տալիս, որ Մարտունու պայմաններում մշակված կարտոֆիլի պալարների, որպես սերմանյութի, որակն ավելի բարձր է, քան Ստեփանավանի պայմաններում մշակվածը։ Նկատելի է, որ Ստեփանավանում և Մարտունիում ամենաբարձր բերքը ստացվում է չորս և հինգ ցողուն ունեցող բույսերից, իսկ Արտաշատում՝ երեք ցողուն ունեցող բույսերից։ Ստեփանավանի և Մարտունու պայմաններում կարտոֆիլի բույսերն ունենում են նորմալ աճ և զարգացում, ամռանը հուլիս և օգոստոս ամիսներին կարտոֆիլի բույսի պալարագոյացումը համընկնում է բույսին անհրաժեշտ ջերմության օպտիմալ պայմաններին։ Լեռնային ռայոններում գործադրվող անհրաժեշտ ագրոմիջոցառումների կոմպլեքսի պայմաններում մշակվող կարտոֆիլի սորտը երկար տարիներ կարող է պահպանել սերմացուի բարձր որակը, բարձր տոկոսի օսլայականությունը և պալարների ապրանքայնությունը։

Ս. Գ. ՍԵՄԻՐՋՅԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԵՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒՄԸ ՏՈՄԱՏԻ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆԴՈՒՄ՝ ԾԱՂԿԱՓՈՇԻՆԵՐԻ ԽԱՌՆՈՒՐԴՈՎ ՓՈՇՈՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Ներկա աշխատանքի նպատակը ծաղկափոշիների խառնուրդով փոշոտելուց ստացված հիբրիդային բույսերում հայրական մի քանի ձևի հատկանիշների ժառանգման ուսումնասիրումն է։

Աշխատանքը կատարվել է ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտի փորձադաշտում՝ բիոլոգիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հ. Գ. Բատիկյանի ղեկավարությամբ։

Հիբրիդային առաջին սերնդի բույսերը ստացվել են 1951 թ. տոմատի Անահիտ, Միկադո և Գրուշևիդնի սորտերի խաչաձևումից—♀ Անահիտ × ♂ (Միկադո + Գրուշևիդնի)։ Միաժամանակ կատարվել են կոնտրոլ փորձեր՝

1. ♀ Անահիտ × ♂ Միկադո և 2). ♀ Անահիտ × ♂ Գրուշևիդնի կոմբինացիաներով։

1952 թ. հիբրիդային սերմերը ցանվել են փորձադաշտում և կատարվել են դիտողություններ։ ♀ Անահիտ × ♂ (Միկադո + Գրուշևիդնի) կոմբինացիայից ուսումնասիրվել են 1 պտղի սերմից ստացված 22 բույս։ Անալիզների տվյալները ցույց են տալիս (աղ. 1), որ ստացված հիբրիդային բույսերը այս կամ այն չափով ժառանգել են ծաղկափոշիների խառնուրդի կոմպոնենտ փոշոտիչ Միկադո և Գրուշևիդնի սորտերի հատկանիշները։

ԾԱՂԿԱՓՈՇԻՆԵՐԻ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՄԱՏԻ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆԴԻ ԲՈՒՅՍԵՐԻ ԲԱԶՄԱՁԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ 1952 Թ.

Աղյուսակ 1

Փոշոտման կոմբինացիան	Առանձնացված բույսերի ընդ. %-ով	Ստացված հիբրիդների մեջ մայրական տիպերի %-ով	Տերևի ձևը	Ծաղկափթթություն: ձևը	Ծաղկափթթություն: գլխավոր ցողունի վրա	Ծաղկափթթություն: կողային ցողունի վրա	Պտուղ: ձևը	Պտուղ: կշիռը (գրամով)	Պտուղ: մակերեսը	Պտուղ: կամերականությունը
Անահիտ (կոնտրոլ)			սովորական	պարզ	3—6	3—4	կլորավուն	150—200	հարթ կողավոր	7—10 բազմակամերանի
Միկադո (կոնտրոլ)			կարտոֆիլատերև	բարդ	1—4	1—4	տափակ	»	կողավոր	
Գրուշևիդնի (կոնտրոլ)			սովորական	պարզ	5—6	5—6	տանձաձև	6—15	հարթ	2
♀ Անահիտ × (♂ Միկադո + Գրուշևիդնի)		68	սովորական	»	5—6	4—5	կլորավուն	25—45	հարթ	3—4
	22	9	միջին	բարդ	3—5	3—4	տափակավուն	15—50	կողավոր	2—11
		23	»	պարզ	5—6	5—6	տափակ, կլոր և թույլ երկարացած	45—60	հարթ և կողավոր	4—8
♀ Անահիտ × ♂ Միկադո		47	սովորական	»	3—5	1—4	կլորավուն		հարթ	
	15	47	միջին	միջին	2—7	»	»		կողավոր	
		6	»	բարդ	5—6	»	տափակավուն		թույլ կողավոր	
	10	50	»	միջին	3—7	»	կլորավուն		»	
	53	50	սովորական	պարզ	2—6	»	»		հարթ	
		53	»	»	2—5	»	»		թույլ կողավոր	
	15	47	»	միջին	1—7	1—5	տափակավուն		»	
♀ Անահիտ × ♂ Գրուշևիդնի	73	73	սովորական	պարզ	3—8	3—6	կլորավուն		հարթ	
	15	27	»	»	4—6	3—6	թույլ երկարացած		»	
		47	»	»	2—6	1—4	կլորավուն		»	
	15	53	»	»	4—7	1—5	»		»	
		20	»	»	4—6	2—6	»		»	
	15	80	»	»	3—7	1—7	»			

Այսպես, օրինակ՝ ուսումնասիրված բույսերի 23%-ը ծաղկափթթության ձևով և ողկույզի վրա եղած պտուղների քանակով նման են փոշոտիչ Գրուշևիդնի սորտին, պտուղների ձևով և մակերեսով նմանվում են ծնողական երկու ձևերին, իսկ պտուղների կշռով և կամերայնությամբ գրավում են միջին տեղը։

Տարբեր բույսերի միջև եղած բազմազանությունը դիտվում է ո՛չ միայն մեկ պարից ստացված բույսերի սահմանում,



Նկ. 1. Վերևում (ձախից աջ)՝ ծնողական Անահիս, Գրուշևիդնի և Միկադո սորտերի ողկույզները:
Ներքևում՝ միևնույն բույսից վերցված երեք ողկույզներ, որոնք համապատասխանորեն նմանվում են Անահիս, Միկադո և Գրուշևիդնի սորտերի ողկույզներին: Երկրորդ ողկույզի պտուղները կամերականությամբ նմանվում են Անահիս և Միկադո սորտերին, իսկ երրորդ ողկույզի պտուղները՝ Միկադո և Գրուշևիդնի սորտերին:

այլև մեկ բույսի սահմանում՝ նրա առանձին հատկանիշների միջև։ Հաճախ հիբրիդային բույսը ծաղկափթթությամբ նմանվում է մայրական ձևին, իսկ պտուղների ձևով՝ ծնողական 3 ձևին միաժամանակ։

Փորձի տվյալները ցույց են տալիս, որ ծաղկափոշիների խառնուրդի կոմպոնենտ՝ Միկադո և Գրուշևիդնի սորտերի ծաղկափոշիները մասնակցել են բեղմնավորման պրոցեսին։

Ուսումնասիրվել են նաև ♀ Անահիտ × ♂ Միկադո և ♀ Անահիտ × ♂ Գրուշևիդնի կոմբինացիաների 3-ական պտղի սահմանում ստացված հիբրիդային առաջին սերնդի բույսերի բազմազանությունը (տես աղ. 1)։ Անալիզների տվյալները ցույց են տալիս, որ բացառությամբ Անահիտ × ♂ Միկադո

Նկ. 2. Վերևում (ձախից աջ)՝ ծնողական Անահիտ և Միկադո սորտերի ողկույզները:
Ներքևում՝ հիբրիդից վերցված ողկույզ, որի պտուղները նման են Անահիտ և Միկադո սորտերի պտուղներին:

կոմբինացիայի 1 բույսի, բազմազանությունն ընթացել է 1) մայրական և հայրական հատկանիշների ժառանգման ուղղությամբ կամ 2) ծնողներից մեկի հատկանիշների ժառանգման գերակշռության ուղղությամբ։

Երբ համեմատում ենք ♀ Անահիտ × ♂ Միկադո և ♀ Անահիտ × ♂ Գրուշևիդնի կոմբինացիաներից ստացված հիբ-

րիդային բույսերի բազմազանության տվյալները ♀ Անահիտ × ♂ (Միկադո + Գրուշևիդնի) կոմբինացիայում ստացված բույսերի բազմազանության հետ, ապա ավելի ևս պարզ է լինում, որ ծաղկափոշիների խառնուրդով փոշոտելիս բեղմնավորման պրոցեսին այս կամ այն չափով մասնակցել են և՛ Միկադո, և՛ Գրուշևիդնի սորտերի ծաղկափոշիները։



Նկ. 3. Վերևում (ձախից աջ)՝ ծնողական Անահիտ և Գրուշևիդնի սորտերի ողկույզները:
Ներքևում՝ հիբրիդից վերցված ողկույզ, որը նմանվում է Գրուշևիդնի սորտին, իսկ պտուղները միջանկյալ ձևի են:

Ծաղկափոշիների խառնուրդով փոշոտումից ստացված սերունդն ավելի հզոր է, քան մեկական հայրերի ծաղկափոշիներով փոշոտելուց ստացված սերունդը և ծնողական ձևերը։ Այսպես, օրինակ՝ ♀ Անահիտ × ♂ (Միկադո + Գրուշևիդնի) կոմբինացիայից ստացված հիբրիդային բույսերը պտղաբեր ճյուղերի քանակությամբ և պտղակալման տոկոսով 2 անգամ գերազանցում են մեկական հայրերի ծաղկափոշիներով փոշոտելուց

ստացված հիբրիդային բույսերին։ Բույսերի փարթամության և պտղակալման տեսակի այսպիսի բարձրացումը կարևոր նշանակություն ունի բերքատու սորտերի ստացման ժամանակ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ծաղկափոշիների խառնուրդով փոշոտելու դեպքում բեղմնավորման պրոցեսին մասնակցում են և՛ Միկադո, և՛ Գրուշևիդնի սորտերի փոշեհատիկները։

2. Ծաղկափոշիների խառնուրդի ազդեցությունը և ստացված բույսերի բազմազանությունը հնարավոր է դիտել հիբրիդային առաջին սերնդից սկսած։

3. 2 սորտի ծաղկափոշիների խառնուրդով փոշոտված բույսերից ստացված հիբրիդային սերունդը լինում է ավելի հզոր, քան մեկ սորտի ծաղկափոշով փոշոտելուց ստացված հիբրիդային բույսերը։

4. Ծաղկափոշիների խառնուրդը կարող է օգտագործվել սելեկցիոն նպատակների համար, բարձր բերքատվությամբ սորտերի ստացման ժամանակ։

Գենետիկայի և դարվինիզմի ամբիոն

С. П. СЕМИРДЖЯН

НАСЛЕДОВАНИЕ ПРИЗНАКОВ ДВУХ ОТЦОВ В ПЕРВОМ ГИБРИДНОМ ПОКОЛЕНИИ ТОМАТА, ПРИ ОПЫЛЕНИИ СМЕСЬЮ ПЫЛЬЦЫ

РЕЗЮМЕ

Опыты проводились на экспериментальной базе Института генетики и селекции растений АН Арм. ССР под руководством доктора биологических наук профессора Г. Г. Батикяна в 1952 г. на сортах томата Ананд, Микадо и Грушевидный.

Цель опытов заключалась в том, чтобы путем опыления смесью пыльцы томата и изучением гибридного поколения выявить наличие полиспермии у растений.

Экспериментальные результаты, приведенные нами в таблице 1, и рисунки показывают, что:

1. В процессе оплодотворения, при опылении смесью пыльцы, участвует как пыльца сорта Микадо, так и Грушевидного, вследствие чего у гибридного поколения выявились одновременно признаки двух отцов.

2. Выявление признаков двух отцовских форм при опылении смесью пыльцы можно наблюдать в первом гибридном поколении, что опровергает взгляд менделистов-морганистов по этому вопросу.

3. Гибридное поколение, полученное от опыления смесью пыльцы, вдвое мощнее, чем поколение, полученное от опыления пыльцой одного сорта. Так, например, в первом случае процент завязывания плодов вдвое выше, чем во втором.

4. Метод опыления смесью пыльцы может быть применен в селекционных работах для получения высокопродуктивных сортов.

Кафедра генетики и дарвинизма

Հ. Հ. ՏՈՆԱԿԱՆՅԱՆ ԵՎ Ա. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՇՐՋԱՆԻ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՄԱՍՈՒՄ ԾԱՌԱԹՓՈՒՏԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐ

(Նախնական հաղորդում)

*Մեր երկրի բնության վերափոխման համար կատարվող աշխատանքներում ծառա-թփուտային տարբեր բնույթի տնկարքների (*насаждения*) ստեղծումը, ինչպես հայտնի է, հիմնական օղակներից մեկն է։ Սրանց դերն ու նշանակությունը շատ մեծ է՝ տաք ու չոր օդային հոսանքների թուլացման և ընդհանրապես կլիմայական պայմանների մեղմացման միջոցով բարձր ու կայուն բերք ստանալու գործում։ Այս տեսակետից էլ արհեստական անտառատնկումների և դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումն առանձնահատուկ նշանակություն ունի մեր ռեսպուբլիկայի, մանավանդ նրա կենտրոնական մասի շատ շրջանների համար, որոնք համարյա զուրկ են բնական անտառային բուսականությունից։ Այդպիսի շրջանների թվին է պատկանում և՛ Կոտայքի շրջանը։ Եթե վերջինիս ցածրադիր մասերում անտառաշերտերի ստեղծման համար նպաստավոր պայմաններից մեկը պետք է համարել ոռոգման լայն հնարավորությունների առկայությունը, ապա դրանցից ցավոք սրտի զուրկ են նրա բարձրադիր մասերը, որտեղ գտնվում են Զառ, Զովաշեն, Կապուտան, Սևաբերդ, Քանքան և մասամբ Հրազդան գյուղերի կոլտնտեսությունների դաշտերը։ Բնական է, որ այստեղ անտառաշերտերի ստեղծման գործն առա-*

ջին պլանի վրա է դնում այնպիսի ծառաթփուտային բույսերի ընտրումը, որոնք կկարողանան աճել անջրդի պայմաններում։

Վերադաս օրգանների կողմից այս ուղղությամբ առաջադրված խնդիրների իրագործմանը գործոն մասնակցություն ունենալու ձգտումով 1949 թվականին ձեռնամուխ եղանք նշված վայրերում դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման համար պիտանի ծառա-թփուտային բույսերի փորձարկման աշխատանքներին։

Փորձարկման աշխատանքների համար իբրև հենակետ ընտրեցինք Ջառ գյուղը և նրա դաշտերը, որոնք իրենց ֆիզիկո-աշխարհագրական պայմաններով բնորոշ են հիշյալ գյուղերի դաշտերի համար։

Այս գյուղերի դաշտերը, որ ընկած են Հադիս լեռան և Գեղամա լեռների հիմնական զանգվածի արևմտյան սարալանջերի ստորոտներին, ծովի մակերևույթից 1750-ից մինչև 2000 մետր բարձրության վրա են գտնվում։ Իբրև լեռնա-տափաստանային գոտու վայրեր, դրանց կլիմայական պայմանները բավական կոնտինենտալ են։ Մթնոլորտային տեղումների ոչ-մեծ քանակը տարվա ընթացքում բաշխվում է խիստ անհամաչափ ձևով. մինիմումն ընկնում է ամառվա ամիսներին։ Ջերմական ռեժիմը ևս համապատասխան արտահայտություն ունի. ամառային ամիսներին շոգ է լինում, իսկ ձմեռը ջերմաստիճանն ընկնում է զգալի չափով։ Ջերմական ռեժիմի նման բնույթն ամռան ընթացքում սաստկանում է հարավ-արևմուտքից փչող չոր ու տաք քամիների պատճառով, որոնք հավանորեն իրանական այսպիսի հոսանքների շրջանցող ճյուղեր են ներկայացնում։ Նկարագրվող վայրի ռելյեֆն իր ստորին մասերում բավական զառիթափ լանջեր ունի, որոնք իրենց միջին ու վերին մասերում ընդունում են ավելի ալիքանման բնույթ. այստեղ շատ հաճախ կարելի է պատահել համարյա հարթ կամ թեթև գոգավոր տարածությունների։

Հողային ծածկոցը զառիթափ լանջերի վրա մեծ մասամբ դելյուվիալ բնույթի է, իսկ տերիտորիայի ալիքանման ռելյեֆ ունեցող մասերը, որոնք ըստ իրենց ռնած տարածության գերակշռող են, սկզբում մուգ-շագանակագույն են, ապա վերև բարձրանալով փոխվում են թույլ ալաղերծված լեռնային սևահողերի։ Ինչպես վերջինները, այնպես էլ մուգ-շագանակագույն հողերը բավական հզոր են, որն անշուշտ նպաստավոր մոմենտ է բույսերի, մանավանդ խոր թափանցող արմատներ ունեցող ծառա-թփուտային տեսակների աճման համար։

Նկարագրվող վայրի բուսականությունն արտահայտում է լեռնատափաստանային գոտու հողա-կլիմայական պայմանների բնորոշ ազդեցությունը։ Էֆեմերային բույսերը հուլիսի սկզբներին հիմնականում արդեն ավարտում են իրենց վեգետացիան, իսկ բազմամյա քսերոֆիտները ամառվա ավելի շոգ ու չոր ժամանակ (հուլիսի կեսերից) նույնպես զգալի չափով խանձվում են՝ ընդունելով լեռնային տափաստանի ամառային շատ տիպիկ ասպեկտ։

Վեգետացիոն ժամանակամիջոցն այս վայրերում սկսվում է ապրիլի կեսերից և տևում մինչև հոկտեմբերի երկրորդ տասնօրյակը՝ տատանվելով 175-ից մինչև 190 օրվա միջև։

* * *

Ծառա-թփուտային բույսերի փորձարկումը մեր կողմից հիմնականում կատարվել է մինչև այժմ լայնորեն կիրառվող մեթոդով, այսինքն՝ սերմերից տնկարանում աճեցված ու նրանցից ավելի բարձր կենսունակությամբ 1—2 տարեկան տնկիները աճման մշտական տեղերը վերատնկելու (տեղափոխելու) միջոցով։ Այս կապակցությամբ 1949 թվականին հիմնվեց տնկարան 1 հեկտար տարածությամբ։ Ինչպես տնկարանում եղած, այնպես և հետագայում դաշտ տեղափոխված տնկիների նկատմամբ սիստեմատիկորեն կատարվել է աճման դեկադային չափումներ ու դիտողություններ։ Փորձարկման այս եղանակին զուգընթաց նախատեսվել է ցանք կատարել նաև անմիջականորեն բույսերի աճման մշտական տեղերում՝ դաշտում, սակայն բավարար քանակությամբ սերմեր չունենալու պատճառով մեզ առայժմ հաջողվել է դաշտում միայն կաղնու բնացանք կատարել՝ ոչ մեծ տարածության վրա։ Փորձարկման համար ծառա-թփուտային ասորտիմենտի մշակման ժամանակ հիմնականում ընտրել ենք տեղական անտառային ծառային ու թփուտային տեսակներ ու վայրի պտղատուներ, որոնք, մեր կարծիքով, իրենց էկոլոգիական բնույթով պետք է որ ավելի շատ համապատասխանեն մեզ հետաքրքրող վայրի էկոլոգիական պայմաններին։ Սակայն դրանց հետ մեկտեղ փորձարկման բույսերի ասորտիմենտի մեջ մտցվել է նաև օտարերկրյա ծագում ունեցող, սակայն մեր պայմաններում բավական ակլիմատիզացիայի ենթարկված ու մեծ տարածում ստացած մի քանի պուրակային ծառատեսակներ, այլև մշակովի պտղատուներ։ Փորձարկման ասորտիմենտի մեջ մտել են հետևյալ բուսատեսակները՝

Կաղնի ամառային (Quercus robur L.)	սերմերը	հավաքվել են	Բուսաբանական այգում
Կաղնի լեռնային (Quercus macranthera F. et M.)	»	»	Ապարանի շրջանում
Ծփի (Ulmus suberosa Moench.)	»	»	Քանաքեռում
Հացենի տեղական (Fraxinus oxycarpa W.)	»	»	Արզնու շրջակայքում
Հացենի ամերիկյան (Fraxinus americana L.)	»	»	Բուսաբանական այգում
Թխկի ամերիկյան (Acer negundo L.)	»	»	» »
Ակացիա սպիտակ (Robinia pseudoacacia L.)	»	»	» »
Գլեդիչիա (Gleditsia triacanthos L.)	»	»	» »
Սզնի (Crataegus Meyeri A. Pojark.)	»	»	Գառնու շրջակայքում
Մասրենի (Rosa sp.)	»	»	Ջառ գյուղի շրջակայք.
Խնձորենի վայրի (Malus orientalis Uglitzkich)	»	»	Գառնու շրջակայքում
Տանձենի վայրի (Pyrus sp.)	»	»	» »
Սալորենի վայրի (Prunus divaricata Ldb.)	»	»	» »
Կեռասենի վայրի (Cerasus mahaleb (L.) Mill.)	»	»	Արզնու շրջակայքում
Ծիրանի մշակովի (Armeniaca vulgaris Lam.)	»	»	Երևանում

Փորձարկվող ծառա-թփուտային տեսակների առաջին ցանքը տնկարանում կատարվել է 1949 թվականի գարնանը, ապա և աշնանը։ Ցանք կատարվել է և հետագա 1950, 1951 և 1952 թվականներին՝ արդեն ցանված բուսատեսակի ցանքի լրացման համար, կամ ցանվել է առաջին անգամ՝ ասորտիմենտի հարստացման նպատակով։

Տնկարանում սերմերից աճեցվող բույսերը դաշտ տեղափոխելու տեսակետից անհրաժեշտ էր նախնական կողմնորոշում ունենալ, թե ո՛ր բուսատեսակներն են հույս ներշնչում դաշտի պայմաններում նրանց փորձարկումը շարունակելու համար։ Այս նկատառումով է, որ սիստեմատիկ կերպով կատարվել է նրանց ընդհանուր կենսականությունն արտահայտող աճման դեկադային չափումներ ու դիտողություններ, որոնք ամփոփված են ստորև բերված աղյուսակում (տե՛ս աղյուսակ 1)։

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, տնկարանում աճեցված տարբեր բուսատեսակները հանդես են բերել կենսականության, մասնավորապես նրա ցուցանիշներից մեկի՝ աճի (прирост) *տարբերվող տվյալներ։ Սա միանգամայն բնական է, քանի որ դրանք բխում են նրանց տեսակային բնույթի տարբերություններից։ Ինչ վերաբերում է նույն տեսակի, բայց տարբեր թվականների ցանքից ստացված բույսերի աճի տարբերություններին, ապա դա պետք է բացատրել կլիմայական պայմանների և առաջին հերթին, մթնոլորտային տեղումների, ինչպես էլ ցանքի ու այլ աշխատանքների տարբերություններով, որոնք անշուշտ տեղի ունեցել են և իրենց ազդեցությունները թողել բույսերի գոյավիճակի վրա։ Նման երևույթը ցայտուն կերպով երևում է սպիտակ ակացիայի 1949, 1950 և 1951 թվականների գարնան ու վայրի խնձորենու 1949 և 1951 թվականների աշնան ցանքից աճեցված բույսերը համեմատելիս։*

Աղյուսակում բերված բուսատեսակներից իրենց դրական ցուցանիշներով աչքի են ընկնում ծփին, ամերիկյան թխկին, տեղական հացենին, սպիտակ ակացիան, գլեդիչիան և 1949 թվականի ցանքի վայրի խնձորենին։ Բավական գոհացուցիչ արդյունքներ է տվել այնպիսի դանդաղաճ տեսակը, ինչպես լեռնային կաղնին է, մասամբ և վայրի սալորենին։ Միջակ ձևով են իրենց դրսևորել ամառային կաղնին, ամերիկյան հացենին։ Միանգամայն անբավարար ցուցանիշներ ունեն վայրի տանձենին ու սզնին։

Աղյուսակ 1

ՏՆԿԱՐԱՆՈՒՄ ԱՃԵՑՎՈՂ ԲՈՒՅՍԵՐԻ ԴԵԿԱԴԱՅԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

№ №	Բույսերի անունները	Ցանքի ժամանակը	Որ թվականների միջին տվյալներն են	Աճի տատանում դեկադի ընթացք. սմ-ով	Դեկադի միջին աճը սմ-ով	Աճը վեգետացիայի ընթացք. սմ-ով	Տերևավորում	Վարակվածությունը հիվանդ.	Վարակվածությունը գ. ա վնասատ.	Ե՞րբ է աճը կանգ առել	Ընդհանուր կենսականությունը
1.	Կաղնի ամառային	1949 թ. գար.	1950—51—52	1 6	1,8	33	լավ	—	—	5 10	միջակ
2.	Կաղնի լեռնային	1949 թ. աշն.	1950—51—52	1 4	1,9	34	լավ	—	—	5 10	լավ
3.	Կաղնի լեռնային	1950 թ. գար.	1950—51—52	1—5	2,1	37	լավ	—	—	5 10	լավ
4.	Ծփի	1949 թ. գար.	1950—51—52	3 11	4,1	70	շատ լավ	—	—	30 9	լավ
5.	Ծփի	1950 թ. գար.	1950—51—52	2 12	4,1	74	շատ լավ	—	—	30 9	լավ
6.	Թխկի ամերիկյան	1949 թ. գար.	1950	2 41	10,8	195	շատ լավ	—	—	10 9	շատ լավ
7.	Թխկի ամերիկյան	1950 թ. գար.	1950—51—52	5 11	5,5	93	լավ	—	—	30 9	լավ
8.	Հացենի տեղական	1949 թ. գար.	1950—51—52	2 11	4,1	75	լավ	—	—	30 9	լավ
9.	Հացենի ամերիկյան	1951 թ. գար.	1951—52	1 10	3,3	51	միջակ	—	—*	30 9	միջակ
10.	Ակացիա սպիտակ	1949 թ. գար.	1950—51—52	2 32	9,0	118	շատ լավ	—	—	20 10	շատ լավ
11.	Ակացիա սպիտակ	1950 թ. գար.	1950—51—52	2 20	6,5	105	լավ	—	—	20 10	շատ լավ
12.	Ակացիա սպիտակ	1951 թ. գար.	1951—52	1 10	3,9	58	վատ	—	—	10 10	վատ
13.	Գլեդիչիա	1949 թ. գար.	1950—51—52	3 19	6,6	112	լավ	—	—	10 10	շատ լավ
14.	Խնձորենի վայրի	1949 թ. աշն.	1950—51—52	2 11	3,3	55	լավ	—	—	10 10	շատ լավ
15.	Խնձորենի վայրի	1951 թ. աշն.	1952	1	0,9	14	միջակ	—	—	20 9	վատ
16.	Տանձենի վայրի	1951 թ. աշն.	1952	0 1	0,5	8	վատ	—	—	10 9	վատ
17.	Սալորենի վայրի	1951 թ. աշն.	1952	1 3	1,6	25	լավ	—	—	10 10	լավ
18.	Սզնի	1951 թ. աշն.	1952	0 1	0,5	8	վատ	—	—	10 9	վատ
19.	Ծիրանի մշակովի	1949 թ. աշն.	1950—51—52	1 15	1,6	83	լավ	—	—	30 9	լավ
20.	Ծիրանի մշակովի	1951 թ. աշն.	1952	2 8	1,1	62	լավ	—	—	10 10	լավ

* Վարակված են սարդային տիզով։

Մեր կողմից տրվող այսպիսի որակումը հետաքրքրական է, եթե աղյուսակում բերված բուսատեսակներից մի քանիսն իրենց աճման տվյալներով համեմատության մեջ դնենք Երևան քաղաքում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բուսաբանական այգում և նրա Սևանի բաժանմունքում աճեցված նույն տեսակների կամ սրանց մոտ տեսակների աճման տվյալների հետ։

Աղյուսակ 2

ՏԱՐԲԵՐ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՃԵՑՎԱԾ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՃԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Բույսերի անունները \ Փորձարկման վայրը	Տարեկան աճը սմ-ով			
	Երևան քաղաքում	Բուսաբանական այգում	Բուսաբանական այգու Սևանի բաժանմունքում	Ջառ գյուղում
Կաղնի ամառային	50—60	25	—	33
Կաղնի լեռնային	—	12—15	—	33—37
Ծփի[1]	50—80	—	—	70—74
Թխկի ամերիկյան	80—90	—	12	93—195
Հացենի տեղական	60—80	—	—	75
Հացենի ամերիկյան	60—80	—	7,6	51
Խնձորենի վայրի[1]	—	30—50	16	58
Սալորենի վայրի	—	20—33	—	25

Ամենից առաջ պետք է նկատել, որ Բուսաբանական այգու Սևանի բաժանմունքում աճեցված բույսերի խիստ ցածր ցուցանիշները, որոնք, ինչպես հետազոտողը ճիշտ նկատել է, հետևանք են Սևանի վեգետացիոն ժամանակամիջոցի զգալի կարճատևության ու ջերմության անհրաժեշտ քանակի բացակայության, ոչ մի համեմատության մեջ դրվել չեն կարող աղյուսակում ցույց տրված մյուս վայրերի տվյալների հետ։

Ինչ վերաբերում է մեր (Ջառ գյուղի) և Երևան քաղաքի ու Բուսաբանական այգու տվյալների համեմատությանը, ապա, ինչպես բերված թվերն են ցույց տալիս, Ջառ գյուղի տվյալները մոտավորապես հավասար են կամ նույնիսկ գերազանցում են մյուս երկու վայրերի տվյալներից, բացառությամբ ամառային կաղնու և ամերիկյան հացենու, որոնք մեզ մոտ իրենց ավելի վատ են ցույց տվել։ Այս երևույթը անհրաժեշտ է բացատրել նրանց զգալի

[1] Այլ, բայց մոտ տեսակներ։

ընկճումով՝ խոնավության (ոռոգման) պակասության դեպքում, ինչպես այդ մասին ամերիկյան հացենու նկատմամբ նշում են և Ղազարյանն ու Յարոշենկոն (2)։ Այս տեսակի, ինչպես նաև սպիտակ ակացիայի 1951 թվականի ցանքի բույսերի ոչ այնքան բավարար աճը հավանորեն պետք է բացատրել նաև այն բանով, որ նրանք սարդային տիզ կոչվող վնասատուով վարակված են եղել։

Մեր № 2 աղյուսակում բերված վայրերում փորձարկվող տեսակների բույսերի աճման ցուցանիշների համեմատության եզրակացությունն ավելի ամբողջական կլինի, եթե մենք հաշվի առնենք նաև նրանց (վայրերի) վեգետացիոն ժամանակամիջոցների միջին տևողությունը։ Վերջինս Երևան քաղաքում հավասար է 280 օրվա, Բուսաբանական այգում՝ 260 օրվան, իսկ Ջառ գյուղում՝ 185 օրվան։ Այս հանգամանքը հասկանալի պատճառով խոսում է վերջինիս օգտին, այսինքն՝ չնայած Ջառ գյուղի ավելի կարճատև վեգետացիային, այստեղ փորձարկվող բույսերի մեծ մասի տարեկան աճին հավասար կամ նույնիսկ գերազանցող ցուցանիշներ են ստացվել։

Հաշվի առնելով տնկարանում աճեցված տարբեր բուսատեսակների ցուցաբերած առանձնահատկությունները, նրանցից ծփու, տեղական հացենու, ամերիկյան թխկու 1949 թվականի աշնան ցանքի վայրի խնձորենու և մշակովի ծիրանու $1\frac{1}{2}$—2 տարեկան տնկիները տեղափոխվել են ապագա անտառաշերտերի համար նախատեսված վայրը, այնտեղ նրանց հետագա փորձարկումը դաշտի՝ անջրդի պայմաններում շարունակելու նպատակով։

Չնայած սպիտակ ակացիայի և գլեդիչիայի աճման և ընդհանրապես կենսականության դրական ցուցանիշներին, դրանք դաշտ չկարողացանք տեղափոխել։ Այդ բացը մենք լրացնելու ենք առաջիկա աշխատանքների ընթացքում։

* * *

Դաշտում 1950 թվականի վեգետացիոն ժամանակամիջոցի ընթացքում դիտողություններ կատարվել են միայն լեռնային կաղնու նկատմամբ, որն այդ թվականի գարնանը բնացանքի եղանակով այնտեղ ցանել ենք Ապարանի շրջանից բերված և արհեստական ստրատիֆիկացիայի ենթարկված ու միկորիզայով վարակված սերմերով։ Ցանքի համար պատրաստվել են 6—7 սմ խորության փոսիկներ (ЛУНКИ), որոնց յուրաքանչյուրի մեջ դրվել է 7-ական սերմ։ Սերմերի մեծ մասը ծլել էր մայիսի վերջերին։ Ցանքը կատարվել էր

կործգանի հողամասում, սա անշուշտ իր դրական նշանակությունն ունեցել է լեռնատափաստանային մոլախոտերի խեղդող ազդեցությունը չեզոքացնելու, ինչպես նաև սկզբի շրջանում մատղ ծիլերը արևի կիզիչ ճառագայթներից ու քամու չորացնող ազդեցությունից պաշտպանելու տեսակետից։ Չնայած այս բոլորին, կաղնու բուսատները ծլելով, 1950 թվականի վեգետացիայի ընթացքում հանդես չբերին աճման բավարար ցուցանիշներ։ Այսպես՝ բուսատների աճը տասնօրյակի ընթացքում տատանվել է միայն 0,5 սմ մինչև 2 սմ միջև, իսկ դեկադային միջին աճը կազմել է 1 սմ. աճը ողջ վեգետացիայի ընթացքում հասել է միայն 12 սմ-ի, որ հավասար է Բուսաբանական այգում աճեցվող նույն տեսակի տարեկան աճին։

Ինչպես արդեն նշել ենք, տնկարանում աճեցված ու իրենց ընդհանուր կենսականությամբ աչքի ընկնող բուսատեսակներից՝ ծփու, տեղական հացենու և ամերիկյան թխկու 1949 թվականի գարնան ու վայրի խնձորենու և մշակովի ծիրանու նույն թվականի աշնան ցանքի $1^1/_2$—2 տարեկան տնկիները 1951 թվականի գարնանը տեղափոխվել (վերատնկվել) են դաշտ, որոնց, ինչպես նաև նախընթաց տարվա գարնանը բնացանքով աճեցված կաղնու բուսատների նկատմամբ այդ տարվա ամբողջ վեգետացիոն ժամանակամիջոցում կատարվել են աճի դեկադային չափումներ ու դիտողություններ, որ ցույց են տրված ստորև բերվող աղյուսակում (տե՛ս աղյուսակ № 3)։

Աղյուսակ 3

ԴԱՇՏ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԵՎ ԱՅՆՏԵՂ ԱՃԵՑՎՈՂ ԲՈՒՅՍԵՐԻ 1951 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿԱԴԱՅԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Բույսերի անունները	Վերատնկման տարին	Աճման տատանումները դեկադում սմ-ով	Միջին աճը դեկադում սմ-ով	Աճը վեգետացիայի ընթացքում սմ-ով	Տերևավորում	Վարակվածությունը հիվանդութ.	Վարակվածությունը գ/ս վնասատուներ	Ընդհանուր կենսականությունը
Կաղնի լեռնային[1]	1950	1—3	1,4	15	միջակ	—	—	միջակ
Ծփի	1951	2—5	2,0	25	լավ	—	—	լավ
Հացենի տեղական	1951	2—4	1,5	18	միջակ		—	միջակ
Թխկի ամերիկյան	1951	2—6	2,9	31	լավ	—	—	լավ
Խնձորենի վայրի	1951	1—3	2,0	25	միջակ	—	—	լավ
Ծիրանի մշակովի	1951	2—5	2,3	28	լավ	—	—	լավ

[1] Աճեցում բնացանքով՝ տեղում։

1951 թվականի վեգետացիայի ընթացքում վերատնկված տնկիների ընդհանուր կենսականությունը՝ տերևավորումը, տերևների չափսերն ու գույնը, հիվանդություններով ու գյուղատնտեսական վնասատուներով վարակված չլինելը և այլն, բավական դրական է եղել, չնայած որ աճը, ինչպես ցույց են տալիս № 3 աղյուսակի տվյալները, այնքան էլ բավարար չէ։ Այս երևույթը հավանորեն պետք է բացատրել տնկիների խիստ երիտասարդությամբ ու նոր միջավայրին, այն էլ անջրդի պայմաններում, դեռևս լիովին հարմարված չլինելով (որի մասին տե՛ս հաջորդ տարվա դիտողությունները)։ Ինչ վերաբերում է կաղնուն, ապա դա իր երկրորդ վեգետացիայի ընթացքում դարձյալ վատ էր զգում իրեն։ Դա արդեն զգալի չափով պետք է բացատրել այն բանով, որ արածող անասունները տրորել էին, այն էլ ոչ մեկ անգամ։

Հաջորդ, 1952 թվականին, տնկարանից նոր տնկիներ դաշտ չեն փոխադրվել, ուստի աճի դեկադային չափումներ ու դիտողություններ շարունակվել են կատարվել դարձյալ նախընթաց տարում վերատնկված տնկիների նկատմամբ։ Վերջիններիս 1952 թվականի աճի դեկադային չափումների ու դիտողությունների տվյալները, ինչպես և վերևում հիշատակված մյուս վայրերի

Աղյուսակ 4

ԴԱՇՏ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԵՎ ԱՅՆՏԵՂ ԱՃԵՑՎՈՂ ԲՈՒՅՍԵՐԻ 1952 Թ. ԴԵԿԱԴԱՅԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Բույսերի անունները	Վերատնկման տարին	Աճման տատանումները դեկադում սմ-ով	Միջին աճը դեկադում սմ-ով	Աճը վեգետացիայի ընթ. սմ-ով	Տերևավորում	Վարակվածութ. հիվանդ.	Վարակված. գ. տ. վնասատուն.	Ընդհանուր կենսականությունը	Աճը վեգետաց. ընթ. Երևան քաղաք. սմ-ով	Աճը վեգ. ընթ. բուն. տեղ. սմ-ով
Կաղնի լեռնային[1]	1950	1—3	0,8	11	վատ	—	—	վատ	—	12—15
Ծփի	1931	2—9	5,0	69	շ. լավ	—	—	շ. լավ	50—80	—
Հացենի տեղակ.	1951	2—10	4,0	64	լավ	—	—	շ. լավ	60—80	—
Թխկի ամերիկ.	1951	4—8	6,0	72	շ. լավ	—	—	շ. լավ	80—90	—
Խնձոր. վայրի	1951	2—6	3.1	37	լավ	—	—	լավ	—	30—50
Ծիրանի մշակ.	1951	3—6	3,5	42	լավ	—	—	լավ	—	—

1 Աճեցված բնացանքով՝ տեղում։

տվյալները համեմատության կարգով բերված են № 4 աղյուսակում (տե՛ս աղյուսակը)։

1952 թվականի վեգետացիայի ընթացքում կատարված ու № 4 աղյուսակում բերված աճի դեկադային չափումներն ու դիտողությունները ակնառու կերպով ցույց են տալիս, որ տնկարանում աճեցված և դաշտ տեղափոխված (վերատնկված) համարյա բոլոր բուսատեսակների տնկիներն էլ ցույց են տվել աճման ու ընդհանուր կենսականության դրական հատկություններ։

Եթե համեմատելու լինենք նույն բուսատեսակների տնկիների 1951 և 1952 թվականների թեկուզ միայն աճման ցուցանիշները, պարզվում է, որ դրանք բոլորն էլ դաշտային անջրդի պայմաններում իրենց երկրորդ վեգետացիոն ժամանակամիջոցի ընթացքում (1952 թվականին) նախորդ վեգետացիոն ժամանակամիջոցի (1951 թվականի) համեմատությամբ տվել են աճի բարձրացում՝ ծփին—176%, տեղական հացենին—255%, ամերիկյան թխկին—132%, վայրի խնձորենին—48% և մշակովի ծիրանին—50%, այսինքն՝ գերազանցումն արտահայտվել է կեսից մինչև երկու և կես անգամով։

Այս երևույթը ցույց է տալիս, թե մատղաշ բույսերն ու տնկիներն ինչքան շատ են ազդվում արտաքին միջավայրի անբարենպաստ պայմաններից, սակայն դրանցում դաստիարակվելով՝ համապատասխան ձևով հարմարվում են ու կազմակերպում իրենց օրգանները և դրանով իսկ աստիճանաբար ավելի ու ավելի լավ օգտագործում դրանք։ Այս իսկ տեսակետից մեծ նշանակություն ունի աճեցվող բույսերի խնամքի ու մանավանդ նրանց պաշտպանության գործի արմատական, հատկապես մատղաշ հասակում։ Վերջինիս անբավարար վիճակով պետք է բացատրել մեր աճեցված բազմաթիվ տնկիների զգալի մասի ոչնչանալը և բնացանքով աճեցված կաղնու բույսերի նախ խիստ ընկճված լինելն ու ապա նրանցից շատերի չորանալը։ Մեր կատարած ուսումնասիրությունների նախնական արդյունքները խոսում են այն մասին, որ լեռնատափաստանային գոտու սկզբում նկարագրված վայրի թեկուզ ոչ այնքան նպաստավոր՝ անջրդի այս պայմաններում մի քանի ծառատեսակներ՝ ծփին, տեղական հացենին, ամերիկյան թխկին, վայրի խնձորենին իրենց աճեցողությամբ համարյա ետ չեն մնում Երևան քաղաքի կամ Բուսաբանական այգու

պայմաններում նույն ծառատեսակների աճեցողությունից, որտեղ կիրառվում է դրանց ռռոգումը։

Այս իսկ տեսակետից կարծում ենք, որ դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման համար պիտանի ծառա-թփուտային տեսակների փորձարկման աշխատանքների շարունակումը և առաջիկայում խիստ անհրաժեշտ է, որը հնարավորություն կտա ճշտելու ևս մի շարք այլ տեսակներ՝ այդպիսի կարևոր գործի համար։

Բույսերի մորֆոլոգիայի ու սիստեմատիկայի ամբիոն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Казарян Е. С. и Авакян А. К.—Результаты испытания некоторых древесных пород в условиях Ереванского ботанического сада. Бюллетень Ботанического сада АрмФАН, № 3, Ереван, 1941.
2. Казарян Е. С. и Ярошенко Г. Д.—Ассортимент пород для садово-паркового строительства Еревана. Бюллетень Ботанического сада Академии наук Армянской ССР, № 4, Ереван, 1946.
3. Чубарян Т. Г.—Севанское отделение Ботанического сада. Бюллетень Ботанического сада Академии наук Армянской ССР, № 7, Ереван, 1949
4. Ярошенко Г. Д. и Таирян Н. А.—Результаты опытов интродукции некоторых древесных и кустарниковых пород в Ботаническом саду. Бюллетень Ботанического сада Академии наук Армянской ССР, № 5, Ереван, 1948.

Г. А. ТОНАКАНЯН и А. А. САРКИСЯН

НЕКОТОРЫЕ ДАННЫЕ ПО ИСПЫТАНИЮ ДРЕВЕСНО-КУСТАРНИКОВЫХ РАСТЕНИЙ В ВЫСОКОРАСПОЛОЖЕННОЙ ЧАСТИ КОТАЙКСКОГО РАЙОНА

(ПРЕДВАРИТЕЛЬНОЕ СООБЩЕНИЕ)

РЕЗЮМЕ

В настоящей статье приводятся данные предварительных результатов испытания некоторых древесно-кустарниковых растений с целью их внедрения в создаваемые полезащитные лесные насаждения для высокорасположенной части Котайкского района.

Опыты показали, что многие древесные породы в питомнике, а некоторые и после их высадки в поле села Зар, в неполивных условиях проявили хорошую жизненность, в частности — прирост за вегетационный период. В числе последних — вяз, ясень обыкновенный (местный), клен американский и яблоня дикорастущая, которые после окончательного испытания будут рекомендованы производству.

Кафедра морфологии и систематики растений

Е. С. АРУТЮНЯН

О РАСПРОСТРАНЕНИИ МУЧНИСТОЙ РОСЫ ДУБА В ЛЕСАХ ЮЖНОЙ АРМЕНИИ

Леса южной Армении (Зангезур), расположенные в Горисском, Кафанском и Мегринском районах, состоят в основном из дуба; до высот приблизительно 1300 м преобладают леса из грузинского дуба, выше сменяющиеся дубом восточным, который доходит до высоты 2400 м. В нижней зоне наряду с грузинским дубом встречаются более или менее изреженные насаждения (не образующие сомкнутого полога) из араксинского дуба. Последние преимущественно представлены зарослями порослевого происхождения. В них дуб обычно достигает размеров крупного кустарника или небольшого деревца с искривленным стволом.

Вредная микофлора дубрав южной Армении характеризуется значительным распространением наряду с гименомицетами также и мучнисто-росяных грибов. Относительное участие мучнисто-росяных в лесной микофлоре Зангезура значительно больше, чем в северной Армении. Сильное развитие мучнистой росы в Зангезуре связано со сравнительной ксерофитностью этой группы грибов, находящей здесь более благоприятные, чем в северной Армении, условия для своего развития.

Вред, наносимый мучнистой росой дубовым насаждениям, весьма значителен, поэтому нами во время работ по фитопатологическому обследованию дубовых лесов Зангезура было обращено особое внимание на это заболевание.

Болезнь дуба, известная под названием мучнистой росы, вызывается грибом Microsphaera alphitoides Gr. et Maubl.

Как известно, при заражении указанным грибом на поверхности пораженных органов — листьях, молодых побегах — появляется характерный белый, вначале паутинистый, затем мучнистый налет, состоящий из мицелия, на котором в течение лета образуются конидиеносцы с конидиями, а уже к осени на этой же грибнице закладываются органы полового спороношения—сумки со спорами. Последние находятся в особых плодовых тельцах- клейстокарпиях, имеющих вид черных точек на белом фоне грибницы.

Гриб, поселяясь на листьях или молодых побегах дуба, начинает питаться за счет содержимого их клеток, являясь, таким образом, вредным паразитом.

Более подробные сведения о степени вредоносности этого паразита мы находим у В. Ф. Купревича (1939), который считает, что в зараженных мучнистой росой листьях дуба содержание хлорофилла снижается до 45%; в результате значительно ослабевает энергия фотосинтеза, усиливается дыхание растения (выделение CO_2), снижается интенсивность транспирации."

Целый ряд работ (А. А. Ячевского, 1910, 1927; А. Н. Бухгейма, 1928; В. Ф Купревича, 1939; К. П. Алявдиной, 1941; А. А. Власова, 1951 и ряд др.), посвященных изучению этой болезни и мерам борьбы с ней, касается, к сожалению, только Европейской части СССР, между тем гриб, появившийся на заре настоящего столетия на территории СССР, быстро распространился и охватил как Европейскую часть СССР, так и территорию Кавказа. Работы же, касающиеся изучения этой болезни на Кавказе, где условия ее развития совершенно иные, весьма малочисленны, и, безусловно, этот вопрос здесь требует специального исследования.

Наши наблюдения, проведенные в течение 3 лет в Кафанском лесхозе (1949, 1951 и 1952 гг.) совместно с экспедициями Ботанического института и Сектора защиты растений АН Арм. ССР, показали, что мучнистая роса дуба является бичом зангезурских лесов. Зараженность дубрав Зангезура мучнистой росой носит эпидемический характер.

Маршрутное обследование дало возможность выявить очаги, особенно сильно зараженные. Такими оказались 15, 16, 35, 47-й кварталы Кафанского лесничества с общей площадью около 2000 га, 3, 11, 13-й кварталы Бартасского лесничества общей площадью 1000 га. Особенно же сильное распространение мучнистой росы наблюдалось на южных склонах, что, повидимому, как нами уже указывалось, связано с теплолюбивой природой данного представителя группы мучнисто-росяных.

По нашим наблюдениям, одной из важных предпосылок для первичного появления и распространения мучнистой росы является выпадение осадков весной, т. е. наличие необходимого количества влаги для растрескивания перезимовавших клейстокарпиев; в дальнейшем гриб уже проявляет значительную теплолюбивость и устойчивость к засушливым условиям. С этой точки зрения интересно сопоставить полученные нами данные двух последних обследуемых лет.

Весна 1951 г. была засушливой, бездождной—это значительно ограничило степень распространения мучнистой росы. При этом общий процент пораженности не превышал 10.

Следующий год (1952) характеризуется несравненно большим распростанением мучнистой росы, что явилось следствием дождливой весны этого года и обеспечило необходимое количество влаги для раскрывания перезимовавших клейстокарпиев и быстрого распространения гриба. Общий процент зараженности дубовых насаждений в этом году дошел до 25.

Из встречающихся в лесах Зангезура трех видов дуба наиболее поражающимся является араксинский дуб, который

растет на сухих, сильно освещенных солнцем склонах и является наиболее теплолюбивым и засухоустойчивым, что вполне соответствует теплолюбивой природе гриба. Данные пробных площадей, заложенных в Мегринском, Бартасском и Кафанском лесничествах, показали, что чистые насаждения из араксинского дуба (в том числе и кустарниковые формы насаждений из этого дуба) обнаруживают большей частью почти 100% (91,2%) зараженность, при значительно высокой степени поражения.

Восточный дуб проявил меньшую поражаемость мучнистой росой (17%). И, наконец, грузинский дуб, как наиболее влаголюбивый, оказался наиболее стойким к мучнистой росе (3,2%).

О различной устойчивости разных видов дуба к паразиту отмечено в работах Ячевского (1927 г.), Власова (1951 г.). По Ячевскому, гриб встречается преимущественно на дубах с опадающей листвой, тогда как вечнозеленые виды заражаются слабо. „В Закавказье,—пишет Ячевский,—пробковый дуб Q. suber остается совершенно чистым, даже среди насаждений Quercus pedunculata, сплошь зараженных“.

Восприимчивость листьев дуба к мучнистой росе находится в зависимости от возраста листьев, их происхождения и условий существования.

Гораздо легче и больше заражаются листья в молодом возрасте. По мере старения они становятся менее восприимчивыми к мучнистой росе, и, наконец, старые огрубевшие листья обнаруживают уже полную устойчивость к заражению. На это в свое время обращали внимание В. Н. Шафранская, В. Ю. Терешко (1940). Указанные авторы объясняют причины этого явления, во-первых, увеличением толщины кутикулы у более старых листьев и, во-вторых, повышением у них осмотического давления. Измерения возрастных анатомических изменений, произведенные А. А. Власовым, показали, что при старении листьев увеличивается толщина наружных стенок в клетках эпидермиса. „Разницей старения покровных тканей,—пишет А. А. Власов (1951),—может быть объяснена не только общая трудность заражения листьев с увеличением их возраста, но и различ-

ное распространение гриба по поверхности зараженных листьев в зависимости от их возраста... чем старше лист в момент заражения, тем скорее гриб встретит клетки, недоступные для поражения". Однако не только этим объясняется так называемая возрастная восприимчивость листьев дуба к мучнистой росе. Существенную роль в этом играют биохимические особенности листьев.

Согласно Е. В. Горяченкову и Е. Х. Золотареву (1939 с увеличением возраста в листьях дуба уменьшается содержание воды, азота, дубильных веществ, в то время как увеличивается содержание сахара и клетчатки.

А. А. Власов считает, что из различных биохимических изменений листьев большое значение имеют те, которые связаны с повышением осмотического давления в клетках эпидермиса, в связи с чем извлечение питательных веществ гаусториями гриба становится более трудным.

Необходимо отметить также, что наши наблюдения говорят о преимущественном поражении порослевого дуба по сравнению с семенным. Данные пробных площадей, заложенных в насаждениях различного происхождения (а также в смешанных насаждениях в смысле происхождения, с учетом семенных и порослевых) показали, что процент зараженности насаждений порослевого происхожения намного выше процента, характеризующего пораженность насаждений семенного происхождения. Например, данные пробных площадей, заложенных в 13-м квартале Бартасского лесничества, показали, что процент зараженности насаждений дуба семенного происхождения не превышает 15, в то время как в чистом порослевом насаждении того же квартала процент зараженности доходит до 100

А. А. Власов это явление объясняет тем, что у порослевых дубов наружные стенки клеток кожицы более тонки, а сами клетки более богаты водой, чем семенные.

Интересно также отметить, что очень часто приходилось наблюдать в порослевых насаждениях (31—32-й кварталы Кафанского лесничества) при сильном поражении однолетних побегов мучнистой росой, чаще на кустарниковых формах, образование июльских побегов, или так называемых

Ивановых побегов. Эти побеги, образовавшиеся в середине лета, обычно не успевают к осени одревеснеть и побиваются ранними заморозками.

Нами также замечено, что сильная пораженность однолетних побегов мучнистой росой во многих случаях приводит не только к отмиранию верхушечных листьев, но и к прекращению верхушечного роста данного побега, в результате чего пускаются в рост пазушные почки нижних листьев и тем самым усиливается ветвление этого побега, что является вредным и весьма нежелательным для лесного хозяйства; получается избыточное ветвление, между тем как нужно стремиться иметь тонкий ствол.

Бросающееся в глаза преимущественное заражение более длинных однолетних побегов по сравнению с такими же, но более короткими, А. А. Власов (1951) объясняет различием в длительности их роста и связанным с этим временем заражения. Побеги, имеющие сравнительно небольшую длину (до 35 см), скоро заканчивают свой рост (в течение 2-3 недель), а длительно растущие побеги, встречающиеся преимущественно на молодой поросли, достигают в длину 60—100 см и больше.

Между сроками появления мучнистой росы и распусканием листьев первых побегов дуба (коротких) получается разрыв до 1—1.5 месяца, т. к. мучнистая роса появляется в июне, а листья этих побегов успевают к этому времени приобрести устойчивость.

Вторые побеги (летние, длинные) распускаются с первой декады июня и до конца августа и даже до середины сентября, что совпадает с появлением и распространением мучнистой росы. Этим и объясняется обильное заражение их мучнистой росой.

Вопрос особенностей распространения мучнистой росы дуба именно в условиях Кавказа, где гриб встречает особые условия для своего развития, требует длительных стационарных наблюдений. Имеющиеся же у нас данные приводят к мысли, что при длительных стационарных наблюдениях могут быть выявлены весьма интересные закономерности распространения мучнистой росы.

ЗАКЛЮЧЕНИЕ

1. Распространение мучнистой росы в лесах Зангезура носит эпидемический характер.

Միկրոսկոպիական հետազոտությունները ցույց տվեցին, որ կաղնու ճյուղերում փայտացումը տեղի է ունենում աստիճանաբար։ Ըստ որում հետզհետե փայտացած շերտը լայնանում է մինչև սեպտեմբեր ամիսը, որից հետո էական փոփոխություններ

Նկ. 1. կաղնի ապրիլ

Նկ. 2. կաղնի մայիս

Նկ. 3. կաղնի հունիս



Նկ. 4. կաղնի հուլիս



Նկ. 5. կաղնի օգոստոս



Նկ. 6. կաղնի սեպտեմբեր

տեղի չեն ունենում։ Որպես ցուցադրական նյութ բերում ենք № № 1, 2, 3, 4, 5 և 6 սխեմաների նկարները (փայտի շերտը նկարներում սևացած է)։

Բիոքիմիական անալիզների տվյալները զետեղված են № 1 աղյուսակում (տվյալներն արտահայտում են վեց անալիզների միջինը)։

Աղյուսակ 1

ԼԻԳՆԻՆԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԿԱՂՆՈՒ ՄԻԱՄՅԱ ՃՅՈՒՂԻ ՄԵՋ (ՏՎՅԱԼՆԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԵՆ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ՝ ԲԱՑԱՐՁԱԿ ՉՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՄԱՐ)

Նյութեր	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Հունվար	Փետրվար	Մարտ
Ճարպանման նյութեր	13,0	8.5	8,0	8,5	10.1	10 9	10.3	10,7	9,6	9,9	9,8	9,3
Վերականգնող շաքարներ	4,1	7,3	5.1	5,7	5,6	3.5	3.6	4.5	5,5	6,1	7,1	5,6
Հեմիցելյուլոզ	8,5	10,1	12 9	13 1	17.4	17,8	16 6	16 9	16 1	16,8	14.5	16,9
Ցելյուլոզ	11.2	17.3	22.4	24.1	25,5	28 9	29 9	29,1	28 6	29 0	29 5	28,9
Լիգնին	8,5	15,1	15,1	25 5	26.9	28,5	28 1	28,9	28,1	28,9	29,0	28,0
Մոխիր	7,3	5,1	5,5	5 3	6,1	6,3	6,9	6,3	6,3	5,3	5,8	5,1

Աղյուսակի տվյալներից երևում է, որ փորձարկված նմուշների մեջ լիգնինը աստիճանաբար շատանում է։ Դրան զուգընթաց ավելանում են նաև մյուս նյութերը, հեմիցելյուլոզը և ցելյուլոզը։ Իսկ շարժման և ծախսման ենթակա նյութերը, ինչպես, օրինակ՝ վերականգնվող շաքարները և մասամբ էլ ճարպանման նյութերի քանակը չեն ավելանում։

Լոբու բույսի մեջ լիգնինի կուտակման դինամիկայի վերոհիշյալ տվյալները զետեղված են № 2 աղյուսակում (թվերն արտահայտում են 4 անալիզների միջինը)։ Նմուշները վերցված են սերմերի ծլման 9, 15, 22, 31, 41 և 109-րդ օրերը։

Աղյուսակից երևում է, որ լիգնինը աստիճանաբար շատանում է։ Ավելանում է նաև հեմիցելյուլոզը, իսկ պեկտինային նյութերը պակասում են։ Այստեղ ամենակարևորն այն է, որ մենք

Աղյուսակ 2

ԼԻԳՆԻՆԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԼՈԲՈՒ ՑՈՂՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՄԲՈՂՋ ՎԵԳԵՏԱՑԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ (ՏՎՅԱԼՆԵՐԸ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԵՆ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ԲԱՑԱՐՁԱԿ ՉՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՄԱՐ)

Նյութեր	Նմուշը վերցնելու ժամկետը					
	9-րդ օր	15-րդ օր	22-րդ օր	31-րդ օր	41-րդ օր	109-րդ օր
Ճարպանման նյութեր	1,5	2,6	3,5	4,5	4,8	6,1
Վերականգնող շաքարներ	5,5	4,3	4,5	4,5	2,4	3,0
Պեկտինային նյութ.	3,3	4,3	7,1	10,5	8,7	6,5
Հեմիցելյուլոզ	1,9	5,1	8,1	8,1	15,0	16,1
Ցելյուլոզ	11,1	13,1	17,5	18,5	18,6	21,5
Լիգնին	7,0	9,1	11,6	14,0	6,3	17,6
Մոխիր	7,5	10,1	6,7	6,5	6,8	7,1

ականատես ենք ապափայտացման երևույթի։ Մինչև ծաղկման ֆազան լիգնինը ավելանում է, իսկ այդ փուլից հետո նրա քանակը պակասում է՝ հասնելով 6,5 տոկոսի։ Սակայն պտուղների հասունացման ֆազայում լիգնինի քանակը դարձյալ մեծանում է՝ հասնելով 17,6 տոկոսի։ Այս փոփոխությունը ցույց է տրված № 1 կորագծով։



կորագիծ 1.

Մեր ուսումնասիրության վերջին հարցը լույսի ներգործության հարցն է։ Մթության և լույսի մեջ աճած բույսերի նմուշները վերցված են ծլման 9, 15 22 և 31-րդ օրերում։

Այս դեպքում դարձյալ սխեմատիկ նկարներ են հանված և կատարված են բիոքիմիական հետազոտություններ։

Միկրոսկոպիական հետազոտությունները ցույց տվեցին, որ լույսի պայմաններում փայտացումն ավելի ինտենսիվ է կատարվում, քան մթության պայմաններում։ Պատկերացնելու համար բերվում են 7 և 8, 9 և 10-րդ սխեմատիկ նկարները։ Անալիզների արդյունքները զետեղված են № 3 աղյուսակում։

Աղյուսակ 3

ԼԻԳՆԻՆԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԼՈՒՅՍԻ ԵՎ ՄԹՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՃԱԾ ԼՈԲՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ՄԵՋ (ՏՎՅԱԼՆԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԵՆ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ՝ ԲԱՑԱՐՁԱԿ ՉՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՄԱՐ)

Նյութեր	Ծլման 9-րդ օր		Ծլման 15-րդ օր		Ծլման 22-րդ օր		Ծլման 31-րդ օր	
	☐	■	☐	■	☐	■	☐	■
Ճարպանման նյութեր	1,5	2,1	2,6	3,1	3,5	4,1	4,5	1,6
Վերականգնող շաքարներ	5,5	5,3	4,3	6,0	4,5	4,7	4,5	5,5
Պեկտինային նյութեր	3,3	2,3	4,3	3,0	7,1	3,5	1,5	0,7
Հեմիցելյուլոզ	1,9	2,1	5,1	3,2	8,1	4,5	8,1	6,6
Ցելյուլոզ	11,1	7,1	13,1	10,1	17,5	13,5	18,5	12,1
Լիգնին	7,0	3,7	9,4	5,5	11,5	6,2	14,0	7,5
Մոխիր	7,5	6,7	10,1	8,1	6,7	6,1	6,5	5,6

Լույս (կանաչ բույսեր) ☐

Մութ (էթիոլացած բույսեր) ■

Աղյուսակից երևում է, որ կանաչ բույսերում (լույսի տակ աճած), լիգնինը ավելի շատ է, քան էթիոլացած (մթության մեջ աճած) բույսերում։ Նույն պատկերն է ստացվում նաև մյուս նյութերի նկատմամբ։ Պեկտինային նյութերի քանակը, ինչպես և մյուս դեպքերում, իջնում է։

Նկ. 7. լոբի կծիկլացած ծլման
15-րդ օրը



Նկ. 9. լոբի էծիկլացած ծլման
31-րդ օրը



Նկ. 8. լոբի կանաչ ծլման
15-րդ օրը



Նկ. 10. լոբի կանաչ ծլման
31-րդ օրը

*
* *

Փայտացման պրոցեսը բուսական օրգանիզմում անընդհատ կատարվող պրոցեսներից մեկն է, որը կապված է օրգանիզմի հասակի, ֆիզիոլոգիական վիճակի, ինչպես նաև շրջապատի պայմանների հետ։

Մեր փորձերը պարզեցին, որ կաղնու երիտասարդ ճյուղի մեջ, որը դեռևս բողբոջից նոր էր առաջացել և ընդամենը 4—5 սանտիմետր երկարություն ուներ, լիգնինի քանակը հասնում է 9.5 տոկոսի։ Լիգնինի քանակը մեծանում է մինչև սեպտեմբեր ամիսը, դրանից հետո թեև բույսի վեգետացիան շարունակվում էր, բայց լիգնինի կուտակման էներգիան իջնում է, քանակը մնում է համարյա նույնը մինչև հաջորդ տարին։

Լոբու բույսերում լիգնինի կուտակման դինամիկան մի փոքր այլ բնույթ ունի։ Ծլման սկզբից նա աստիճանաբար շատանում է, իսկ ծաղկման փուլում նրա քանակը կիսով չափ իջնում է։ Այստեղ մենք ականատես ենք ապափայտացման երևույթի։

Հարց է ծագում՝ արդյոք փայտացած թաղանթը ընդունակ է նորից փոփոխություններ կրելու։

Հայտնի է, որ բնության մեջ այդ պրոցեսը ամենուրեք կատարվում է միկրոօրգանիզմների գործունեության շնորհիվ։ Նույն պրոցեսը կարող է տեղի ունենալ նաև լաբորատորիաներում՝ քիմիական ռեակտիվների ազդեցությամբ։

Այդ երևույթը նկարագրվել է մի քանի գիտնականների կողմից (Վ. Գ. և Օ. Գ. Ալեքսանդրովներ, 1929. Պալեև, 1940)։

Ալեքսանդրովները այդ երևույթը նկատել են արևածաղիկի և կանեփի բույսերի ջրատար անոթների պատերի վրա և վերագրել անոթների ծերացմանը։

Պալեևը (1940) հետագայում նույն երևույթը նկարագրել է տարեկանի ցողունի վրա։ Նա ապափայտացումն արտահայտել է լիգնինի քանակի պակասումով։ Տարեկանի բույսերը վեգետացիայի սկզբում սկսում են լիգնին կուտակել մինչև հատիկի հասունացման կաթնային շրջանը։ Հաջորդ, այսինքն՝ մոմային փուլից լիգնինը սկսում է պակասել։ Դրա պատճառն այն է, որ սերմերի լցվելու շրջանում լիգնինը միգրացիայի է ենթարկվում և ծախսվում։

Դրանից ելնելով նա միաժամանակ հայտնում է այն տեսակետը, որ լիգնինը բաղադրված է միայն ածխաջրերից։

Մեր փորձերը պարզեցին, որ իրոք լոբու բույսերի մեջ, նրանց ծաղկման շրջանում ապափայտացում է տեղի ունենում։ Դա արտահայտվում է լիգնինի քանակի իջեցումով։ Սակայն մեզ մոտ միաժամանակ նկատվեց, որ հետո պտղի հասունացման փուլում լիգնինի քանակը նորից ավելանում է։ Այդ երևույթը Պալեևը չէր կարող նկատել, քանի որ նրա օբյեկտը տարեկանն է, որի բույսերը պտուղ տալուց հետո անմիջապես մահանում են։ Մեր օբյեկտը եղել է լոբին, որի պտղաբերության շրջանը բավականին երկար է տևում, և լիգնինի քանակը նորից մեծանում է։

Մեր փորձերը պարզեցին, որ ապափայտացման ժամանակ լիգնինի միայն մի մասն է ծախսվում։

Ինչպես հայտնի է, բույսի ծերանալու փուլում ֆերմենտները ունեն հիդրոլիտիկ բարձր ակտիվություն։ Ծաղկման փուլում ֆեր-

մենտների հիդրոլիզող ակտիվությունն այնքան է մեծանում, որ քայքայում է նույնիսկ փայտանյութը, որը բուսական օրգանիզմի ո՛չ թե պաշարային, այլ կառուցվածքային նյութ է։

Պտուղների հասունացման ժամանակ լիգնինի քանակի մեծանալը պետք է բացատրել Մանսկայայի հիպոթեզով։ Ըստ վերջինիս՝ ծերանալու ժամանակ օքսիդացման պրոցեսները գերազանցում են ռեդուկցման պրոցեսներին, և լիգնինի քանակը նորից մեծանում է։

Գալով լույսի հարցին՝ պետք է ասել, որ այդ ուղղությամբ եղած տեսակետները հակասական են, և մենք չենք կարող համաձայնել այն դրույթներին, որոնք լույսի դերը նսեմացնում են այդ պրոցեսում։ Մեր փորձերը, որոնք կատարված են լոբու, սիսեռի և բամբակի (այստեղ բերվում է միայն լոբին) վրա, մեզ բերեցին այն եզրակացության, որ լույսը լիգնինի կուտակման պրոցեսում վճռական դեր է խաղում։ Նախ՝ լույսի պայմաններում աճած բույսերի մեջ հյուսվածքների դիֆերենցիացիան ավելի արագ է կատարվում։ Կուտակվում են քսիլեմայի ավելի մեծ թվով անոթներ, որոնք ավելի արագ և ավելի ինտենսիվ են փայտանում, և լիգնինի քանակը կանաչ բույսերում ավելի է լինում։

Լույսը նպաստում է լիգնինի դերևատների արոմատիկ և այլ նյութերի առաջացմանը, իսկ նման նյութերի առկայության դեպքում մթնում անգամ կարող է լիգնին սինթեզվել։

Հակառակ դեպքում անկարելի կլիներ բացատրել լիգնինի կուտակումը բույսերի արմատներում, մի օրգան, որն իր ամբողջ կյանքը անց է կացնում մթության մեջ։

Այժմ մի քանի խոսք այն մասին, թե լիգնինը բջջի կողմից արտադրված ո՛ր նյութերի հաշվին է առաջանում։

Մեր փորձերը ցույց տվեցին, որ չի կարելի ասել, թե լիգնինը անմիջականորեն առաջանում է այս կամ այն նյութից, քանի որ թե՛ հեմիցելյուլոզը և թե՛ ցելյուլոզը լիգնինի քանակի հետ զուգընթաց շատանում են։ Իսկ ինչ վերաբերում է պեկտինային նյութերին, ճիշտ է, նրանց քանակը գնալով իջնում է, բայց բոլորովին չի համապատասխանում լիգնինի աճող քանակին։ Գուցե նա մտնում է լիգնինի բաղադրության մեջ, բայց ասել, թե լիգնինը միայն պեկտինային նյութերի հաշվին է սինթեզվում՝ համոզիչ չէ։

Մեր կարծիքով՝ այդ չափազանց բարդ հարցը կարելի է բացատրել այսպես. լիգնինը առաջանում է կենդանի պրոտոպլաստի կենսագործունեության հետևանքով, մյուս նյութերի հեմիցելյու-

լոզի և ցելյուլոզի հետ միասին։ Միայն բանն այն է, որ բոլոր բջիջներում լիգնին չի առաջանում, ինչպես, օրինակ, մերիստեմային հյուսվածքի բջիջներում։ Այն բջիջներում, որտեղ լիգնինացման պրոցես է տեղի ունենում, դրա հետևանքով նրանք մահանում են, ինչպես, օրինակ, բնափայտի անոթները, լիբրիֆոմի և լուբային թելերը և այլն։ Հեմիցելյուլոզի և ցելյուլոզի դեպքում նման երևույթ չենք նկատում։ Բացի որոշ դեպքերից, որ ցելյուլոզային պատերի միջև պրոտոպլաստը մահանում է (օրինակ, բամբակի թելերը)։

Իհարկե, պետք է ենթադրել, որ ածխաջրերի առատությունը նպաստում է լիգնինի շատացմանը (մեր փորձերի մեջ՝ լույսի պայմաններում), իսկ թե այն անմիջականորեն առաջանում է հեմիցելյուլոզից կամ ցելյուլոզից՝ չի հաստատվում։

Այդ հարցը չափազանց կարևոր է և խոր ուսումնասիրությունների կարիք է զգում։ Ըստ որում գերադասելի է, որ ուսումնասիրությունները կատարվեն մոնոքրոմատիկ ճառագայթների ներգործության ուղղությամբ, որոնք հնարավորություն կտան լիգնինացման պրոցեսի էությունը պարզաբանելու և վեր հանելու մի շարք խրթին հարցեր, մի բան, որի կարիքը վաղուց ի վեր զգացվում է փայտի արդյունաբերության մեջ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կաղնու միամյա ճյուղերում, սկսած ճյուղի սկզբնավորվելուց, լիգնինը աստիճանաբար կուտակվում է։

Սեպտեմբեր ամսից մինչև հաջորդ գարնանը լիգնինի քանակը առանձին փոփոխությունների չի ենթարկվում։

2. Լոբու բույսի մեջ վեգետացիայի ընթացքում լիգնինը շատանում է, ծաղկման փուլում՝ իջնում, իսկ հետո՝ նորից շատանում։ Ծաղկման փուլում տեղի է ունենում ըջջապատերի ապափայտացման պրոցես։

3. Լոբու կանաչ բույսերում ավելի շատ լիգնին է կուտակվում, քան էթիոլացածը։ Լույսը լիգնինի առաջացման պրոցեսում զգալի դեր է խաղում։

4. Լիգնինն առաջանում է կենդանի պրոտոպլաստի կենսագործման ընթացքում, ինչպես՝ հեմիցելյուլոզը, ցելյուլոզը և այլ նյութեր։

ЛИТЕРАТУРА

1. Александров В. Г. и Александрова О. Г.—Является ли одревеснение обратимым или необратимым процессом? Известия Главного бот. сада, 1929

2. Александров В. Г. и Джапаридзе Л. И.—Материалы к выяснению явлений раздревеснения и одревеснения клеточной оболочки. Жур. Русск. бот. общества, 1927, т. 12, № 3

3. Бардинская М. С.—К вопросу образования лигнина в растениях. ДАН, 1950, т. XXIII, № 1.

4. Жербов Л. П.—Природа лигнина. Жур. „Бум. пром“, 1947, № 5, 6, 7.

5. Жёрбов Л. П.—К вопросу об образовании лигнина. Жур. „Бум. промышл.“, 15, № 9, 27, 1936.

6. Никитин Н. И.—Очерки по химии древесины. 1926, монография.

7. Никитин Н. И.—Химия древесины. 19[illegible]5, монография.

8. Никитин Н. И.—Химия древесины. 1951, монография.

Н. М. МЕЛИКЯН

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ НАКОПЛЕНИЯ ЛИГНИНА В РАСТЕНИЯХ

РЕЗЮМЕ

Целью настоящей работы является выяснение следующих вопросов:

1. Динамика накопления лигнина в однолетних побегах дуба, начиная с первых дней их жизни, оформления до следующего года.

2. Динамика накопления лигнина в растениях фасоли в течение всего вегетационного периода.

3. Динамика накопления лигнина в зеленых (выросших на свету) и этиолированных (выросших в темноте) растениях в разные периоды их жизни.

Для выяснения первого вопроса, начиная с апреля по апрель следующего года, ежемесячно, до образования новых побегов, мы брали образцы.

По второму и третьему вопросам в 300 вазонах в 4-х выращивались растения, из коих часть на свету, а другая часть в темноте. На 9, 15, 22, 31, 41 и 109-м днях прорастания брались образцы для изучения. Из этих образцов готовились микроскопические препараты, и с помощью бинокулярного микроскопа зарисовывались схематические рисунки. Путем биохимического исследования определено количество редуцирующих сахаров, жиров, пектиновых веществ, гемицеллюлозы, целлюлозы и лигнина.

1. В однолетних побегах дуба накопление лигнина начинается с апреля и продолжается по сентябрь, после чего за всю зиму количество лигнина в однолетних побегах никаким изменениям не подвергается.

2. В растении фасоли лигнин накапливается в течение его вегетации, а с возрастом его количество увеличивается. В

фазе цветения же уменьшается наполовину, и имеет место частичное раздревеснение. В фазе плодоношения количество лигнина опять повышается.

3. В зеленых растениях фасоли образуется больше лигнина, чем в этиолированных. Свет играет решающую роль в процессе образования и накопления лигнина в растениях.

4. Лигнин образуется в течение жизнедеятельности живого протопласта так же, как и гемицеллюлоза, целлюлоза, но только сравнительно позже и не во всех клетках.

Кафедра физиологии и анатомии растений

Շ. Վ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԱԶՈՏՈԲԱԿՏԵՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՄԻ ՔԱՆԻ ՏԻՊԻ ՀՈՂԵՐՈՒՄ

Ազոտը բացառիկ կարևոր նշանակություն ունի թե՛ կենդանական և թե՛ բուսական աշխարհի համար։ Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը հիմնականում պայմանավորված է հողում գտնվող դյուրամատչելի ազոտի քանակով։ «Բույսերը ազոտի մեծագույն պահանջ են ներկայացնում, մինչդեռ լեռնային ապարները ազոտ բոլորովին չեն պարունակում» (Վիլյամս, 1949)։ Հողում եղած ազոտի ամբողջ պաշարը մթնոլորտային ծագում ունի և բիոլոգիական պրոցեսների արդյունք է, սակայն մթնոլորտային ազոտի անսպառ պաշարներն անմատչելի են բարձրակարգ բույսերի համար։ Էլեմենտար ազոտը յուրացնելու ընդունակությամբ օժտված են հողի միկրոֆլորայի միայն մի քանի խմբեր, որոնցից ազոտի ամենաեռանդուն ֆիքսողներն են պալարաբակտերիաները և ազոտոբակտերիաները։ Բարենպաստ պայմաններում ազոտոբակտերները նշանակալի չափով հարստացնում են հողը օրգանական ազոտով, որը հետագայում որոշ ձևափոխություններ ենթարկվելուց հետո յուրացվում է բարձրակարգ բույսերի կողմից։ Բնական է, որ ազոտոբակտերների այդ օգտակար հատկությունը հայտնագործման առաջին իսկ շրջանից գրավել է բազմաթիվ հետազոտողների ուշադրությունը։ Բնության մեջ ազոտոբակ-

տերների տարածվածության հարցով առանձնապես շատ են զբաղվել և ներկայումս էլ շարունակում են զբաղվել։ Հետազոտողների մեծ մասի ուսումնասիրությունները բերում են այն հետևության, որ ազոտոբակտերները տարածված են ամենուրեք, անկախ աշխարհագրական լայնությունից և կլիմայական պայմաններից՝ սկսած հյուսիսային բևեռային պայմաններից (Իսաչենկո և Սիմակովա, 1934) մինչև հարավային չոր տափաստանները և անապատները (Սուշկինա, 1941)։

Այս հանգամանքը հետազոտողներից ոմանց բերել է այն համոզման, թե բնության մեջ չկան այնպիսի հողեր, որոնք ազոտոբակտերներ չպարունակեն։

Սակայն, որոշ հեղինակների հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ազոտոբակտերները հայտաբերվում են ոչ բոլոր հողերում։ Նրանք բոլորովին բացակայում են խոպան, տունդրային, պոդզոլային և բարձր-լեռնային սևահողերում (Դոմբաչովա, 1931. Սուշկինա, 1949. Ֆյոդորով, 1952)։

Վերջապես, ըստ Իվանովի (1949), Տաուսոնի (1936) և Տանատինի (1951) տվյալների՝ ազոտոբակտերներ կան 4000—4500 մ բարձրության վրա և մինչև անգամ հավերժական ձյան սահմաններում գտնվող բարձր-լեռնային հողերում։

Այս կամ այն հողում ազոտոբակտերների ներկայությունը կամ բացակայությունը բացատրվում էր ո՛չ թե նրանց վրա ազդող գործոնների միակցությամբ, այլ առանձին վերցրած ֆակտորներից որևէ մեկի ազդեցությամբ, ինչպես, օրինակ, հողի ակտուալ թթվությամբ, կալցիումի, ֆոսֆորի պարունակությամբ և այլն։

Սուշկինան առաջինը արծարծեց ազոտոբակտերների էկոլոգիական-աշխարհագրական տարածվածության հարցը։ Հիմնվելով Վիլյամսի ուսմունքի վրա՝ միասնական հողառաջացման պրոցեսներում միկրոօրգանիզմների դերի մասին, ինչպես նաև իր ուսումնասիրած փաստական նյութի վրա, նա ցույց տվեց այն սերտ փոխադարձ կապը, որը գոյություն ունի հողառաջացման պրոցեսների ուղղվածության և ազոտոբակտերների տարածվածության միջև։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի միկրոբիոլոգիայի սեկտորի կողմից կատարվող սիստեմատիկ հետազոտությունների շնորհիվ նույնպես հայտաբերված է հողային միկրոֆլորայի, մասնավորապես ազոտոբակտերների, և բարձրակարգ բույսերի փոխադարձ կապն ու միասնությունը և վերջինիս նշանակությունը հողառաջացման պրոցեսում (Փանոսյան, 1939, 1948,

1950, Փանոսյան և Մեհրաբյան, 1940. Պետրոսյան, Կիրակոսյան, Միրզաբեկյան և Մեհրաբյան, 1940 և այլն)։

Հայտնի է, որ եթե երկրի բացարձակ հասակը պատճառ է հանդիսանում հողատիպերի հորիզոնական զոնայականության, ապա երկրի հարաբերական հասակը կամ, այլ կերպ ասած, երկրի ռելյեֆը և հողառաջացնող տեսակի փխրուկի հատկությունները տեղի են տալիս հողատիպերի ուղղաձիգ զոնայականության։ Այս տեսակետից էլ տվյալ աշխատանքի նպատակն է եղել ազոտոբակտերների համեմատական տարածվածության ուսումնասիրությունը Հայկական ՍՍՌ-ի մի քանի հողատիպերում՝ ըստ ուղղաձիգ զոնայականության։

Ազոտոբակտերների տարածվածությունը ըստ ուղղաձիգ զոնայականության ուսումնասիրելու համար հետազոտել ենք Հայաստանի ռելյեֆի համար բնորոշ հետևյալ երեք գոտիների հողերը.

1. Դաշտավայրի կամ կիսանապատային գոտու (Էջմիածին).
2. Նախալեռնային կամ չոր-տափաստանային գոտու (Կոտայք).
3. Լեռնային կամ լեռնատափաստանային գոտու (Սևան)։

Ինչպես Վիլյամսն է նշում, զոնայականությունը չի կարելի դիտել որպես ճշգրիտ կերպով գծված շերտերի հերթափոխություն և այդ հասկացողությունն իր մեջ ընդգրկում է ո՛չ միայն տարածության, այլև ժամանակի պատկերացումը։ Քանի որ մշակված հողերը խիստ տարբերվում են խոպաններից իրենց ազոտոբակտերների քանակով, հետազոտության համար հողի նմուշները վերցրել ենք ինչպես մշակված, այնպես և անմշակ դաշտերից։ Իսկական իմաստով՝ խոպան հողի նմուշ մեզ հաջողվել է վերցնել միայն Սևանի շրջանում (Սևանի լեռնանցք), իսկ Էջմիածնի և Կոտայքի շրջաններում վերցրել ենք անմշակ տարածություններից, սակայն վերջիններս իսկական խոպան համարել չենք կարող, քանի որ հազարամյակների ընթացքում նրանք, շատ հավանական է, մշակվել են մարդու կողմից։ Ն. Ա. Կրասիլնիկովի (1934, 1944), Պ. Վ. Սավոստինի (1938), Հ. Կ. Փանոսյանի (1949) և այլոց աշխատություններով հաստատվել է, որ տարբեր կուլտուրական բույսեր ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր հողա-կլիմայական պայմաններում ազոտոբակտերների վրա տարբեր ռելեկցող ներգործություն են թողնում։ Հաշվի առնելով այդ հանգամանքը, մենք մեր ուսումնասիրությունների համար նմուշները վերցրել ենք այնպիսի բույսերի մերձարմատային հողից, որոնք ըստ հնարավորին ընդհանուր են նշված երեք շրջանների համար։ Այսպիսով՝

որպես հետազոտության օբյեկտ տարբեր գոտիներում ծառայել են հետևյալ կուլտուրաների մերձարմատային հողի նմուշները.

Դաշտավարային	Ջոր տափաստանային	Լեռնատափաստանային
Աշնանացան ցորեն	աշն. ցորեն	աշնանացան ցորեն
Առվույտ	առվույտ	կորնգան
Բամբակ	ծխախոտ	կարտոֆիլ

Անմշակ կամ խոպան տարածություններից հողի նմուշները վերցրել ենք բուսական ծածկոցում գերակշռող տեսակի մերձարմատային շրջանից։ Դաշտային գոտու գերակշռող բուսականությունը կիսանապատային էր, որը գլխավորապես կազմված էր Artemisia fragrans, Centaurea squarrosa և Kochia prostrata տեսակներից, չոր-տափաստանային գոտում հողի նմուշները վերցրել ենք նույն տեսակների մերձարմատային գոտուց, իսկ լեռնատափաստանային գոտում՝ տարախոտերի ճմաշերտից։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազոտոբակտերների քանակը հողում տատանվում է ըստ վեգետացիոն շրջանի և ըստ բույսերի զարգացման փուլերի, յուրաքանչյուր բույսի մերձարմատային հողից նմուշ վերցրել ենք երեք անգամ՝ թփակալման շրջանում, երբ բույսը ունեցել է ընդամենը մի քանի տերև, ծաղկման շրջանում և լրիվ հասունացման շրջանում, մինչ բերքահավաքը. վերջապես, քանի որ հողաշերտի խորացման հետ ազոտոբակտերների քանակը նվազում է, բոլոր դեպքերում նմուշները վերցրել ենք միևնույն խորությունից (0—30 սմ)։

Էջմիածնի շրջանում հողի նմուշները վերցրել ենք Տեխնիկական կուլտուրաների ինստիտուտի փորձադաշտից, Կոտայքի շրջանում՝ Մայակովսկու անվան գյուղի Մոլոտովի անվան կոլտնտեսության դաշտերից, իսկ Սևանի շրջանում՝ Սեմյոնովկա գյուղի Շահումյանի անվան կոլտնտեսության դաշտերից։ Ամեն մի հողամասից վերցված է երկուական նմուշ, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ներկայացնում էր երեք կետից վերցված հողերի միջին նմուշը։

Բերված նմուշները երկու մասի են բաժանվել, որոնցից մեկը հասցվել է օդային չոր վիճակի՝ հողի մեխանիկական և քիմիական անալիզների համար, իսկ մյուսն անմիջապես նոսրացվել է մինչև $^{1}/_{100}$ միլիոներորդական գրամի, որից հետո համապատասխան

Նոսրացումները ցանվել են սննդամիջավայրերում։ Լորձնոտ բջիջներն անջատելու համար, նախքան թափահարելը, սուսպենզիային ավելացվել է ստերիլ ավազ։ Տարբեր հողային նմուշներում ազոտոբակտերների և լորձնային բակտերիաների քանակի վերաբերյալ ստացված թվական տվյալները ամփոփված են № 1 աղյուսակում։

Աղյուսակ 1

ԱԶՈՏՈԲԱԿՏԵՐՆԵՐԻ ԵՎ ԼՈՐՁՆԱՅԻՆ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՄԵԿ ԳՐ. ՀՈՂՈՒՄ (ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ)

Շրջանը և հողատիպը	Կուլտուրաներ	Վեգետացիայի շրջան								
		Թփակալման			Լրիվ ծաղկման			Լրիվ հասունացման		
		Azotobacter		Radiobacter	Azotobacter		Radiobacter	Azotobacter		Radiobacter
		Սննդանյութեր								
		Բեյերինկի	Էշբի-ագար	Հողի էքստր. մաննիտ. ագար	Բեյերինկի	Էշբի-ագար	Հողի էքստր. մաննիտ. ագար	Բեյերինկի	Էշբի-ագար	Հողի էքստր. մաննիտ. ագար
Էջմիածին—գորշ	Աշն. ցորեն	—	—	—	17,6	12,5	2,0	30,0	28,5	4,7
	Առվույտ	—	—	—	50,3	49,1	19,6	27,0	26,5	28,4
	Բամբակ	4,5	4,0	7,3	5,5	5,0	12,6	4,0	3,0	25,7
	Կիսանապատ. բուսական	4,5	1,5	2,0	1,0	0,5	0,0	1,0	1,0	0,2
Կոտայք բաց-շագանակագույն	Աշն. ցորեն	—	—	—	11,0	13,8	8,5	11,2	11,0	8,5
	Առվույտ	—	—	—	24,6	23,0	6,0	18,2	18,0	2,0
	Ծխախոտ	4,0	3,8	6,0	9,3	8,0	8,0	7,5	7,5	6,0
	Կիսանապատ բուսական	2,5	2,0	0,1	0,5	1,0	1,0	0,5	0,4	0,5
Սևան սևահող	Աշն. ցորեն	—	—	—	8,0	8,0	9,0	4,5	4,0	10,0
	Կորնգան	—	—	—	1,5	5,0	12,0	4,7	4,5	4,3
	Կարտոֆիլ	4,0	2,5	20,0	4,0	4,0	30,0	3,0	3,5	24,0
	Ճմային բուսական	0,7	0,5	6,0	0,6	0,7	12,0	0,5	0,5	8,0

Ինչպես ցույց են տալիս առաջին աղյուսակի տվյալները, էջմիածնի և Կոտայքի հողերն անհամեմատ ավելի հարուստ են ազոտոբակտերներով, քան Սևանի (Սեմյոնովկա) հողերը, անկախ այն բանից, թե ո՛ր կուլտուրայով են զբաղեցված։ Այն ժամանակ, երբ ազոտոբակտերների մաքսիմալ քանակությունը էջմիածնի հողերում հասնում է մեկ գրամում 50 միլիոնի, իսկ Կոտայքում՝ 24 միլիոնի, ապա Սևանում դա հասնում է միայն 8 միլիոնի։ Նույն օրինաչափությունն արտահայտվում է անգամ հիշյալ շրջանների անմշակ և խոպան հողերում։ Նկատելի է նաև տարբեր կուլտուրաների արմատային սիստեմի ազդեցությունը ազոտոբակտերների քանակի վրա մերձարմատային հողում։ Ինչպես էջմիածնի, նույնպես և Կոտայքի շրջանում ազոտոբակտերների քանակն առավել մեծ է առվույտի մերձարմատային հողում։ Դա մասամբ կարելի է բացատրել նրանով, որ առվույտի արմատները հողի մեջ արտադրում են օրգանական նյութերի զգալի քանակ, որն օգտագործում են շրջապատի միկրոօրգանիզմները, և, մյուս կողմից՝ նրանով, որ առվույտի արմատները, ինչպես բոլոր թիթեռնածաղկավոր բույսերի արմատները, բարձրացնում են հողի կնձկայնությունը, որն իր հերթին ազդում է տվյալ հողի ջրային և օդային ռեժիմի վրա։ Սեմյոնովկայի հողերում, ընդհակառակն, կորնգանի մերձարմատային հողի նմուշը համեմատաբար աղքատ է ազոտոբակտերներով. թերևս դա բացատրվում է նրանով, որ սևահողն ընդհանրապես հարուստ է օրգանական նյութերով և ունի լավ կնձկային ստրուկտուրա, որի հետևանքով կորնգանի արտադրած օրգանական նյութերը, որպես ավելցուկ, խանգարում են մերձարմատային գոտում տարածված ազոտոբակտերներին։ Հաջորդ կուլտուրան, որի մերձարմատային գոտին ըստ ազոտոբակտերների պարունակության, իր տեղը զիջում է միայն թիթեռնածաղկավորներին, աշնանացան ցորենն է։ Բոլոր երեք հետազոտված գոտիներում աշնանացան ցորենի մերձարմատային հողում տարածված են մեծ թվով ազոտոբակտերներ։ Մեր այս տվյալները չեն համընկնում Կրասիլնիկովի (1934) այն տեսակետի հետ, թե աշնանացան ցորենի արմատները տոքսիկ ազդեցություն ունեն ազոտոբակտերների վրա։ էջմիածնի շրջանի հետազոտված կուլտուրաներից միայն բամբակի մերձարմատային հողում է, որ ազոտոբակտերները քիչ են։ Գրականության մեջ կան տվյալներ (Պետրոսյան, Նարինյան, Կարագուլյան, 1949) այն մասին, որ բամբակով զբաղեցված հողում տարեցտարի կուտակ-

վում են այնպիսի գործոններ, որոնք արգելակում են ազոտոբակտերների զարգացումը։ Թերևս ազոտոբակտերների փոքր քանակը բամբակի մերձարմատային հողում կարելի լիներ բացատրել նրանով, որ նմուշները վերցվել են բամբակի չորրորդ տարվա ցանքից, բայց չպետք է մոռանալ նաև այն, որ բամբակը հողում գրեթե օրգանական մնացորդներ չի թողնում։ Բամբակի ցողունը, ինչպես և արմատների հիմնական մասսան բերքահավաքից հետո հանվում են հողից և օգտագործվում որպես վառելիք։ Բնական է, որ չորս տարվա ընթացքում բամբակով զբաղեցված հողն անընդհատ աղքատանում է օրգանական նյութերից, հետևաբար և ազոտոբակտերների զարգացման համար անհրաժեշտ էներգետիկ մատերիալից, որը բացասաբար է անդրադառնում ազոտոբակտերների քանակի վրա։

Բոլոր դեպքերում՝ անմշակ կամ խոպան հողերում ազոտոբակտերների քանակը փոքր է, առանձնապես Սեմյոնովկայի նմուշներում, որտեղ ճմաշերտի աերացիան թույլ է։ Կոտայքի և էջմիածնի անմշակ հողերում ազոտոբակտերների սակավությունը բացատրվում է ոչ միայն թույլ աերացիայով, այլև խոնավության դեֆիցիտով, որն առանձնապես սուր է արտահայտվում ամառը։

Լորձնային բակտերիաների քանակն ավելի մեծ է Սեմյոնովկայի հողերում։ Առաջին աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ազոտոբակտերների և լորձնային բակտերիաների միջև գոյություն ունի ուրույն քանակային փոխհարաբերություն. այնտեղ, որտեղ գերակշռում են ազոտոբակտերները, փոքր է լորձնային բակտերիաների թիվը և՝ հակառակը։ Նշված քանակային հարաբերությունը ցայտուն կերպով արտահայտված է էջմիածնի աշնանացան ցորենով զբաղեցված հողի նմուշներում, որտեղ ազոտոբակտերների քանակը մեկ գրամ հողում հասնում է 30,0 միլիոնի, մինչդեռ լորձնային բակտերիաները կազմում են ընդամենը 4,7 միլիոն։ Բամբակով զբաղեցված հողում, ընդհակառակն, ազոտոբակտերի քանակը մեկ գրամում կազմում է 4,0—5,5 միլիոն, այն ժամանակ, երբ լորձնային բակտերիաների թիվը հասնում է 27 միլիոնի։ Նույն օրինաչափությունն է նկատվում նաև Սեմյոնովկայի կարտոֆիլով, աշնանացան ցորենով և ճմային բուսականությամբ զբաղեցված հողերում։

Ուշագրավ են նաև ազոտոբակտերների և լորձնային բակտերիաների քանակային տատանումներն ըստ հետազոտվող կուլտուրաների զարգացման փուլերի։ Սիդորենկոն (1940) և ուրիշ-

ներ գտնում են, որ գյուղատնտեսական կուլտուրաները, ըստ իրենց զարգացման փուլերի, տարբեր ազդեցություն են թողնում մերձարմատային գոտում տարածված միկրոօրգանիզմների վրա։ Մեզ թվում է, որ այս հարցում գլխավոր դերը պատկանում է ոչ այնքան բույսերի զարգացման փուլերին, որքան տարվա եղանակին։ Ըստ առաջին աղյուսակի տվյալների, էջմիածնի աշնանացան ցորենի մերձարմատային հողը ցորենի ծաղկման փուլում ավելի քիչ ազոտոբակտերներ է պարունակում, քան լրիվ հասունացման փուլում։ Կարելի է կարծել, որ ցորենի ծաղկման փուլը խոչընդոտ է հանդիսանում ազոտոբակտերների զարգացման համար, բայց եթե նկատի առնենք այն, որ աշնանացան ցորենի ծաղկումը տեղի է ունեցել մայիսի 25-ին, իսկ լրիվ հասունացումը՝ հուլիսի 3-ին, ապա պարզ կլինի, որ հուլիսի սկիզբը, կամ ամռան առաջին կեսը, ավելի բարենպաստ է հողային բոլոր միկրոօրգանիզմների, ինչպես և ազոտոբակտերների զարգացման համար։ Դրա համար էլ նրանց քանակն այդ շրջանում ավելի մեծ է։ Սեմյոնովկայի հողերում հակառակ երևույթն է նկատվում։ Աշնանացան ցորենն այնտեղ ծաղկել էր հուլիսի 14-ին, այսինքն ամռան կեսին, և ծաղկման փուլում այդ հողի մեջ ազոտոբակտերների քանակն ավելի մեծ էր, քան օգոստոսի 29-ին, այսինքն՝ աշնանամուտին, լրիվ հասունացման փուլում։ Քննարկված տվյալների հիման վրա կարելի է գալ այն հետևության, որ ազոտոբակտերների քանակն այս կամ այն կուլտուրայի մերձարմատային հողում կապված է ո՛չ միայն բույսերի զարգացման փուլերի, այլև տվյալ փուլի հետ համընկնող օդերևութաբանական պայմանների հետ։

Բացի ազոտոբակտերների քանակից, մենք ուսումնասիրել ենք նաև նրանց մորֆոլոգիական առանձնահատկությունները։ Տարբեր գոտիների ազոտոբակտերները տարբերվում են իրարից նաև մորֆոլոգիապես։ Այսպես, օրինակ՝ էջմիածնի հողերից մեկուսացված շտամների մեծ մասի պիգմենտացիան չափազանց ուժեղ էր, գաղութները հաճախ ինտենսիվ սև էին գունավորված, հատկապես առվույտի մերձարմատային հողից մեկուսացված շտամներում։ Կոտայքի շրջանի հողերի ազոտոբակտերների շտամների մեծ մասն ավելի թույլ է պիգմենտավորված՝ դարչնագույնից մինչև դեղին, իսկ Սեմյոնովկայի հողերից մեկուսացված շտամների մեծ մասն անգույն է, կամ սպիտակավուն, օսլայանման։ Սեմյոնովկայի հողերից ինչպես 1951 թվականին, այնպես և 1952 թվականին վերցված նմուշներում պիգմենտավորված գաղութ-

ներ հայտաբերվել են չնչին քանակությամբ։ Խոպան հողի մեկ գրամում դրանց թիվը կազմել է ընդամենը 200 բջիջ, կորնգանի հողում՝ 1000 բջիջ, աշնանացան ցորենի մերձարմատային հողում՝ 1000 բջիջ, իսկ կարտոֆիլի մերձարմատային հողի նմուշներում ոչ մի պիգմենտավորված գաղութ չի հայտաբերվել։ Տարբեր գոտիներից մեկուսացված շտամները տարբերվում են նաև իրենց չափերով։ Սեմյոնովկայի շտամների բջիջներն ավելի խոշոր են՝ 4—5 միկրոն մեծությամբ, թույլ հատիկավորված, կապսուլայի նեղ շերտով պատված կամ բոլորովին չկապսուլավորված, իսկ Կոտայքի և էջմիածնի շտամների բջիջներն ավելի մանր են, մինչև 2,5 միկրոն տրամագծով, ուժեղ հատիկավորված, կապսուլավորված բավականին լայն լորձնաշերտով։

Տարբեր գոտիներից մեկուսացված շտամները տարբերվում են նաև մթնոլորտի ազոտը ֆիքսելու ընդունակությամբ, որի մասին տվյալները բերված են № 2 աղյուսակում։ Այդտեղ զետեղված են երեք հետազոտված գոտիների աշնանացան ցորենների մերձարմատային հողից մեկուսացված շտամներին վերաբերվող տվյալները։ Փորձը կատարված է Վինոգրադսկու կողմից առաջարկված սիլիկոգելային թիթեղների վրա, ազոտը որոշված է Կյելդալի մեթոդով՝ երկու կրկնողությամբ։

Աղյուսակ 2

ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ՀՈՂԱՏԻՊԵՐԻ ԱԶՈՏՈԲԱԿՏԵՐՆԵՐԻ ԱԶՈՏԻ ԱՍՍԻՄԻԼՅԱՑԻԱՅԻ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Շտամի №	Որտեղից է մեկուսացված	Ազոտը մգ-ով 1 գրամ շաքարի քայքայումից
Ազոտոբակտեր—1	էջմիածին—աշնանացան ցորեն	13,40
Ազոտոբակտեր—1ա	Կոտայք—աշնանացան ցորեն	9,78
Ազոտոբակտեր—15ա	Սեմյոնովկա—աշնանացան ցորեն	2,4

Ինչպես երևում է № 2 աղյուսակի տվյալներից, էջմիածնի աշնանացան ցորենի մերձարմատային հողից մեկուսացված ազոտոբակտերների մթնոլորտային ազոտը ֆիքսելու ակտիվությունն ավելի մեծ է, քան Սեմյոնովկայի նույն աշնանացան ցորենի մերձարմատային հողում ապրող ազոտոբակտերներինը։ Սա ցույց է տալիս, որ սևահողի ազոտային միացությունների առատության

պայմաններում ազոտոբակտերները համարվել են հողի օրգանական միացությունների ազոտը օգտագործելուն, որի հետևանքով և օդի էլեմենտար ազոտն ավելի թույլ են ֆիքսում։

Հետազոտվող հողերում տարբեր է ո՛չ միայն ազոտոբակտերների առանձին շտամների՝ ազոտի ասիմիլյացիայի ընդունակությունը, այլև հողերի ազոտ կապելու պոտենցիալ կարողությունը, որի վերաբերյալ ստացված տվյալներն ամփոփված են № 3 աղյուսակում։

Աղյուսակ 3

ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ՀՈՂԱՏԻՊԵՐԻ ԱԶՈՏ ՖԻՔՍԵԼՈՒ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Շրջանը և հողատիպը	Մեկ գրամ շաքարի քայքայումից ասիմիլյացիայի ենթարկված ազոտը (միլիգրամներով)		
	փորձից առաջ	փորձից հետո	ասիմիլյացված ազոտը
Էջմիածին—գորշ	10,66	25,06	14,40
Կոտայք—բաց շագանակագույն	12,54	23,45	10,91
Սեմյոնովկա սևահող	33,2	36,2	3,0

№ 3 աղյուսակի տվյալները նույնպես հաստատում են, որ Սեմյոնովկայի սևահողերում տարածված ազոտոբակտերները թույլ են ֆիքսում օդի էլեմենտար ազոտը, հետևաբար տարբեր հողատիպերում զարգացող ազոտոբակտերները տարբերվում են նաև իրենց ֆիզիոլոգիական հատկություններով։ Պարզելու համար, թե հետազոտվող հողերը տարբերվո՞ւմ են արդյոք միայն լորձնային բակտերիաների և ազոտոբակտերների, թե նաև այլ ֆիզիոլոգիական խմբերի թվով, հաշվի է առնվել ամոնիֆիկատորների քանակը մսապեպտոնային ագարի վրա։

Տվյալները ներկայացված են № 4 աղյուսակում։

№ 4 աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ ամոնիֆիկատորների քանակը նույնպես խիստ տարբեր է տարբեր հողատիպերում։ Սևահողն անհամեմատ ավելի հարուստ է օրգանական միացություններով, և թվում է, թե ամոնիֆիկատորների քանակն այստեղ ավելի մեծ պետք է լիներ, բայց № 4 աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ չնայած օրգանական միացությունների առատությանը, Սեմյոնովկայի սևահողերում ամոնիֆիկատորների խումբն ավելի թույլ է ներկայացված, քան Կոտայքի և

Աղյուսակ 4

ԱՄՈՆԻՖԻԿԱՏՈՐՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՄԵԿ ԳՐԱՄ ՀՈՂՈՒՄ (ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ)

Հողատիպը	Կուլտուրան	Վեգետացիայի շրջանը		
		Թփակալում	Ծաղկում	Լրիվ հասունաց.
Էջմիածնի գորշ	Աշնանացան ցորեն	—	211,0	441,5
	Առվույտ	—	771,0	293,0
	Բամբակ	65,0	110,0	75,1
	Կիսանապատ. բուսականութ	63,0	62,0	52,0
Կոտայք բաց շագանակագույն	Աշնանացան ցորեն	—	116,2	207,0
	Առվույտ	—	564,0	201,0
	Ծխախոտ	102,0	180,0	62,4
	Կիսանապատ. բուսականութ	68,0	65,5	30,2
Սեմյոնովկա սևահող	Աշնանացան ցորեն	—	93,6	42,5
	Կորնգան	—	322,1	95,1
	Կարտոֆիլ	76,0	108,5	72,2
	Ճմային բուսականութ.	48,0	41,2	18,0

հատկապես Էջմիածնի գորշ հողերում։ Նույն պատկերն է ներկայացնում նաև միկրոօրգանիզմների ընդհանուր քանակը, որի մասին տվյալներն ամփոփված են № 5 աղյուսակում։

№ 5 աղյուսակի տվյալներից երևում է, որ միկրոօրգանիզմների ընդհանուր քանակը նշված հողատիպերում կարող է տատանվել ըստ առանձին կուլտուրաների և ըստ վեգետացիոն շրջանի, բայց, այնուամենայնիվ, Էջմիածնի և Կոտայքի հողերում նրանց քանակը զգալիորեն ավելի մեծ է, քան Սեմյոնովկայի սևահողերում։ Դա բացատրվում է, մի կողմից՝ գորշ հողերի բիոգենության ավելի բարձր աստիճանով, մյուս կողմից՝ կլիմայական պայմանների տարբերությամբ։

Մի շարք տարիների տվյալների համաձայն՝ ձյան ծածկոցը Սևանում պահպանվում է 102—156 օր, սառնամանիքային օրերի

Աղյուսակ 5.

МИКРООРГАНИЗМНЕРИ —

ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿԸ 1 Գ. ՀՈՂՈՒՄ՝ ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ (ՎԻՆՈԳՐԱԴՍԿՈՒ, ՇՈՒԼԳԻՆԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՄԵԹՈԴՈՎ)

Գոտիներ	Կուլտուրաներ	Վեգետացիայի շրջանը		
		Թփակալում	Ծաղկում	Լրիվ հասունացում
Դաշտային	Աշն. ցորեն	—	751 65	1214,4
	Առվույտ	—	1873,4	764,65
	Բամբակ	303,0	280,9	17[illegible],85
	Կիսանապատային բուս.	173,85	102,85	98,21
Չոր տափաստանային	Աշն. ցորեն	—	547,0	703,1
	Առվույտ	—	1236,7	441,6
	Ծխախոտ	304,8	394,5	301,19
	Կիսանապատային բուս.	183,0	105,7	51,2
Լեռնատափաստանային	Աշնանացան ցորեն	—	361,5	285,6
	Կորնգան	—	563,4	313,5
	Կարտոֆիլ	212,6	652,8	199,7
	Ճմային բուսակ.	225,0	421,2	191,7

թիվը կազմում է 157, իսկ ամսական միջին ջերմությունը տարվա ընթացքում հավասար է 4—6,2°C։ Ըստ վեգետացիոն շրջանի ամիսների՝ միջին ջերմությունը հետևյալ պատկերն ունի. ապրիլին—6,1°C, մայիսին—11,3°C, հունիսին—14,8°C, հուլիսին—16,1°C և օգոստոսին—14,7°C, մինչդեռ էջմիածնի շրջանում օգտակար ջերմաստիճանի գումարը մինչև առաջին սառնամանիքը կազմում է 3870°C։ Ջերմային պայմանների նշված տարբերությունը ի թիվս այլ գործոնների, որոնց մասին կխոսվի հետագայում, չի կարող չազդել հետազոտվող հողատիպերում տարածված միկրոօրգանիզմների ընդհանուր քանակի, ինչպես և առանձին ֆիզիոլոգիական խմբերի վրա։

Ուսումնասիրվել է նաև ճառագայթասնկերի, բորբոսասնկերի և շաքարասնկերի քանակը գյուղատնտեսական կուլտուրաների

ծաղկման շրջանում։ Ցանքը կատարվել է քաղցու ագարի վրա, միաժամանակ հաշվի են առնված մսապեպտոնային ագարի և հողի էքստրակտ-գլիցերին ագարի վրա աճած գաղութները։ Տվյալները ամփոփված են № 6 աղյուսակում։

Աղյուսակ 6

ՍՆԿԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ՀՈՂԵՐՈՒՄ (1 Գ. ՀՈՂՈՒՄ՝ ՄԻԼԻՈՆՆԵՐՈՎ)

Շրջանը և հողատե-սակը	Կուլտուրան	Ճառագայթ-սնկեր	Ասպերգիլ-լուսներ	Պենիցիլ-լիում	Տրիխո-դերմա	Ֆուզարիում	Մուկորներ	Շաքարա-սնկեր
Էջմիածնի շրջան	Ցորեն	3,5	2,0	1,0	1,0	0,001	0,02	0,8
	Առվույտ	2 0	0 5	1,0	–	0,0015	0,001	0,2
	Բամբակ	1,5	0,6	0,9	0,01	0,0	0,0	0,01
	Կիսանապ. բուսակ.	—	0,4	0,5	—	—	0,003	0,01
Կոտայք մուգ շագանակա-գույն	Ցորեն	3,0	2,4	7,0	—	—	2,0	0,44
	Առվույտ	5,0	1,0	1,0	0,1	0,2	1,5	0,14
	Ծխախոտ	6,0	2,5	0,11	—	0,9	2,0	0,06
	Կիսանապ. բուսակ.	1,0	2,0	1,0	0,1	..	2,0	0,49
Սեմյոնովկա լեռնային	Ցորեն	9,0	1,0	0,5	0,5	0,8	1,0	0,57
	Կորնգան	11 0	0,9	0,4	—	1,0	0.1	—
	Կարտոֆիլ	13 0	0 5	0,3	—	0,3	7,0	6 0
	Ճմային բուսակ.	4 2	0,3	0 2	0,9	0,8	1,0	0,0

№ 6 Աղյուսակում ամփոփված տվյալներից երևում է, որ ճառագայթասնկերի և շաքարասնկերի քանակը Սեմյոնովկայի հողերում ավելի մեծ է, հատկապես կարտոֆիլով և կորնգանով զբաղեցված հողերում։ Կոտայքի շրջանում մեծ է բորբոսասնկերի, առանձնապես ասպերգիլյուսների և մուկորների քանակը։ Փոքր նոսրացումներում Aspergillus niger-ը ցանքի երրորդ օրը ծածկել էր ամբողջ թասի մակերեսը, մեծ նոսրացումների ցանքերում գերակշռում էին Asp. glaucus-ը, պենիցիլիումը և շաքարասնկերը։ Տարբեր հողատիպերի բորդ միկրոբիոլոգիական ցենոզում փոքր դեր չեն կատարում և՛ սնկերը, որոնց առատությունը երբեմն միանալով օրգա-

նական միացություններին և խոնավության բարձր պարունակությանը՝ կարող է որոշ չափով սահմանափակել միկրոօրգանիզմների այլ խմբերի զարգացումը, մի պատկեր, որին մենք հանդիպում ենք Սեմյոնովկայի հողերում: Վերը նշված միկրոօրգանիզմների քանակական, ինչպես նաև նրանց կենսական պրոցեսների փոփոխությունները, միաժամանակ մշակվող բույսերը ո՛չ միայն կախման մեջ են գտնվում արտաքին միջավայրից՝ հողից, բույսից. այլև նրանք իրենց հերթին խիստ փոփոխության են ենթարկում տվյալ միջավայրի բնույթը, դրա համար էլ մենք հարկ ենք համարում մեջ բերել հողերի ֆիզիկո-քիմիական առանձնահատկություններին վերաբերող մի քանի տվյալներ:

Հետազոտվող հողատիպերն ըստ իրենց ֆիզիկո-քիմիական հատկությունների՝ հետևյալ պատկերն են ներկայացնում.

Էջմիածնի շրջանի հողերը գորշ են, կուլտուր-ոռոգվող. թույլ ստրուկտուրային, ենթակավային, մանր ծակոտկեն. աննշան օրգանական մնացորդներով, ներփակումներ չունեն և աղաթթվից եռում են:

Կոտայքի շրջանի հողերը մեծ մասամբ բաց շագանակագույն են, ուժեղ կմախքային, ենթաավազային. Նրանցից ոմանք պարունակում են բազալտի խոշոր կտորներ, աղաթթվից եռում են. օրգանական մնացորդների պարունակությունն աննշան է:

Սևանի շրջանի հողերը սև են, ենթակավային. անկմախք. կնձկահատիկավոր, փուխր, հումուսային, օրգանական մնացորդները նշանակալի, աղաթթվից եռում են շատ թույլ:

Ինչպես տեսնում ենք, հետազոտվող հողատիպերը խիստ տարբերվում են իրարից: Հարթավայրերում մենք ունենք սովորաբար ավելի ծեր կիսանապատային հողեր, որոնք իրենց կուլտուրական հատկությունները պահպանում են մարդու միջամտության շնորհիվ: Չոր-տափաստանային կամ նախալեռնային գոտու հետազոտվող հողատիպը հիմնականում նույնպես կիսանապատային է. սակայն այստեղ վերցված է և այնպիսի նմուշ, որը դեռ նոր է կուլտուրականանում և, վերջապես, լեռնատափաստանային գոտու հողերը հզոր, լվացված սևահողեր են:

Հետազոտվող նմուշների մեխանիկական կազմին և որոշ ֆիզիկո-քիմիական հատկություններին վերաբերող տվյալները բերված են № 7 աղյուսակում: Տոկոսները հաշված են բացարձակ չոր հողի տվյալներով:

Աղյուսակ 7

ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ՀՈՂԱՏԻՊԵՐԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ՖԻԶԻԿՈՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շրջանը և ենթաշրջանը	Կուլտուրան	Կմախքը			Մանրահող						Հիգրոսկոպիկ խոնավություն	Լրիվ խոնավունակություն	Ծավալային կշիռը	Օրգանական նյութեր	$CaCO_3$	pH
		10—5	5—3	3—1	1—0,25	0,025—0,05	0,05—0,01	0,01—0,005	0,005—0,001	տիղմ և ֆիզ. կավ.						
Էջմիածնի [illegible]	Աշն. ցորեն	1,62	0,33	6,48	5,12	18,32	4,58	56,25	6,80	63,05	4,51	43,63	1,61	2,82	0,14	7,18
	Առվույտ	5,8	1,72	13,83	1,57	11,59	4,32	47,52	13,59	61,11	5,12	53,94	1,57	5,42	0,11	6,81
	Բամբակ	0,94	0,42	9,00	4,79	15,46	10,53	47,53	11,32	58,85	4,82	46,43	1,73	2,0	0,11	7 16
	Կիսանապ. բուս.	1,72	0,56	15,41	2,19	14,39	9,6	44,10	11,18	55,28	4,92	45,61	1,65	1,29	0,2	7,2
Կոտայք [illegible]	Աշն. ցորեն	19,18	2,74	12,08	1'11	18,34	5,12	28,07	11,33	39,40	3,83	36,60	1,38	6,15	0,33	7,71
	Առվույտ	0,27	2,2	16,57	1,01	14,17	9,31	45,14	11,33	56,47	4,21	48,22	1,61	6,23	0,26	7,0
	Ծխախոտ	չկա	0,25	19,35	1,0	12,08	6,82	49,16	11,33	60,43	5,27	44,45	1,35	4,86	0,22	7,37
	Կիսանապ. բուս.	2,71	2,7	17,57	1,13	16,17	9,31	41,02	9,21	50,23	4,14	47,11	1,38	6,42	0,33	7,1
Սեմյոնովկա [illegible]	Աշն. ցորեն	չկա	0,14	27,28	1,52	8,71	8,16	25,06	18,13	43,19	4,37	55,15	1,86	8,59	0,07	6,07
	Կորնգան	20,44	2,80	21,57	1,3	5,41	3,47	31,72	13,59	45,31	4,81	62,04	1,42	13,05	0,06	5,56
	Կարտոֆիլ	1,7	6,12	45,54	2,56	2,87	3,49	30,12	6,80	37,50	6,23	68,05	1,43	16,6	չկա	5,69
	Ճմային բուս.	0,5	2,7	31,56	2,45	6,2	4,15	32,92	19,26	35,18	6,87	68,94	1,92	16,98	չկա	5,42

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ հետազոտվող հողատիպերի նմուշները տարբերվում են ինչպես իրենց կմախքայնությամբ, այնպես և 0,001 մմ և ավելի փոքր տրամագիծ ունեցող մասնիկների պարունակությամբ։ Սակայն ըստ երևույթին հողի ստրուկտուրան վճռական նշանակություն չունի ազոտոբակտերների տարածման համար, քանի որ անգամ այնպիսի թույլ ձևավորված հողը, ինչպիսին է Կոտայքի հողը, անհամեմատ ավելի հարուստ է ազոտոբակտերներով, քան Սեմյոնովկայի կայուն կնձկային ստրուկտուրա ունեցող սևահողը։

Ըստ երևույթին հետազոտվող հողերի ֆիզիկական հատկությունները նույնպես առանձին դեր չեն խաղում ազոտոբակտերների տարածման գործում, այլապես Սեմյոնովկայի սևահողերը ինչպես իրենց հիգրոսկոպիկ խոնավությամբ (4,31—6,87%), այնպես և լրիվ խոնավունակությամբ (55,15—68,94%) ավելի բարենպաստ միջավայր պետք է հանդիսանային ազոտոբակտերների զարգացման համար, մինչդեռ նրանք անհամեմատ ավելի քիչ ազոտոբակտերներ են պարունակում, քան Կոտայքի կամ Էջմիածնի հողերը. Հիշատակված ֆիզիկական հատկությունների տարբերությունը բացատրվում է ո՛չ միայն ստրուկտուրայի տարբերությամբ, այլև օրգանական նյութի քանակով։ Այն ժամանակ, երբ Սեմյոնովկայի հողերում օրգանական նյութը կազմում է 8,59—16,98%, Կոտայքի նմուշներում դա հասնում է 4,86—6,42%-ի, իսկ Էջմիածնի նմուշներում՝ 1,28—5,42%-ի։ Ինչպես երևում է նույն աղյուսակի տվյալներից, նույնատիպ հողերում օրգանական նյութի պարունակությունը տատանվում է ըստ մշակվող կուլտուրաների. Էջմիածնի հողերում դա հասնում է մաքսիմումի երրորդ տարվա առվույտի մերձարմատային հողում (5,42%), Կոտայքի հողերում՝ նույնպես երրորդ տարվա առվույտի մերձարմատային հողում (6,23%) և, վերջապես, Սեմյոնովկայի նմուշներից՝ ձմաշերառում (16,98%) և կարտոֆիլի մերձարմատային հողում (16,6%)։ №№ 1 և 7 աղյուսակների տվյալների համեմատությունից պարզվում է, որ Էջմիածնի և Կոտայքի հողերի օրգանական նյութի պարունակության և ազոտոբակտերների քանակության միջև գոյություն ունի ուղիղ հարաբերություն. որքան շատ է օրգանական նյութը տվյալ նմուշում, այնքան ավելի մեծ է ազոտոբակտերների թիվը և՝ հակառակը։ Սեմյոնովկայի նմուշներում նկատվում է հակառակ հարաբերություն. որքան շատ է օրգանական նյութի պարունակությունը, այնքան փոքր է ազոտոբակտերների քանակը։ Պետք է ենթադրել,

որ կա օրգանական նյութի կուտակման ինչ-որ մի սահման, որից բարձր պարունակությունն արդեն ճնշում է ազոտոբակտերների զարգացումը և ազդում ինչպես նրա մորֆոլոգիական հատկանիշների, այնպես և նրա ֆիզիոլոգիական հատկությունների վրա։

Վիլյամսը նշում է (1949), որ հողառաջացման պրոցեսի ամենակարևոր էությունը օրգանական նյութի սինթեզումն ու քայքայումն է։ Եթե տարբեր հողատիպեր իրարից տարբերվում են օրգանական նյութի պարունակությամբ և նրա քայքայման ինտենսիվությամբ, ապա պարզ է, որ օրգանական նյութի տրանսֆորմացիայի աստիճանը պետք է ազդի տվյալ հողատիպի միկրոֆլորային ցենոզի վրա ընդհանրապես և ազոտոբակտերների զարգացման վրա՝ մասնավորապես։

Կալցիումի պարունակությունը հողում, ինչպես և դրա հետ կապված հողի ակտուալ թթվությունը նույնպես ազդում է ազոտոբակտերների զարգացման վրա։ Մեր հետազոտած հողերի նմուշներում կալցիումը որոշվել է կալցիմետրով, իսկ հողի ակտուալ թթվությունը՝ պոտենցիոմետրով։ Ինչպես երևում է № 7 աղյուսակի տվյալներից, կալցիումի պարունակությունը էջմիածնի և Կոտայքի հողերում ավելի մեծ է, քան Սեմյոնովկայի սևահողում։ Դա հետևանք է այն բանի, որ լվացման պրոցեսները Սեմյոնովկայի հողերում ավելի ինտենսիվ են ընթանում։ Սեմյոնովկայի առատ մթնոլորտային տեղումների պայմաններում (700—750 մմ) և սևահողերի բարձր ջրաթափանցելիության հետևանքով հողի մեջ եղած կալցիումի կարբոնատը անընդհատ լուծվում է, տեղումների մեջ պարունակվող ածխաթթվի մեջ և հեռանում վերնաշերտից դեպի հողի ավելի խոր շերտերը։ Մյուս կողմից՝ սևահողերի կալցիումը և մագնեզիումը գտնվում են հումուսի կողմից կլանված կատիոնների վիճակում։

Բնական է, որ հողի ակտուալ թթվությունը ճիշտ հակառակ պատկերը պետք է ներկայացնի։ Նույն աղյուսակի տվյալներից երևում է, որ էջմիածնի և Կոտայքի գորշ հողերի ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմքային (pH 7,0—7,71), իսկ Սեմյոնովկայի սևահողերինը՝ թթու կամ թույլ թթվային (pH 5,4—6,07)։

Ինչպես Ֆյոդորովի (1952), այնպես և Բլինկովի (1951) փորձերը հաստատում են, որ ազոտոբակտերների զարգացման և նրանց կողմից ազոտի կապման ստորին սահմանը մոտենում է pH 5,6, իսկ ավելի լավ արտահայտվում է pH 7,3—8,1։ Հիշատակված փորձերը և մեր տվյալները բերում են այն հետևության

որ ի թիվս նշված պատճառների, Սեմյոնովկայի հողերի թթվային ռեակցիան և կալցիումի սակավությունը ևս սահմանափակում են ինչպես ազոտոբակտերների քանակը, այնպես և նրանց ազոտ ֆիքսելու կարողությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ազոտոբակտերները ամենից շատ տարածված են էջմիածնի գորշ հողերում (դաշտային գոտի)։ Կոտայքի բաց շագանակագույն հողերը (չոր տափաստանային գոտի) ըստ ազոտոբակտերների պարունակության գրավում են միջին տեղը և ավելի շատ մոտենում են էջմիածնի գորշ հողերին, իսկ Սեմյոնովկայի սևահողերը (լեռնատափաստանային գոտի) համեմատաբար աղքատ են ազոտոբակտերներով։

2. Azotobacter chroococcum-*ի տեսակարար կշիռը բարձր է էջմիածնի և Կոտայքի հողերում և շատ թույլ է արտահայտված Սեմյոնովկայի սևահողերում։*

3. Ազոտոբակտերները, հատկապես Azotobacter chroococcum-*ը հարմարված են այն հողերին, որտեղ օրգանական նյութի տրանսֆորմացիան ավելի խոր է գնացել, և որտեղ օրգանական նյութի հանքայնացումն ավելի ինտենսիվ է ընթանում։*

4. Ազոտոբակտերների զարգացումը Սեմյոնովկայի հողերում սահմանափակվում է օրգանական միացությունների բարձր պարունակությամբ, կալցիումի սակավությամբ և հողի թթվային ռեակցիայով։

5. Սևահողային պայմաններում ազոտոբակտերների քանակը ո՛չ միայն փոքր է, այլև դրանք մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական խիստ փոփոխության են ենթարկված։

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Блинков Г. Н. 1951. Рост азотобактера и азотофиксации в условиях кислой и щелочной среды. „Микробиология", т. XX, вып. 4, стр. 330—335.
2. Вильямс В. Р.—1949. Почвоведение. Сельхозгиз, Москва.
3. Домрачева К. А.—1931. По Сушкиной Н. Н. Эколого-географическое распространение азотобактера в почвах СССР.
4. Иванов В. Н. 1947. Почвенные условия Памира и пути развития земледелия. Госиздат Таджикской ССР, Сталинабад.
5. Исаченко Б. Л. и Симакова Т. Л. — 934. По Феодорову. Биологическая фиксация азота атмосферы.

6. Красильников Н. А.—1934. Влияние корневых выделений на развитие азотобактера и других почвенных микробов. „Микробиология", т. III, вып. 3, стр. 343—358.
7. Красильников Н. А.—1944. Влияние растительного покрова на микробный состав в почве. „Микробиология", т. XIII, стр. 187.
8. Паносян А. К. -1939. Некоторые данные о микробиологии почв Армянской ССР. Доклады Всес. акад. сельхоз. наук им. Ленина, вып. 19, стр. 25.
9. Паносян А. К.—1950. Азотобактеры солончаковых почв. Микробиологич. сборник АН Арм. ССР, вып. V, стр. 125—143.
10. Петросян А. П., Киракосян А. В., Мирзабекян Р. О., Мeграбян А. А.—1940. Микробиологическая характеристика почв Октембeрянского, Сталинского (Нахичеванская АССР) и Ленинаканского районов. Труды научно-исследовательской станции полеводства НКЗ Арм. ССР, вып. I, стр. 142—153.
11. Петросян А. П., Наринян Л. А., Карагулян С. А.—1949. Распространенность азотофиксирующих бактерий в ризосфере хлопчатника и люцерны. Микробиологический сборник АН Арм. ССР, вып. IV, стр. 13—21.
12. Савостин П. В.—1938. Азотобактер и высшее растение. „Микробиология", т. VII, вып. 2, стр. 5? - 163.
13. Сидоренко А. И. 1940 Развитие азотобактера в ризосфере сельскохозяйственных растений. „Микробиология", т. IX, вып. 2, стр. 153 -159.
14. Сушкина Н. Н.—1941 Распространение азотобактера в почвах сухих степей и пустынь. Доклады АН СССР, т 31, № 3, стр 291
15. Сушкина Н. Н. 9... Эколого-географическое распространение азотобактера в почвах СССР. Изд. АН СССР. Москва.
16. Танатин Б. Я. - 951. О наличии азотобактера в почвах Туркестанского хребта. „Микробиология", т. XX, вып. 6, стр. 506 -51?.
17. Феодоров М. В. 1952. Биологическая фиксация азота атмосферы. Сельхозгиз, Москва
18. Փանոսյան Հ. Կ. և Մեհրաբյան Ա. Ա. —1940. ՀՍԽՀ. Ղամարլուի շրջանի հողերի միկրոբիոլոգիական բնութագրումը: Կրիմիայի և ագրոհողագիտական գիտ. հետազոտ. կայանի աշխատությունները. պր. 1, էջ 154 -160։
19. Փանոսյան Հ. Կ., Թառայան Շ. Ս. և Հարությունյան Ռ. Շ.—1949. Ազոտի ասիմիլյացիայի վրա հացազգիների արմատային սիստեմի ազդեցության շուրջը. Հայկ. ՍՍՌ Գիտ. ակադեմիայի միկրոբիոլոգիական ժողովածու. պր. 4 էջ 1 1։

Ш. В. МЕЛИКЯН

РАСПРОСТРАНЕНИЕ АЗОТОБАКТЕРИЙ В НЕКОТОРЫХ ТИПАХ ПОЧВ АРМЯНСКОЙ ССР

РЕЗЮМЕ

У большинства исследователей, изучающих эколого-географическое распространение азотобактерий в различных типах почв, установилось мнение, что в степной и пустынной зонах азотобактерии встречаются лишь в почвах с повышенной влажностью, между тем как в луговых почвах черноземного и каштанового типа, так и в дерново-луговых почвах их много, и они легко обнаруживаются.

Наши исследования 1951—1952 годов показали, что наибольшее число азотобактерий содержится в бурых почвах Эчмиадзинского района (полупустынная зона). Светлокаштановые почвы Котайкского района (зона сухой степи) по содержанию азотобактерий занимают как бы среднее место, более приближаясь к бурым почвам. Черноземы же окрестностей Семеновки (горностепная зона) содержат наименьшее количество азотобактерий. Упомянутая закономерность проявляется также в целинных почвах всех исследуемых типов. Особенно бедны азотобактериями черноземы под растительным покровом разнотравного луга.

Удельный вес Azotobacter chroococcum в бурых почвах полупустынной зоны выше, чем в светлокаштановых почвах сухой степи, в черноземах же горностепной зоны выражен весьма слабо.

Азотобактерии, особенно Azotobacter chroococcum, приспособлены к тем типам почв, в которых трансформация органических веществ зашла глубже и где процессы минерализации протекают интенсивнее.

К причинам, ограничивающим распространение азотобактерий в черноземах горностепной зоны, можно отнести высокое содержание в них азотистых органических веществ, недостаток кальция, кислую реакцию и неблагоприятные метеорологические условия.

Перечисленные причины влияют не только на количество азотобактерий, распространенных в черноземах горностепной зоны, но также на ряд их морфологических признаков и физиологических свойств.

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
40 1953

А. Г. ТЕР-ПОГОСЯН

ЗАМЕТКА О ФАУНЕ HYDRACARINA ДОЛИНЫ РЕКИ АРАКС

Фауна Hydracarina Арм. ССР очень мало изучена; кроме напечатанных двух работ, у нас в этой области ничего нет. В первой работе (1) среди других обитателей реки Зангу (Раздан) упомянуты и клещи, а вторая (2) целиком посвящена клещам озера Севан и в приложении—некоторых рек и водоемов нашей страны. (В этой же работе затронут вопрос о практическом значении клещей вообще).

Летом 1948 г. студентка Ерев. гос. университета им. В. М. Молотова Ж. Григорян по нашей просьбе собрала водяных клещей из водоемов, расположенных в окрестностях четырех сел Арташатского района Арм. ССР, недалеко от левого берега реки Аракс. Водоем, лежащий близ села Мргануш, представляет собой заросщую лужу, а другие три, расположенные в окрестностях сел Айгестан, Каначут и Бзован,—скудно заросшие мелкие водоемы. Водоемы эти временные, т. к. питаются водами, орошающими соседние хлопковые поля.

Собранный материал состоит примерно из 25 проб. Пробы эти взяты в утренние и вечерние часы в последнюю декаду июня и в первую половину июля и августа 1948 г.

Первый и общий просмотр этих проб поразил нас своей необычайностью для фауны гидрахнелл Арм. ССР. Все эти клещи из четырех водоемов, как будто на выбор, принадлежали сем. Eylaidae и роду Eylais Latreille; все они в большинстве крупных размеров и, по замечанию собирателя материала, красного цвета. Между тем ни среди обработанных нами (с. Симонян) клещей, ни из собранных из разных рек и водоемов Армении (Поповой, Жадиным, Фридман) и определенных Соколовым, не упоминается о представителях рода Eylais.

Помимо Eylaidae, в сборах нами было выявлено несколько экземпляров из семейств Hydrachnidae и Hydryphantidae.

Определение видов рода Eylais вообще считается очень хлопотливым и трудным, особенно если нет соответствующей обширной литературы. Обычно для определения видов рода имеют в виду особенности глазных «очков», их величину и форму, глазные капсули, передние и задние глазные линзы, длину и ширину глазных мостиков, форму их передних и задних краев и еще много других анатомо-морфологических признаков, а все эти признаки сильно изменчивы.

При определении нашего материала мы столкнулись с неожиданностью, а именно: материал, казавшийся хорошим, был плохо консервирован, не поддавался расчленению и при обработке разваливался, в то время как он мог бы дать нам не только новые разновидности, но и новые виды — даже по очковым изменчивостям. Тем не менее нам удалось на этом материале определить не только указанные выше семейства, но и некоторые виды, им принадлежащие:

I. Сем. Eylaidae, род Eylais Latreille,
   1. Eylais infundibulifera Koen.
   2. E. mülleri Koen.
   3. E. rimosa Piers.

II. Сем. Hydrachnidae, род Hydrachna O. F. Müller.
   4. Hydrachna cruenta O. Müll. Этот вид известен также из Тохмахангела и из оз. Севан.
   5. Hydrachna skorikowi Piers также известен из Тохмахангела.

III. Сем. Hydryphantidae, р. Hydryphantes C. L. Koch, намечается у нас впервые.

Если в мелких водоемах и на очень ограниченном пространстве одного только района Армении обнаружены в таком большом количестве Eylaidae и представители еще двух других семейств, это указывает на необходимость изучения Hydracarina не только долины реки Аракс, а всей Армении вообще.

Кафедра зоологии

ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА

1. Бенинг А. Л. и Попова А. Н.—Материалы по гидробиологии реки Занги от истоков до г. Еревана. Тр. Сев. гидробиол. станц., т. VIII, 1947.
2. Тер-Погосян А. Г. и Симонян Р. С.—К познанию фауны Hydracarina озера Севан (с приложением). Сборник Зоологического института АН Арм. ССР, т. VIII, 1953.
3. Соколов И. И. Hydracarina—Водяные клещи, ч. 1, Hydrachnellae (Фауна СССР, Паукообразные, т. V, вып. 2), 1940.
4. Koenike F. Acarina, Milben (Die Süsswasserfauna Deutschlands, Heft. 12, 1909).

Ա. Գ. ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՔՍԻ ՀՈՎՏԻ ՋՐԱՅԻՆ ՏԶԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի ջրային տզերի ֆաունան շատ չնչին չափով է ուսումնասիրված։

Արտաշատի շրջանի չորս գյուղի շրջակայքի չորս մանր ջրակալներից 1948 թ. Ժ. Գրիգորյանի հավաքած ջրային տզերը գրեթե բացառապես Eylaidae *(«ակնոցավոր» տզերի) ընտանիքին էին պատկանում, որ առաջին անգամ են հայտնաբերվում Հայաստանում։ Հեղինակը հարց է դնում. եթե միմիայն մի շրջանի շատ փոքր տարածության վրա գտնվող ջրակալները ուրիշ երկու ընտանիքներ էլ են տվել, ապա նշանակում է՝ ո՛րչափ անհրաժեշտ է ո՛չ միայն Արաքսի մյուս շրջանների, այլև ամբողջ Հայաստանի բազմազան շրջանների ջրային տզերի ուսումնասիրությունը։*

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
40 1953

Ս. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիզիոլոգիայի զարգացումը Հայաստանում սերտ կերպով կապված է Երևանի պետական համալսարանի հետ, որը հիմնվել է Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին օրերին՝ 1921 թ.: Ֆիզիոլոգիայի առաջին ամբիոնը Պետական համալսարանում կազմակերպվել է Տ. Պ. Մուշեղյանի համառ ջանքերով, որն իր վրա ունենալով ռուս ականավոր գիտնական Ն. Ե. Վվեդենսկու անմիջական ազդեցությունը, կարողացել է ֆիզիոլոգիայի զարգացումը համալսարանում և ամբողջ Հայաստանում տալ ճիշտ մատերիալիստական ուղղություն։

Ֆիզիոլոգիան, որպես գիտություն, Հայաստանում առաջինը սկսեց ավանդել Տ. Պ. Մուշեղյանը Պետական համալսարանի ֆիզիոլոգիայի ամբիոնում։

Տ. Պ. Մուշեղյանի կրքոտ նվիրվածությունը ֆիզիոլոգիական գիտությանը՝ մեծ ազդեցություն թողեց ուսանողների վրա և նրանց մեջ խոր համակրանք ու սեր զարգացրեց դեպի այդ գիտությունը։

Մի շարք լավագույն ուսանողներ ներգրավվեցին ամբիոնի աշխատանքների մեջ և սկսեցին խորացնել իրենց ֆիզիոլոգիական գիտելիքները։

Սակայն ամբիոնն այդ ժամանակաշրջանում իր չնչին հնա-

բավորությամբ, կահավորվածությամբ և գործիքներով դեռ շատ հեռու էր ուսման պրոցեսին բավարար չափով ծառայելու հնարավորություններից։ Համապատասխան կադրերի, ինչպես նաև աշխատանքային մինիմալ պայմանների՝ բազայի բացակայության պատճառով, այդ թվականներին ամբիոնում գիտա-հետազոտական աշխատանքներ համարյա բոլորովին չէին կատարվում, և ամբիոնի գործունեությունը սահմանափակված էր միայն մանկավարժական աշխատանքներով։ Այդ պատճառով էլ ամբիոնի աշխատանքների մեջ ներգրավված մի խումբ ուսանողներ համալսարանն ավարտելուց հետո, 1926/30 թթ. գործուղվում են Մոսկվա, Լենինգրադ՝ սովորելու ասպիրանտուրաներում և կատարելագործվելու մայրաքաղաքում ու Լենինգրադում Պավլովի կողմից ղեկավարվող ֆիզիոլոգիական լաբորատորիաներում։

Գործուղվածների թվում էին Է. Հասրաթյանը, Ա. Ալեքսանյանը, Դ. Գզգզյանը, Գ. Մուշեղյանը, ինչպես նաև մի շարք ուսանողներ՝ Մ. Դուրմիշյանը, Հ. Հովհաննիսյանը և Ռ. Բարսեղյանը։

Այս շրջաններում Էզրաս Հասրաթյանը Հայաստանում արդեն ամենաականավոր դեմքերից մեկն էր ֆիզիոլոգիայի բնագավառում։ Նա գրում է էքսպերիմենտալ բնույթի մի շարք գիտական հոդվածներ, որոնք արժանանում են գիտական հասարակայնության ուշադրությանը։ Դրանցից են՝ «Երիկամի մասնակի ռեզեկցիայի ազդեցությունը նրա ֆունկցիայի վրա», «Երիկամի հոգնածությունը», «Միզանյութի արտադրումը», «Վերին սիմպատիկ դանգլիաների էքստիրպացիայի ազդեցությունը պայմանական ռեֆլեքսների վրա»։

Իր ժամանակին Հասրաթյանի այս աշխատություններին մեծ գնահատական է տվել Ի. Պ. Պավլովը, իսկ շատ տարիներ հետո պավլովյան ֆիզիոլոգիական ուսմունքին նվիրված երկու ակադեմիաների միացյալ սեսիայում այդ աշխատությունների արժանիքները նշեց նաև Իվանով-Սմոլենսկին իր զեկուցման մեջ։

1928 թ. Լենինգրադից Երևան վերադառնալուց հետո, վերահիշյալ անձնավորությունները Է. Հասրաթյանի գլխավորությամբ նոր թափով սկսեցին զարգացնել ֆիզիոլոգիական գիտությունը պավլովյան ոգով, որի ղեկավարությամբ նրանք կատարելագործվել էին։

Ուսումնասիրություններն ընթանում էին գլխավորապես պայմանական ռեֆլեքսների ուղղությամբ։ Ուսումնասիրությունները հիմնականում կատարվում էին կրիաների վրա։ Հեղինակները

եկան այն եզրակացության, որ կրիաների մոտ պայմանական ռեֆլեքսները զարգանում են ավելի արագ և լինում են առավել կայուն, քան մյուս կենդանիների հետ համեմատած։ Միևնույն ժամանակ այս հետազոտություններով ապացուցվում է, որ կրիաների մոտ արգելակման պրոցեսներն ավելի դժվարությամբ են առաջանում։

Այս լաբորատորիայում Հայրապետյանը, Գրիգորյանը, Գ. Մուշեղյանը կատարում են նաև կարևոր նշանակություն ունեցող մի շարք այլ հետազոտություններ։ Դրանց թվին են պատկանում «Էլեկտրոֆիզիոլոգիայի նոր մոդիֆիկացիան», «Մկանային աշխատանքը և շնչառության ազդեցությունը երիկամների ֆունկցիայի վրա», «Արզնու հանքային ջրի ազդեցությունը երիկամի ֆունկցիայի վրա» աշխատությունները, որոնց մի մասը զեկուցվել է համամիութենական համագումարներում և տպագրվել կենտրոնական ժուռնալներում։

Այս ասպիրանտները մեծ աշխատանք են կատարել լաբորատորիայի կահավորման և առանձնապես պայմանական ռեֆլեքսների կամերայի կազմակերպման գործում։

Այս շրջանում մեր լաբորատորիայում առաջին անգամ առաջարկվում է սերմնածորանի ֆիստուլա պատրաստելու նոր մեթոդ, որն իր ժամանակին արժանացավ Պավլովի ուշադրությանը։

Սկսած 1930 թ.՝ Է. Հայրապետյանի ղեկավարությամբ լաբորատորիայում ծավալվում են ուսումնասիրություններ՝ ներվային սիստեմի պլաստիկականության հարցերի շուրջը։ Այդ ուղղությամբ առանձնապես ուշագրավ են՝ «Մեծ ուղեղի կեղևի ազդեցությունը ներվերի խրոնաքսիայի և ռեֆլեքսների վրա վերջույթների դեաֆերենտացիայից և ողնուղեղի հեմիսեկցիայից հետո», «Ճեղքված ողնուղեղի ֆիզիոլոգիայի մասին» և այլ աշխատություններ։

Մեր հանքային ջրերի ֆիզիոլոգիական հետազոտություններին Հայաստանում հիմք է դրվում համալսարանի լաբորատորիայում՝ Է. Հայրապետյանի ղեկավարությամբ։ Այս ուղղությամբ առանձնապես նշանակալից է Գ. Պ. Մուշեղյանի աշխատանքը. նա իր հետազոտությունները կատարել է հնարավորին չափ բազմակողմանիորեն։ Ուսումնասիրվել են օրգանիզմի մի շարք վեգետատիվ ֆունկցիաները՝ պերիֆերիկ ներվերի ռեգեներացիան, սառնարյուն կենդանիների սրտի գործունեությունը, հարթ մկանների կծկումները, ստամոքսի սեկրետոր ֆունկցիան, լյարդի կողմից լեղու առաջացումը և լեղապարկից լեղու հեռացումը, նյութափո-

մոքսային գեղձի էքսկրետոր ֆունկցիան, երիկամների [illegible] ֆունկցիան և այլն։ Այս բոլոր ֆունկցիաները ուսումնասիրվել են Հայաստանի հանքային ջրերի (Արզնի, Դիլիջան, Ջերմուկ) ազդեցության պայմաններում։

Որպես ընդհանուր թերություն պետք է նշել, որ [illegible] բոլոր այս հետազոտությունները կատարվել են անշարժացված կենդանիների վրա, հաշվի չառնելով նյարդային սիստեմի, մասնավորապես մեծ ուղեղի կեղևի առաջատար դերը։

1930 թ. Պետական համալսարանը վերակազմավորվում է, և նրա ֆակուլտետներից շատերը դառնում են առանձին ինստիտուտներ՝ մանկավարժական, գյուղատնտեսական, բժշկական և պոլիտեխնիկական։

1930/34 թթ. կենդ. ֆիզիոլոգիայի ամբիոնն անցնում է Մանկավարժական ինստիտուտին։ Դա տեղավորված էր Աբովյան փողոցի № 124 շենքում և զբաղեցնում էր 5 սենյակ։

1934 թ. Մանկավարժական ինստիտուտը վերակազմավորվում է և կրկին կազմակերպվում է Պետական համալսարան։

Այդ ժամանակամիջոցում կենդանիների ֆիզիոլոգիայի լաբորատորիան բավականին հարստացավ, ձեռք բերվեց [illegible]կան և արտասահմանյան գործարաններից [illegible] գործիքներ՝ կիմոգրաֆներ, միոգրաֆներ, կարդիոգրաֆներ, [illegible]նագիտական սարքավորումներ և այլն։

1936 թ., Տիգրան Մուշեղյանի մահից հետո, ամբիոնի ղեկավարությունն անցնում է Դավիթ Գզգզյանին, իսկ 1937 թվականից՝ Գրիգոր Մուշեղյանին։

1937 թվականից ամբիոնի աշխատողների թիվն ավելանում է երիտասարդ կադրերով։ Այդ թվականներին Ն. Պ. Ալեքսանյանը դասախոսում էր մարդու անատոմիա, Հ. Խ. Բունիաթյանը՝ կենսաքիմիա, իսկ Ա. Գ. Հարությունյանը վարում էր ասիստենտի պաշտոն։

Այդ նույն թվականից մանկավարժական աշխատանքների հետ միասին ամբիոնը վերսկսում է կատարել նաև գիտահետազոտական աշխատանքներ։ Այդ ժամանակաշրջանում ամբիոնում կատարվող ուսումնասիրությունների օբյեկտ հիմնականում հանդիսացել է թքի ուսումնասիրված փայծաղի ֆունկցիան և նրա կապը մյուս օրգանների, ինչպես նաև կենտրոնական նյարդային սիստեմի հետ։

Ուսումնասիրվել են նաև Երևանի խմելու ջրի ազդեցությունը երիկամների ֆունկցիայի վրա, ուղեղիկի ֆունկցիան օնտոգենե-

տրիկ և ֆիլոգենետիկ տեսանկյունով, ինչպես նաև մի շարք անեստետիկ նյութի սինթետիկ պրեպարատներ (սինթեզել է պրոֆ. Մնջոյանը)։ 1938 թ. ամբիոնն ունեցել է ասպիրանտ բիոքիմիայի գծով (Ս. Մ. Ստեփանյան), իսկ 1937 թվականից կազմակերպվել է մի շարք թեկնածուական դիսերտացիաների պաշտպանություն։ Այսպես, օրինակ՝ 1937 թ. Գ. Պ. Մուշեղյանը հանդես է եկել «Колебание количества амилолитического фермента в моче и крови при периодической деятельности желудочно-кишечного тракта» *թեմայով, 1942 թ. Ս. Մ. Ստեփանյանը՝ «Ամինոթթուների մասնակցությունը ասկորբինաթթվի (վիտամ. «C»-ի) փոխանակության մեջ» թեմայով, 1945 թ. Ա. Գ. Հարությունյանը՝* «К вопросу о влиянии селезенки на периодическую деятельность пищеварительного аппарата вне пищеварения» *թեմայով։*

Սկսած 1943 թվականից՝ Ա. Գ. Հարությունյանը վարում է ավագ դասախոսի պաշտոն։ Դասախոսում է մարդու անատոմիայի դասընթացը կենսաբանական ֆակուլտետի 1-ին կուրսում, իսկ 1947 թ. սկսած է դասախոսել նաև բարձր ներվային գործունեության դասընթաց՝ Պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի տրամաբանության և հոգեբանության բաժնի 1-ին կուրսերում։

1942—43 ուս. տարուց հետո 5-րդ կուրսի ուսանողությունը պետական քննություններին զուգընթաց կատարում է նաև դիպլոմային աշխատանքներ։

Կենդանիների ֆիզիոլոգիայի գծով 1943—1952 թթ. դիպլոմային աշխատանք են պաշտպանել 32 ուսանող, որոնցից մի քանիսը համալսարանն ավարտելուց հետո անցել են գիտա-հետազոտական աշխատանքի, ինչպես, օրինակ՝ Ֆլորա Համբարձումյանը՝ որպես կրտսեր գիտ. աշխատող Հայկ. Գիտութ. ակադեմիայի Ֆիզիոլոգիայի ինստիտուտում, Վահանդուխտ Գրիգորյանը, Տատյանա Հարությունյանը, Սիդա Զաքարյանը՝ որպես ավագ լաբորանտներ համալսարանի ֆիզ. ամբիոնում, Ռաֆիկ Բուբուշյանը՝ որպես ամբիոնի ասպիրանտ։

1947— 48 ուս. տարում բիոլոգիական ֆակուլտետը բաժանվում է ցիկլերի՝ բույսերի սիստեմատիկայի, բույսերի ֆիզիոլոգիայի, կենդանաբանության, կենդանիների ֆիզիոլոգիայի և գենետիկայի ու դարվինիզմի։

Ուսանողական դիպլոմային աշխատանքները, մինչև պավ-

լովյան սեսիան, հիմնականում կատարվել են հետևյալ բնույթի թեմաների շուրջը, որոնցից իբրև օրինակ կարելի է նշել՝

1) «Շաքարասնկերի ազդեցությունը հավի ձվատվության և արյան ձևավոր տարրերի քանակի, հեմոգլոբինի տոկոսի և արյան մակարդման արագության փոփոխության վրա»:

2) «Շաքարասնկերի ազդեցությունը հավի ճուտերի կենդանի քաշի, աճի ու արյան ձևավոր տարրերի և արյան մակարդման արագության փոփոխության վրա»:

3) «Հայաստանի կարիճների թույնի ազդեցությունը արյան ձևավոր տարրերի և հեմոգլոբինի տոկոսի փոփոխությունների վրա»:

4) «[illegible] հատկության» մասին և մի շարք այլ թեմաներ:

Պավլովյան սեսիայի որոշումներից հետո պարզվեց, որ ամբիոնի աշխատանքների մեջ մինչ այդ գոյություն են ունեցել մի շարք թերություններ, առանձնապես ֆիզիոլոգիայի ընդհանուր կուրսի, անասնաբուժության և բիոքիմիայի դասավանդման գործում: Հիշված առարկաների դասավանդումը հենվել է այնպիսի դասագրքերի և ծրագրերի վրա, որոնց մեջ թերագնահատված է, իսկ մի շարք դեպքերում էլ նույնիսկ անտեսված է ռուս մեծ գիտնական-ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովի ուսմունքը. պավլովյան ֆիզիոլոգիան չի դարձել երիտասարդ մասնագետ ֆիզիոլոգների և գիտական-մանկավարժական կադրերի սեփականությունը: Ամբիոնի գիտա-հետազոտական աշխատանքների ասպարեզում թույլ է յուրացվել և կիրառվել պավլովյան ուսմունքը: Դասախոսությունների ժամանակ փորձերի ցուցադրումներ չեն եղել, իսկ լավագույն դեպքերում սահմանափակվել են հասարակ փորձերի ցուցադրումներով: Ամբիոնին կից չի գործել ուսանողական գիտական խմբակ և, այսպիսով, ուսանողները հնարավորություն չեն ունեցել զարգացնելու իրենց գիտական ունակությունները: Պայմանական ռեֆլեքսների ուղղությամբ ոչ մի աշխատանք չի կատարվել: Քիչ են խրախուսվել ուսանողների ինքնուրույն աշխատանքները: Ֆիզիոլոգիայի գծով մասնագիտացող ուսանողների համար մասնագիտական առարկաներ համարյա չեն ավանդվել, իսկ առանձին դեպքերում սահմանափակվել են մեկ-երկու առարկայով: Ուսանողները չեն ներգրավվել ամբիոնի աշխատանքներում: Ամբիոնին կից սեմինար պարապմունքներ չեն կազմա-

կերպվել։ Սովետական ֆիզիոլոգիայի կլասիկների դերը չափազանց թույլ է լուսաբանվել ինչպես ուսանողների համար կարդացվող դասախոսությունների, այնպես էլ այլ զեկուցումների ժամանակ։

Բնակչության մեջ պավլովյան ուսմունքի մասսայականացման ուղղությամբ ամբիոնի աշխատակիցներն առանձնապես շոշափելի աշխատանք չեն կատարել։

Պավլովյան ֆիզիոլոգիական ուսմունքին նվիրված ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի և ՍՍՌՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի միացյալ սեսիայի աշխատանքները համընկնում են ամբիոնի հետևյալ անմխիթար վիճակի հետ. չնայած մեր ամբիոնը բացառություն էր ներկայացնում ամբողջ ՍՍՌՄ-ի համապատասխան ամբիոնների նկատմամբ, այն իմաստով, որ նա, ի տարբերություն մյուս համալսարանների բոլոր նման տիպի ամբիոնների, բացի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայից, ընդգրկում էր իր մեջ նաև մարդու անատոմիա, բիոքիմիա, անասնաբուծություն առարկաները, սակայն նա տեղավորված էր մի փոքր սենյակում, որտեղ պետք է կատարվեին բոլոր տեսակի ուսումնա-մեթոդական և գիտական աշխատանքները, իսկ մյուս կողմից՝ համարյա բացակայում էր նյութական բազան՝ չկար վիվարիում, բացակայում էին փորձի ենթակա կենդանիները խնամելու հնարավորություններ, բարձրորակ գիտական աշխատանքներ կատարելու համար ապարատներ (օսցիլոգրաֆ, խրոնակսիմետր. Վարբուրգի ապարատ, Հոլդենի գործիք և այլն)։ Չկար հայերեն լեզվով ոչ մի դասագիրք ֆիզիոլոգիայի, բիոքիմիայի, անատոմիայի, բարձր ներվային գործունեության, անասնաբուծության վերաբերյալ։

Այս հանգամանքներն ավելի էին սահմանափակում ուսանողների կողմից գիտական նյութի յուրացումը։

Այսպիսով, հիշյալ սեսիայի որոշումները ակտուալ էին և ժամանակին։

1950 թվականին, այսինքն՝ պավլովյան սեսիայից հետո, ամբիոնի ղեկավարությունը հանձնվում է ընկ. Ս. Ա. Հակոբյանին։ 1950/51 ուս. տարվա ընթացքում ամբիոնի հիմնական գործը լինում է իր աշխատանքների վերակառուցումը՝ պավլովյան սեսիայի որոշումների տեսանկյունով։ Նախ և առաջ ամբիոնն իր նիստերում վերանայում է ուսումնական ծրագրերը, որոնք հաստատվում են բիոլոգիական ֆակուլտետի գիտ. խորհրդի նիստում։

Վերանայված ծրագրերի մեջ առանձնապես ընդգծվում է Պավլովի և ռուս մյուս ֆիզիոլոգների դերը համաշխարհային գիտության զարգացման գործում։ Քննադատվում են բուրժուական իդեալիստ-ֆիզիոլոգների հակապավլովյան թեորիաները։ Առանձնապես ընդգծվում են օրգանիզմի ամբողջության, նյարդիզմի, թեորիայի և պրակտիկայի միասնության ու միջավայրի վճռող դերի մասին պավլովյան դրույթները։ Ծրագրերը հագեցված են մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսությամբ։ Կազմվում են ամբիոնի տարեկան աշխատանքների ծրագրեր։ Ուսանողներին ցուցադրվում են պավլովյան մեթոդիկայով օպերացիայի ենթարկված շներ։ Ուսանողները, առանձնապես ֆիզիոլոգիայի գծով մասնագիտացողներն ընդգրկվում են ամբիոնի աշխատանքներում։ Մասնագիտացող ուսանողների համար կազմակերպված են մի շարք մասնագիտական առարկաների դասախոսություններ՝ հեմատոլոգիա, ֆիզիոլոգիական խիրուրգիա, նյութափոխանակություն, վիտամինոլոգիա, ֆիզիոլոգիայի ռուս կլասիկների՝ Սեչենովի, Պավլովի, Վվեդենսկու, Ուխտոմսկու, Բիկովի աշխատությունների ուսումնասիրությունները, պաթոֆիզիոլոգիա, գյուղատնտեսական կենդանիների ֆիզիոլոգիա և այլն։ Պավլովյան սեսիայի որոշումների հիման վրա բիոլոգիական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանողների համար մտցվում է հատուկ դասընթաց՝ «Բարձր նյարդային գործունեության» մասին։ Ամբիոնին կից կազմակերպվում է Ուսանողական գիտական ընկերության բիոլոգիական բաժանմունքի խմբակ, որը սիստեմատիկորեն ունենում է իր նիստերը։ Գիտ. խմբակի նիստերում ուսանողները ելույթ են ունենում, պավլովյան սեսիայի պրոբլեմներին նվիրված զեկուցումներով (պավլովյան սեսիայի արդյունքների մասին, Պավլովի ուսմունքը քնի և երազի մասին, գանգուղեղի բիոէլեկտրական հոսանքները, պավլովյան ուսմունքը պայմանական ռեֆլեքսների մասին և այլ թեմաներ)։ Բացի ռեֆերատիվ թեմաներից, ուսանողները զեկուցում են նաև իրենց դիպլոմային աշխատանքների մասին։ Նրանք մեծ հետաքրքրությամբ և բարձր ակտիվությամբ են մասնակցում գիտական խմբակի աշխատանքներին։ Ուսանողական գիտական խմբակը լույս է ընծայում իր պատի թերթը։

Առանձին ուշադրություն է դարձվում ուսանողների ինքնուրույն աշխատանքներին։ Նրանց համար կազմակերպվում են կոնսուլտացիաներ և սեմինար պարապմունքներ։ Վերանայվում են նաև ամբիոնի գիտա-հետազոտական թեմաները։ Որպես հիմնա-

կան գիտական թեմա ընտրվում է մարսողական օրգանների և երիկամների ֆունկցիաները օրգանիզմի փոփոխված ռեակտիվականության պայմաններում և ներվային համակարգության դերը արյան փոխներարկման և արյունառման գործում։

1950/51 թթ. ընդունվում է մի ասպիրանտ (Լևոն Գյոզալյան), որը գործուղվում է Մոսկվա՝ Բարձրագույն ներվային գործունեության ինստիտուտ և որտեղ այժմ աշխատում է իր դիսերտացիայի վրա՝ ՀՍՍՌ-ի Գիտ. ակադեմիայի իսկական անդամ, պրոֆ. Է. Է. Հասրաթյանի ղեկավարությամբ։

1951/52 թթ. ամբիոնին կից ընդունվում են ևս երկու ասպիրանտ՝ Ռաֆիկ Բուբուշյանը և Մարուսյա Ալահվերդյանը (վերջինս արտադրությունից չկտրված)։

Ամբիոնի աշխատակիցները գրել և համալսարանի գիտական ժողովածուում, ինչպես նաև Հայաստանի և Միության տարբեր ժուռնալներում լույս են ընծայել ավելի քան 100 աշխատություն։

Աշխատությունների զգալի մասը կատարվել է պավլովյան սեսիայից հետո։ Համալսարանի ժողովածուներում տպագրվել են նաև մի շարք ուսանողների կողմից կատարված լավագույն դիպլոմային աշխատանքները (Ռ. Բուբուշյան, Տ. Հարությունյան, Ռ. Հյուսյան և այլն)։

Ամբիոնի աշխատակիցներին վերջին երկու տարում հաջողվել է ստանալ մի շարք արժեքավոր գիտական տվյալներ, որոնք խոսում են հօգուտ այն բանի, որ՝

1. Պավլովյան ուսմունքը պայմանական ռեֆլեքսների և երկու սիգնալային սիստեմների մասին՝ կարող է ունենալ լայն կիրառում դոնորական պրակտիկայում։

2. Երկրորդային դոնորների մեջ բազմաթիվ անգամ արյունառման հետևանքով առաջանում է պայմանական ռեֆլեքս՝ ժամանակի և իրակացության նկատմամբ։

3. Խոսքային ներշնչման միջոցով կարելի է փոփոխել սիրտանոթային սիստեմի ֆունկցիան և արյան քիմիական ու մորֆոլոգիական բաղադրությունը երկրորդային դոնորների մեջ՝ կապված արյունառման հետ։

4. Առաջին անգամ մեր ամբիոնում ցույց է տրվել, որ պայմանական ռեֆլեկտոր ճանապարհով հնարավոր է ճագարների և շների մեջ զարգացնել հետերոհեմոտրանսֆուզիոն շոկային վիճակը։

5. Ապացուցված է, որ խիստ չհավասարակշռված և թույլ-

ներվային տիպերին պատկանող շների մեջ շոկային վիճակը ավելի հեշտ է զարգանում, քան հավասարակշռված տիպերի մեջ։

6. Կուտակված են փաստեր հօգուտ հետերոտրանսֆուզիոն շոկի պարաբիոտիկ մեխանիզմի։

7. Անտիպարաբիոտիկ նյութերի օգտագործման միջոցով հնարավոր է կենդանուն հանել շոկային վիճակից, ինչպես նաև վերականգնել կենսական պրոցեսները ուժեղ արյունահոսությունից հետո։

8. Առաջարկված է նոր՝ արյանը փոխարինող և հակաշոկային հեղուկ։

9. Մշակված է հանքային ջրերի նստվածքները կանխելու նոր մեթոդ։

Ամբիոնի աշխատակիցները զգալի աշխատանք են կատարել նաև պավլովյան սեսիայի որոշումների և մասնավորապես պավլովյան ֆիզիոլոգիայի մասսայականացման ասպարեզում ինչպես համալսարանի ներսում, այնպես էլ նրանից դուրս՝ հասարակության լայն խավերի մեջ. վերջին դեպքում օգտագործվել են ագիտացիայի տարբեր ձևեր, ելույթներ ռադիոյի միջոցով, հոդվածներ ռեսպուբլիկական թերթերում, զեկուցումներ և զրույցներ գիտահետազոտական ինստիտուտներում և բանվորների, կոլտնտեսությունների ու ծառայողների համար։ Դասախոսություններ են կարդացվել հետևյալ թեմաներով՝ «Պավլովյան ուսմունքի հետագա զարգացումը», «Պավլովյան ուսմունքը արտաքին և ներքին միջավայրի միասնության մասին», «Պավլովյան ուսմունքը երկու սիգնալային սիստեմների մասին», «Պավլովյան ուսմունքը, որպես ստեղծագործական դարվինիզմի օրգանական բաղադրիչ մասը», «Պավլովյան ուսմունքի նշանակությունը մանկավարժության համար», «Պավլովյան ուսմունքը և մատերիալիստական փիլիսոփայությունը» և այլն։

Երևան քաղաքի և մոտակա շրջանների մի շարք դպրոցներից սիստեմատիկորեն էքսկուրսիաներ են գալիս մեզ մոտ՝ ամբիոնում կատարվող աշխատանքներին ծանոթանալու նպատակով, որոնց մեջ ընդգրկված աշակերտների թիվն այժմ հազարի է հասնում։ Աշակերտներին ցուցադրվում են պավլովյան մեթոդով օպերացիայի ենթարկված ֆիստուլային շներ, ինչպես նաև պայմանական ռեֆլեքսներ։

Որպես ձեռնարկ, ուսանողների համար թարգմանվել և հրա-

տարակվել է Պավլովի «Լեկցիաներ ֆիզիոլոգիայից 1912—1913 թթ.» գիրքը։

Ամբիոնը դեկանատի և ռեկտորատի աջակցությամբ ձեռք է բերել մի շարք նորագույն ապարատներ (օսցիլլոգրաֆ և այլն), ստեղծել է վիվարիում և պայմաններ՝ փորձի ենթակա կենդանիներին խնամելու համար։

Չնայած այս համեստ հաջողություններին՝ մեր ամբիոնը դեռ ունի մի շարք թերություններ, գլխավորապես պավլովյան գաղափարների հետագա զարգացման ուղղությամբ. մեր գիտական աշխատանքները լուրջ թափ չեն ստացել և այժմյան տեմպերն էլ չեն կարող բավարարել մեր առաջ դրված այսօրվա խնդիրներն ու նրանցից բխող հարաճուն պահանջները։

Ֆիզիոլոգիայի ամբիոնի դասախոսների խնդիրն է՝ սովորեցնել ուսանողությանը՝ ճիշտ ըմբռնել գիտական փաստերը, վերլուծել փորձերը և թափանցել նրանց գաղտնիքների մեջ, համառորեն փնտրել ու ճանաչել այդ փաստերը ղեկավարող օրինաչափությունները՝ օգտվելով պավլովյան հետազոտական մեթոդից. Հիշելով նրա կտակը երիտասարդությանը՝ «վարժեցրե՛ք ձեզ զսպվածության և համբերության, սովորեցե՛ք սև աշխատանք կատարել գիտության մեջ։ Ուսումնասիրե՛ք, համադրեցե՛ք, փաստե՛ր կուտակեցե՛ք... սակայն ուսումնասիրելով, փորձեր անելով, դիտելով՝ աշխատեցե՛ք փաստերի մակերեսի վրա չմնալ։ Փաստերի արխիվարիուս մի՛ դառնաք։ Ջանացե՛ք թափանցել նրանց ծագման գաղտնիքի մեջ, համառորե՛ն փնտրեցեք նրանց ղեկավարող օրենքները»։

Անհրաժեշտ է է՛լ ավելի բարձրացնել ֆիզիոլոգիայի դասավանդման գաղափարական մակարդակը, քանի որ պավլովյան ուսմունքը կոչված է օժանդակելու ուսանողների մեջ մատերիալիստական աշխարհայացքի ձևավորման գործին։

Միայն լուրջ քննադատության և ինքնաքննադատության միջոցով հնարավոր կլինի մինչև վերջը կիրառել պավլովյան սեսիայի որոշումները։

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն

С. А. АКОПЯН

КРАТКАЯ ИСТОРИЯ КАФЕДРЫ ФИЗИОЛОГИИ ЧЕЛОВЕКА И ЖИВОТНЫХ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМ. В. М. МОЛОТОВА

РЕЗЮМЕ

В статье автор кратко излагает этапы научно-исследовательской и педагогической деятельности кафедры с момента ее основания до наших дней, подчеркивая большую роль кафедры в подготовке кадров физиологов для высших школ и научно-исследовательских учреждений Армении.

Отмечается роль русских прогрессивных ученых-физиологов, в частности И. П. Павлова и Н. Е. Введенского, в формировании материалистического взгляда у физиологов нашей республики.

Автор особо останавливается на деятельности кафедры после объединенной сессии АН СССР и АМН СССР, посвященной проблемам физиологического учения акад. И. П. Павлова.

Кафедра физиологии человека и животных.

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
40 1953

С. А. АКОПЯН, А. Г. АРУТЮНЯН, С. Г. АВЕТЯН

ВЛИЯНИЕ МИНЕРАЛЬНОЙ ВОДЫ „ДИЛИЖАН" НА ДЕЯТЕЛЬНОСТЬ ПОЧЕК ПРИ РАЗЛИЧНЫХ ФУНКЦИОНАЛЬНЫХ СОСТОЯНИЯХ ЦЕНТРАЛЬНОЙ НЕРВНОЙ СИСТЕМЫ

И. П. Павловым и его учениками И. В. Завадским, П. М. Никифоровским, в дальнейшем М. К. Петровой и др. подробно было изучено влияние корковых фармакологических препаратов на условные рефлексы.

Никифоровский установил, что кофеин и бромиды по характеру действия на основные корковые процессы противоположны, т. е. кофеин повышает процессы возбуждения, а бром углубляет процессы торможения.

Весьма важным является правильная дозировка этих препаратов, на что особенно указывал И. П. Павлов. От неправильной дозировки они могут давать диаметрально-противоположный эффект. Экспериментальные и клинические исследования Павлова и его школы по изучению брома и кофеина дали теоретическую предпосылку для широкого применения этих препаратов в терапии. Нами кофеин и бром применялись с целью изменения функционального состояния ц.н.с.

Для изучения влияния дилижанской минеральной воды на диурез при различных функциональных состояниях ц.н.с., а также с целью сравнения действия брома и кофеина с действием эфиро-хлороформного наркоза и фенамина, мы предприняли настоящие исследования.

Опыты ставились на 3 собаках: Тузик, Альма и Пальма с 9 ч. утра. За 20 м. до опыта предварительно открывались фистульные трубки собак. В 8 ч. собакам давалось пить 200 мл водопроводной воды с целью поддержания водного баланса организма. Количество выделившейся мочи измерялось через каждые 20 м. в течение 3 часов. В некоторых опытах для установления латентного периода при тех или иных манипуляциях, в течение первой двадцатиминутки количество выделившейся мочи измерялось через каждые 2 м. Исследуемая вода вводилась через фистульную трубку в желудок в количестве 400 мл при темп. 25°. Минеральная вода предварительно дегазировалась. Кофеин вводился подкожно собакам Тузик и Альма в количестве 0,4 г в 10% растворе и 0,3 г Пальме. Бром вводился в желудок в количестве 3 г. Производились также анализы мочи на определение количественного изменения креатинина и хлоридов. Последние определялись в 3 порциях мочи: в начале опыта, на высоте интенсивного мочеотделения после водной нагрузки и в конце третьего часа опыта, когда диурез достигал исходной величины. Между различными вариантами опыта собакам давался отдых от 3 до 5 дней.

1. ОПЫТЫ ПРИ НОРМАЛЬНОМ ФУНКЦИОНАЛЬНОМ СОСТОЯНИИ Ц. Н. С.

(Таблицы и кривые см. в приложении)

Диурез в норме без водной нагрузки при нормальном функциональном состоянии ц.н.с. у трех подопытных собак составлял: у Тузик за 20 мин. 4,3 мл, у Альмы — 3,0 мл и у Пальмы — 4,0 мл.

Диурез при нагрузке ереванской водопроводной водой, при нормальном функциональном состоянии ц.н.с. за 3 ч. у Тузик составлял 254,3 мл, т. е. 63,5% введенной воды, у Альмы — 224,2 мл, т. е. 56% введенной воды, и у Пальмы — 240 мл, т. е. 60% введенной воды. Диурез у всех собак достигал максимума в конце первого часа и затем начинал падать, одна-

но продолжал держаться все еще на сравнительно высоком уровне в течение второго часа. В конце третьего часа почти доходил до исходного уровня.

При нагрузке дилижанской минеральной водой при нормальном функциональном состоянии ц.н.с. количество выделившейся мочи за 3 ч. у Тузик — 215 мл, т. е. 53,7% введенной жидкости, у Альмы — 145 мл, т. е. 36,2% введенной жидкости, и у Пальмы — 252 мл, т. е. 63% введенной жидкости, что составляет у Тузика на 9,8%, у Альмы на 19,8% меньше, чем количество выделившейся мочи при нагрузке ереванской водопроводной водой при том же состоянии ц.н.с.

Как показывают опыты, дилижанская бутылочная дегазированная мин. вода по сравнению с ереванской водопроводной водой дает более низкий диурез у двух собак (так было и в предыдущей серии опытов). К подобному выводу пришел и Л. Матинян в своих исследованиях. Только Пальма дала отклонение от этой закономерности: от дилижанской воды диурез был на 3% больше, чем от ереванской воды. В сравнении с ереванской водой разница наблюдается не только в количестве выделившейся мочи, но и в характере мочеотделения: Со второго часа диурез при нагрузке дилижанской водой круто спускается и в конце третьего часа полностью возвращается к норме. Мы склонны это различие объяснить степенью минерализации исследуемых вод. Однако в немногочисленных опытах с газированной минеральной водой диурез бывал довольно высоким, что, повидимому, объясняется наличием в воде газа, являющегося дополнительным раздражающим фактором.

II. ОПЫТЫ С ВОЗБУЖДЕНИЕМ Ц.Н.С.

(Таблицы и кривые см. в приложении)

При нагрузке ереванской водопроводной водой и при возбужденном состоянии ц.н.с. количество выделившейся мочи составляло за 3 ч. у Тузик — 305,7 мл, т. е. 76,4% введенной жидкости, у Альмы — 301 мл, т. е. 75,2% введенной жидкости, и у Пальмы — 381,8 мл, т. е. 95,4% введенной жидкости. Прирост в сравнении с мочеотделением при нормальном функциональном состоянии ц.н.с. при нагрузке той же водой у Тузик составляет 12,9, у Альмы 18,8 и у Пальмы — 35,4%.

По сравнению с данными, полученными при нормальном состоянии ц.н.с, здесь мы наблюдаем резкое повышение диуреза, что объясняется тем, что кофеин, возбуждая ц.н.с, повышает уровень работы внутренних органов (почек), в результате получается усиление мочеотделения. Возбуждающее действие кофеина особенно наглядно проявляется у Пальмы, у которой диурез даже составлял 412 мл, т. е. на 12 мл больше введенной воды.

Аналогичное явление мы наблюдали в наших опытах на других собаках с фенамином.

При нагрузке дилижанской минеральной водой при возбужденном состоянии ц.н.с. количество выделившейся мочи за 3 часа составляло у Тузик 304,5 мл, т. е. 76,1% введенной жидкости, у Альмы — 246,7 мл, т. е. 61,6% введенной жидкости, и Пальмы — 170,8 мл — 42,5%, т. е. у Тузик на 22,4, Альмы на 25,4% больше, чем количество выделившейся мочи при нагрузке той же водой при нормальном функциональном состоянии. Как видно из опытов, кофеин, при нагрузке дилижанской минеральной водой, возбуждая ц.н.с, усиливает мочеотделение. Резкое отклонение от общей закономерности наблюдается у собаки Пальма, у которой диурез на 20,5% ниже нормы. Чем можно объяснить такое отклонение? Наши длительные наблюдения дают нам основание объяснить это характером нервной деятельности этой собаки. Весьма подвижная, неспокойная во время опытов с нормальным функц. сост. ц. н. с., она особенно делалась реактивной при кофеинизировании, грызла лямки, рвалась из станка. Учитывая все это, доза кофеина была уменьшена по сравнению с дозой двух других собак.

III. ОПЫТЫ С ТОРМОЖЕНИЕМ Ц.Н.С.

(Таблицы и кривые см. в приложении)

При нагрузке ереванской водопроводной водой при торможении ц.н.с. количество выделившейся мочи за 3 ч. опыта составляло у Тузик 121,6 мл, т. е. 30,4% введенной жидкости, у Альмы — 155,5 мл, т. е. 38,9% введенной жидкости, и у Пальмы — 179 мл, т. е. 44,7% введенной жидкости, что у Тузик

составило на 33,1, у Альмы на 17,1 и у Пальмы на 15,3% меньше, чем количество выделившейся мочи при нагрузке той же водой при нормальном функциональном состоянии ц.н.с.

Эти опыты говорят за то, что бром, тормозя ц.н.с., понижал мочеотделение. Характер мочеотделения у Тузик и у Альмы идентичен: за первый час происходит нарастание диуреза, а с четвертой двадцатиминутки — убывание. У Пальмы же убывание начинается раньше (с третьей двадцатиминутки). Таким образом, Пальма в силу характера своей нервной деятельности и здесь составила исключение.

При нагрузке дилижанской минеральной водой при торможенном состоянии ц.н.с. количество выделившейся мочи составило у Тузик 99 мл, т. е. 24,7% введенной жидкости, у Альмы 37,6 мл, т. е. 9,4%, и у Пальмы 74,3 мл, т. е. 18,5% введенной жидкости, или у Тузик на 29,0%, у Альмы на 26,8% и у Пальмы на 44,5% меньше, чем количество выделившейся мочи при нагрузке той же водой при нормальном функциональном состоянии ц.н.с. Как видно из приведенных данных, количество выделившейся мочи при торможении ц.н.с, в некоторой степени зависит от качества применяемой воды.

Дилижанская вода в сравнении с ереванской водопроводной водой дает меньший прирост при возбуждении и резкое падение диуреза при торможении ц.н.с. При сопоставлении данных, полученных в этой серии опытов, с данными предыдущей серии мы приходим к выводу, что в условиях наших опытов характер действия кофеина аналогичен действию фенамина, а действие брома — действию эфиро-хлороформного ингаляционного наркоза.

РЕЗУЛЬТАТЫ АНАЛИЗОВ МОЧИ

Нагрузка ереванской водопроводной и дилижанской минеральной водами при нормальном функциональном состоянии ц.н.с. в кульминационной точке диуреза вызывает нарастание общего количества креатинина и абсолютного количества хлоридов, а их концентрация заметно падает в единице объема мочи.

При нагрузке ереванской водопроводной водой с возбуж-

дением ц.н.с. наряду с усилением диуреза быстро нарастают также общее количество креатинина и абсолютное количество хлоридов. Еще больше падает их количество в единице объема мочи, в сравнении с нормальным состоянием ц.н.с. при той же нагрузке. При введении же дилижанской воды количество креатинина нарастает с той же закономерностью, а абсолютное количество хлоридов убывает.

При нагрузке ереванской водопроводной водой, на фоне торможения ц.н.с. с падением диуреза уменьшается общее количество хлоридов.

При нагрузке дилижанской минеральной водой, на фоне торможения ц.н.с., замечается уменьшение общего количества креатинина и абсолютного количества хлоридов в сравнении с нормальным функциональным состоянием при той же нагрузке, а в сравнении с данными нагрузки ереванской водой наравне с падением диуреза падает общее и абсолютное количество креатинина и хлоридов.

Как уже было сказано выше, для выяснения роли коры головного мозга в деятельности почек при нагрузке дилижанской минеральной водой была проведена серия опытов по выработке условного рефлекса.

После шестикратного сочетания ударов метронома (120) с определенной обстановкой и процедурой введения кофеина удалось на двух собаках получить условно-рефлекторные сдвиги в мочеотделительной деятельности почек на спонтанный диурез, а также при нагрузке ереванской водопроводной и дилижанской минеральной водами. Эти сдвиги по своему характеру аналогичны сдвигам, происходящим при введении кофеина. Однако степень изменения выражена несколько слабее.

ЗАКЛЮЧЕНИЕ

Дилижанская минеральная вода в сравнении с ереванской водопроводной водой обладает меньшим диуретическим свойством, в силу своей большей минерализации.

Кофеин, введенный животным, возбуждает ц.н.с., что проявляется в усилении функции почек, однако это усиление менее

выражено при введении дилижанской минеральной воды и сильнее от ереванской водопроводной.

Бромистый натрий, введенный животным, тормозя ц.н.с., угнетает функцию почек, что резче бывает выражено при введении дилижанской минеральной воды, чем при ереванской.

При возбуждении ц.н.с. без водной нагрузки с нарастанием спонтанного диуреза увеличиваются в моче общее количество креатинина и абсолютное количество хлоридов. В единице объема мочи их концентрация падает. При торможении ц.н.с. уменьшается общее количество креатинина, увеличивается абсолютное количество хлоридов. В единице объема концентрация креатинина падает, а хлоридов — повышается.

При нагрузке ереванской водопроводной и дилижанской водами, при нормальном функциональном состоянии ц.н.с., в кульминационной точке диуреза нарастает общее количество хлоридов. Их коцентрация падает в единице объема мочи.

При нагрузке ереванской водопроводной водой с возбуждением ц.н.с. наряду с еще большим нарастанием диуреза нарастает общее количество креатинина и абсолютное количество хлоридов больше, чем при норме.

При нагрузке дилижанской водой количество креатинина нарастает с той же закономерностью, а абсолютное количество хлоридов убывает.

При нагрузке ереванской водопроводной водой при торможении ц.н.с. с падением диуреза уменьшается общее количество креатинина и абсолютное количество хлоридов.

Условно-рефлекторное возбуждение ц.н.с. дает аналогичные сдвиги в обмене креатинина и хлоридов, а также диуреза.

Кафедра физиологии человека и животных

Таблица 1

Характер мочеотделения у собаки Тузик при нормальной и измененной реактивности центральной нервной системы при нагрузке водой

Порции мочи	Ереванская водопроводная вода 400 мл				Дилижанская минеральная вода 400 мл		
	время в мин.	диурез при норм реактив. ц.н с. в мл	диурез при возбужд. ц.н.с. в мл	диурез при угнет. ц.н с. в мл	диурез при норм. реактив ц.н.с. в мл	диурез при возбужд. ц.н.с в мл	диурез при угнет. ц.н.с. в мл
		Исходный фон			Исходный фон		
	20	3,3	3	6	5	3	3 4
I	20	8	7,7	24	11,5	19,6	11
II	20	38,4	41,7	30	38,1	67	15,3
III	20	47,6	79,7	43	51,1	88,5	15,8
IV	20	38,4	79,2	39	41	67,5	10
V	20	37,5	50,2	32	23	31	9,9
VI	20	30,8	30,2	21,5	16	12,7	9,5
VII	20	23	9,5	19,5	11	9,5	8
VIII	20	16	5,5	17,5	7,8	4,5	7
XI	20	14,6	2	12	8	4,2	5,5
Всего мочи в мл за 3 ч.		254,3	305,7	121,6	215	304,5	99
В % к введ. жидкости		63,5	76,4	30,4	53,7	76,1	24,7
% к норме		100	120,8	47,8	100	141,6	46

Таблица 2

Характер мочеотделения у собаки Альма при нормальной и измененной реактивности центральной нервной системы при нагрузке водой

Порции мочи	Ереванская водопроводная вода 400 мл				Дилижанская минеральная вода 400 мл		
	время в мин.	диурез при норм. реакт. ц.н.с. в мл	диурез при возбужд. ц.н.с. в мл	диурез при угнет. ц н.с. в мл	диурез при норм. реакт. ц.н.с. в мл	диурез при возбужд. ц.н с. в мл	диурез при угнет. ц.н.с, в мл
		Исходный фон			Исходный фон		
	20	3,4	3	4	2,6	2,8	2
I	20	12,3	30,2	9	9	22,3	3,5
II	20	49,9	76,3	21	30,2	66,2	6,2
III	20	58,4	89,3	40	44,7	7,4	6,1
IV	20	38,5	45	24	26,7	41	4,8
V	20	26,5	24,1	21	14	18,6	4,5
VI	20	15	13	11	9,3	10,3	3,6
VII	20	11,9	10	10,5	4,3	5	3,3
VIII	20	6	7,1	10	4,2	5,1	3,1
IX	20	4,8	6	9	2,5	3,7	2,5
Всего мочи в мл за 3 ч.		224,2	301	155	145	246,7	37,6
В % к введ. жидкости		56	75,1	38,9	36,2	61,6	9,4
% к норме		100	134,4	31	100	170	25,5

Таблица 3

Характер мочеотделения у собаки Пальма при нормальной и измененной реактивности центральной нервной системы при нагрузке водой

Порции мочи	Ереванская водопроводная вода 400 мл				Дилижанская минеральная вода 400 мл		
	время в мин.	диурез при норм. реакт. ц.н.с. в мл	диурез при возбужд. ц.н.с. в мл	диурез при угнет. ц.н.с. в мл	диурез при норм. реакт. ц.н.с. в мл	диурез при возбужд. ц.н.с. в мл	диурез при угнет. ц.н.с. в мл
		Исходный фон			Исходный фон		
	20	3,5	4	3,4	5,7	2,7	2,6
I	20	7,3	36,4	22,2	26,2	10,3	11
II	20	61	84,2	46	73,5	44	17
III	20	58	108,8	33,2	74,3	50,7	13
IV	20	40,3	66,6	26	28,3	25,3	9,7
V	20	28,3	35,2	20,2	17,5	16	6,8
VI	20	17,5	23,2	11,9	14,1	11,5	3,1
VII	20	13	13,2	5,4	9,1	6	3,1
VIII	20	9	8	8,2	5,7	4	5,6
IX	20	6	6,2	6,2	3,8	3	5
Всего мочи в мл за 3 ч.		240,4	381,8	179,1	252,5	170,8	74,3
В % к введенной жидкости		60	95,2	44,7	63	42,5	18,5
% к норме		—	158,9	74,6	100	67,7	30



Нагрузка ереванской водопроводной водой.



Нагрузка дилижанской минеральной водой.

——— диурез при нормальном функциональном состоянии ц.н.с.
– – – диурез при возбужденном функциональном состоянии ц.н.с.
–.–.– диурез при угнетенном функциональном состоянии ц.н.с.



Нагрузка ереванской водопроводной водой.



Нагрузка дилижанской минеральной водой.

——— диурез при нормальном функциональном состоянии ц.н.с.
– – – диурез при возбужденном функциональном состоянии ц.н.с.
–·–·– диурез при угнетенном функциональном состоянии ц.н.с.



Нагрузка ереванской водопроводной водой.



Нагрузка дилижанской минеральной водой.

——— диурез при нормальном функциональном состоянии ц.н.с.
– — – диурез при возбужденном функциональном состоянии ц.н.с.
–.–.– диурез при угнетенном функциональном состоянии ц.н.с.

ЛИТЕРАТУРА

1. Аничков С. В.—Фармакология условных рефлексов. Физиологический журнал СССР им. И. М. Сеченова. Изд. АН СССР, 1952, т. XXXVIII, № 1.
2. Андгуладзе В. А.—О действии боржомских минеральных вод. Изд. АМН СССР, Москва, 1950.
3. Акопян С. А., Арутюнян А. Г., Аветова С. Г.—Влияние стабилизированной дилижанской минеральной воды на диурез при различных функциональных состояниях центральной нервной системы.
4. Бунятян Г. Х., Кечек Ю. А. и Матинян Г. В.—Влияние безусловного и условного болевых раздражений на некоторые стороны обмена аскорбиновой кислоты в животном организме. Физиологический журнал им. И. М. Сеченова, № 2, 1951.
5. Косяков К. С.—О взаимности между состояниями нервной системы и колебаниями содержания хлоридов в крови. Физ. журнал СССР им. И. М. Сеченова, № 1, 1951.
6. Матинян Л. А.—Влияние минеральных вод Армении на функцию почек. Диссертация, Ереван, 1952.
7. Матинян Л. А.—Влияние минеральной воды „Джермук" на функцию почек. Всесоюзный съезд биологов, фармакологов и биохимиков, в. 1, 1952.
8. Павлов И. П.—Павловские среды, т. III, 1949.
9. Павловская А. А.—Влияние функционального состояния коры головного мозга на деятельность почек у животных с различными типами высшей нервной деятельности. Бюлл. экспер. биологии и медицины, № 6, изд. АМН СССР, 1951.
10. Разенкова Л. О.—Влияние водной и солевой нагрузок на функцию почек у щенков, котят и крольчат. Физ. журнал СССР им. Сеченова, № 2, 1951.
11. Разенкова Л. О.—Влияние водной и солевой нагрузок на функцию почек. Физиологич. журнал СССР им. Сеченова, № 2, 1951.
12. Синицин—О креатинине и креатине в крови и моче при профессиональных заболеваниях. Бюлл. эксп. биологии и медицины, № 5, изд. АМН СССР, 1950.
13. Самойлова З. Т.—Влияние фармакологических и токсикологических веществ на условно-рефлекторную деятельность. Журн. высшей нервной деятельности, т. 2, вып. 2, 1952.

14. Усиевич М. А.—Учение Павлова о роли и значении бромистых солей в регуляции высшей нервной деятельности. Журн. высшей нервной деятельности, т. 1, вып. 6, 1952.
15. Чукин К. А.—Сложно-рефлекторный механизм регуляции водного обмена и мочеотделения. Журнал „Опыт изучения регуляций физиологических функций“, под ред. К. М. Быкова 1949.

Ս. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ, Ա. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Ս. Գ. ԱՎԵՏՅԱՆ

«ԴԻԼԻՋԱՆ» ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻԿԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՆԵՐՎԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ՏԱՐԲԵՐ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս աշխատությունը նախորդ աշխատության շարունակությունն է։ Տվյալ հետազոտության նպատակն է՝ կենտրոնական ներվային համակարգի տարբեր ֆունկցիոնալ վիճակներում ուսումնասիրել «Դիլիջան» հանքային ջրի ազդեցությունը երիկամների գործունեության վրա, ինչպես նաև համեմատել ֆենամինի և եթեր-քլորոֆորմային նարկոզի ազդեցությունը բրոմի և կոֆեինի ազդեցության հետ։ Փորձերը կատարվել են երեք ենթափորձային շների վրա, որոնք ունեցել են միզածորանների ֆիստուլա ըստ Պավլով-Օրբելու, մեզը հավաքելու և ստամոքսի ֆիստուլա ըստ Բասովի՝ հետազոտվող հեղուկը ներարկելու համար։ Ստամոքս է ներարկվել 400 մլ «Դիլիջան» հանքային ջուր 25° ջերմությամբ։ Համեմատելու համար փորձեր են կատարվել նաև Երևանի ջրմուղային ջրով։ Արտադրված մեզի քանակը չափվել է յուրաքանչյուր 20 րոպեն մեկ անգամ՝ երեք ժամ տևողությամբ։ Որոշվել է կրեատինինի և քլորիդների քանակը։ Ստացված տվյալները թույլ են տալիս հանգելու հետևյալ եզրակացությունների։

Մեր փորձերի պայմաններում կոֆեինի ազդեցությունը համանիշ է ֆենամինի ազդեցությանը, իսկ բրոմի ազդեցությունը՝ եթեր-քլորոֆորմային ինգալյացիոն նարկոզի ազդեցությանը։

«Դիլիջան» հանքային ջուրը, համեմատած Երևանի ջրմուղային ջրի հետ, ունի ավելի ցածր դիուրետիկ հատկություն, հավանաբար ավելի մեծ հանքայնության պատճառով։

Կոֆեին ներարկելուց կենդանու մոտ առաջանում է կենտրոնական ներվային համակարգության գրգռված վիճակ, որի ժամանակ ուժեղանում է երիկամների ֆունկցիան։ Դիուրեզն ավելի թույլ է արտահայտվում «Դիլիջան» հանքային ջուր տալու դեպքում, քան Երևանի ջրմուղային ջրի դեպքում։

Բրոմի ներարկումից առաջանում է կենդանու կենտրոնական

ներվային համակարգության արգելակված վիճակ, որի ժամանակ նվազում է երիկամների ֆունկցիան, որն ավելի սուր է արտահայտվում «Դիլիջան» հանքային ջուր տալու դեպքում։

Առանց ջրի բեռնվածության, կենտրոնական ներվային համակարգության գրգռման դեպքում, դիուրեզի բարձրացմամբ շատանում է նաև կրեատինինի ընդհանուր և քլորիդների բացարձակ քանակը, իսկ մեզի մեկ միավոր ծավալում կրեատինինի կոնցենտրացիան իջնում է, իսկ քլորիդներինը՝ բարձրանում։

Կենտրոնական ներվային համակարգության նորմալ ֆունկցիոնալ վիճակում, Երևանի ջրմուղային ջրի և «Դիլիջան» հանքային ջրի բեռնվածության դեպքում դիուրեզի կուլմինացիոն կետում կրեատինինի և քլորիդների քանակը բարձրանում է, իսկ մեզի մեկ միավոր ծավալում նրանց կոնցենտրացիան ընկնում է։

Կենտրոնական ներվային համակարգության գրգռված վիճակում, Երևանի ջրմուղային ջրի բեռնվածության դեպքում, նկատվում է դիուրեզի խիստ բարձրացում, որի հետ միասին շատանում է նաև կրեատինինի ընդհանուր և քլորիդների բացարձակ քանակը։ «Դիլիջան» հանքային ջրի բեռնվածության դեպքում, կրեատինինի քանակը բարձրանում է նույն օրինաչափությամբ, իսկ քլորիդների բացարձակ քանակը իջնում է։

Կենտրոնական ներվային սիստեմի արգելակված վիճակում, Երևանի ջրմուղային ջրի բեռնվածության դեպքում դիուրեզի իջեցման հետ միասին իջնում է նաև կրեատինինի ընդհանուր քանակը և քլորիդների բացարձակ քանակը։

Վերոհիշյալ փոփոխությունները ստացվել են նաև պայմանական ռեֆլեկտոր ճանապարհով։

Մարդու և կենդանիների
ֆիզիոլոգիայի ամբիոն

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
40 1953

С. А. АКОПЯН, А. Г. АРУТЮНЯН, С. Г. АВЕТЯН

ВЛИЯНИЕ ИЗМЕНЕННОГО ФУНКЦИОНАЛЬНОГО СОСТОЯНИЯ ЦЕНТРАЛЬНОЙ НЕРВНОЙ СИСТЕМЫ НА ЭВАКУАТОРНО-ВСАСЫВАТЕЛЬНУЮ ДЕЯТЕЛЬНОСТЬ ПИЩЕВАРИТЕЛЬНОГО АППАРАТА

И. П. Павлов учил, что «только в свете ведущей роли нервной системы можно правильно понять механизм действия веществ, а следовательно, и правильно использовать его в качестве лекарства» (1894).

Несмотря на это гениальное высказывание Павлова, многие исследования, до павловской сессии, по изучению механизма действия минеральных вод, в том числе и минеральных вод Армении, страдают общим недостатком, выражающимся в локальном подходе к изучению действия минеральных вод на тот или иной орган. В этих исследованиях авторы не учитывают, что «все клетки организма находятся под регуляторным влиянием со стороны нервной системы вообще и со стороны коры больших полушарий в частности» (Быков, Курцин).

Довольно правильно подошел к этому вопросу В. А. Андгуладзе в своей монографии «О действии боржомских минеральных вод», где он пишет: «Прежде всего следует различать действие боржомских вод в условиях курортно-санаторной обстановки и их действие вне курорта, так как в условиях курортно-санаторной обстановки на организм больного действует весь комплекс курортно-санаторных факторов, как то:

санаторный режим, отдых, окружающий ландшафт, солнечная энергия, а также вера больного в могущественное действие курортного лечения».

Далее он пишет, что «курортные факторы оказывают свое благотворное действие на корковые связи, меняют ее функциональную настроенность и минеральные воды... при приеме внутрь осуществляют свое лечебное действие на уже предварительно измененную курортными факторами внутреннюю среду».

